



This project is funded by
the European Union



Chamber of
Commerce and
Industry of
Shirak



ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ
ԿՈԱԼԻՑԻԱ

Երևան 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	3
ՆԱԽԱԲԱՆ	4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ	6
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎՆԱՐԿ:	7
ՓՄՁ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ	7
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ	8
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ	10
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ	11
ԲԱԺԻՆ 1: ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ	12
1.1 ՓՄՁ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ` ԹՎԵՐԻ ԼԵԶՎՈՎ	13
1.2 ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ	18
ԲԱԺԻՆ 2: ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱԿՐՈ ՄԻՋԱՎԱՅՐ	23
2.1 ՓՄՁ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	24
2.2 ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒՄ	27
2.3 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ: ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	31
ԲԱԺԻՆ 3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԵԶՈ ԵՎ ՄԻԿՐՈ ՄԻՋԱՎԱՅՐ ...	34
3.1 ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ. ՍԿՍՆԱԿ ԲԻԶՆԵՍԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ	35
3.2 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ	40
3.3 ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓՄՁ ՈԼՈՐՏԻՆ: ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ	50
3.4 ՓՄՁ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԻՆՏԵԳՐՈՒՄ	55
3.6 ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՓՄՁ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	60
3.7 ԲՆԱԴԱՐՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ	65
3.8 ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ	69
3.9 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ	73
ԲԱԺԻՆ 4. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՌԱՋԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	75
4.1 ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ	76
4.2 ՓՄՁ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ 2019-2021ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՓՄՁ-ՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	83
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	90
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	97
ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՄՁ ՉԱՐԳԱՑՄԱՆ 2016-2018ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	98
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒՄ	106
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ (առցանց հարցումներ)	109



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացած արժեքի հարկ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԺ	Ազգային ժողով
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպության
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ Նահանգներ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԻԱ	Իրավաբանական անձ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԸԻ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս
ԿԸԻ	Կոռուպցիայի ընկալման ինդեքսի
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶԾ	Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀՀԴ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏՖ	Համաշխարհային տնտեսական ֆորում
ՆՄԿԶ	Նպաստավոր միջավայր կայուն ձեռնարկությունների համար
ՈԻՎԿ	Ունիվերսալ վարկային կազմակերպություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՍԶ	Սոցիալական ձեռնարկատիրություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԶՆՆ	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՓԲԱ	Փոքր Բիզնեսի Ակտ
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄԶ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

ՆԱԽԱԲԱՆ

Փոքր եվ միջին ձեռնարկատիրության ոլորտը նշանակալի դերակատարություն ունի Հայաստանում ՀՆԱ-ի ձևավորման, զբաղվածության և հարկային մուտքերի ապահովման, եկամուտների հավասար բաշխման հնարավորության ապահովման և աղքատության հաղթահարման համատեքստում՝ զբաղվածության հնարավորություն ընձեռելով երկրի աշխատուժի շուրջ 26%-ի համար: 2017 թվականի դրությամբ ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմում է շուրջ 28%: ՓՄՁ ոլորտի մրցունակության ամրապնդումը առանցքային նշանակություն ունի տնտեսության զարգացման, արտաքին գործոններից կախվածության նվազեցման և կայուն տնտեսական աճի ապահովման համար:

2012 թվականից սկսած Հայաստանը նախաձեռնել և իրականացրել է մի շարք բարեփոխումներ ուղղված ՓՄՁ ոլորտի զարգացմանը և աջակցությանը, որոնց թվում են կարգավորող օրենսդրության պարզեցումը, Էլեկտրոնային կառավարման համակարգի ընդլայնումը և կազմակերպությունների՝ «մեկ պատուհանի» սկզբունքով գրանցման մեխանիզմի ներդրումը, ձեռնարկատիրական կրթության և մշակույթի զարգացումը, գործարար միջավայրի բարելավումը և գործարարության աջակցման զարգացած ենթակառուցվածքների ապահովումը: Նշանակալի աշխատանքներ են իրականացվել նաև ՓՄՁ զարգացման քաղաքականության դաշտի ապահովման առումով: Իրականացված այս բարեփոխումների համատեքստում էր նաև 2015թ. հոկտեմբերին «ՀՀ փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության» ընդունումը ՀՀ կառավարության կողմից: Այս ռազմավարությունը սահմանում է փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման ռազմավարական նպատակները և գործողությունների հիմնական ուղղությունները: Ակնկալվում էր, որ այս միջնաժամկետ ռազմավարությունը պետք է ՀՀ կառավարության բարեփոխումների և նախաձեռնությունների համար դառնար առավել առարկայական ճանապարհային քարտեզ, որը հնարավորություն կտար առավել համակարգված իրականացնել ՓՄՁ զարգացմանն ուղղված միջոցառումները:

Ներկայումս կառավարությունը նախաձեռնել է ՓՄՁ զարգացման նոր 2019-2021թթ. ռազմավարության մշակումը, որին որպես աջակցող փաստաթուղթ անհրաժեշտ է համարվել իրականացնել ՓՄՁ ոլորտի ուսումնասիրություն՝ անդրադարձ կատարելով ՓՄՁ կարիքներին, բարեփոխումների հնարավոր ուղղություններին և մինչ այժմ գրանցված արդյունքներին: Այս նպատակով «Հայկական բիզնես կոալիցիան նախաձեռնել և իրականացրել է այսպիսի հետազոտության իրականացում՝ նպատակ ունենալով տրամադրել փաստագրական հիմք ՓՄՁ նոր ռազմավարության մշակման և հետագա բարեփոխումների իրականացման համար, ինչը կնպաստի ՓՄՁ ոլորտի կայունության ավելացմանը և գործունեության համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է հետազոտական մի քանի մեթոդների և տեղեկատվության մի քանի աղբյուրների համադրում (տրանզուլյացիա): Որպես հետազոտության մեթոդներ ընտրվել են **փաստաթղթային վերլուծության և վիճակագրական տվյալների ուսումնասիրության, փորձագիտական հարցազրույցների, ՓՄՁ ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցների և առցանց հարցումների մեթոդները**: Ընդհանուր առմամբ իրականացվել է 10-ից ավել ոլորտային փաստաթղթերի, այդ թվում իրականացված հետազոտությունների և վիճակագրական տվյալների ուսումնասիրություն: Կազմակերպվել են 8 փորձագիտական հարցազրույցներ ոլորտային մասնագետների հետ: Կիսաձևայինացված հարցաթերթի հիման վրա իրականացվող առցանց հարցումներին մասնակցել են 331 ՓՄՁ սուբյեկտներ: Իրականացվել են 10 խորին հարցազրույցներ ՓՄՁ ներկայացուցիչների հետ:



Հետազոտությունը նպատակ ունի ավելի շուտ ոչ թե ներկայացնել ՓՄՁ ոլորտը մակրոտնտեսական համատեքստում, այլ ՓՄՁ կարիքները, բարեփոխումների ուղղությունները և ակնկալիքները հենց ձեռնարկատերերի և ոլորտային փորձագետների տեսանկյունից: Իրականացված հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ինչպես ընթացիկ միջոցառումների կատարողականի ուսումնասիրման և ելակետային տվյալների բազա ծառայել հետագա ուսումնասիրությունների համար, այնպես էլ նպաստել կառավարության կողմից հետագա գործողությունների պլանավորման և որոշումների ընդունման համար: Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքները կօգտագործվեն ՓՄՁ քաղաքականության 2019-2021թթ. ռազմավարության մշակման առավել արդյունավետ գործընթացի կազմակերպման համար, և կարող են առավել առարկայական հիմք և տեղեկատվության աղբյուր ծառայել ՀՀ կառավարության բարեփոխումների և նախաձեռնությունների հետագա գործընթացների համար:



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ

Հետազոտության նպատակներ՝

- Ներկայացնել ՓՄՁ ոլորտը կարգավորող իրավակիրառ դաշտը և ՓՄՁ զարգացման նախապայման հանդիսացող գործարար միջավայրի համատեքստը:
- Ուսումնասիրել փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի կարիքները և հիմնական առաջնահերթությունները մակրո միջավայրում, մեզո միջավայրում և միկրո միջավայրում:
- Առաջարկություններ ներկայացնել ՓՄՁ նոր ռազմավարության մշակման համար:

ՓՄՁ ոլորտի ուսումնասիրության ոլորտները՝

ՓՄՁ գործունեության մակարդակներ	Ուսումնասիրության ոլորտներ
Մակրո միջավայր	- ՓՄՁ օրենսդրական դաշտ և պետական քաղաքականություն - Պետության ինստիտուցիոնալ կարողություններ - Հարկային օրենսդրություն և վարչարարություն - Գործարար միջավայր
Մեզո միջավայր կամ աջակցող ենթակառուցվածքներ	- Միջազգային շուկաներ և արտահանում - Ֆինանսական և ապահովագրական շուկաներ - Ֆիզիկական ենթակառուցվածքներ - Գործարար կապեր և բիզնես ասոցիացիաներ - Ձեռնարկատիրական կրթություն
Միկրո միջավայր կամ ՓՄՁ ներքին կարիքներ	- Ֆինանսական կարիքներ - Ձեռնարկատիրական կարողություններ և հմտություններ - Նորարական տեխնոլոգիաների ներդրման կարիքներ

Տեղեկատվության աղբյուրներ

Տվյալների հավաքագրման համար տեղեկատվության աղբյուրները ներառում են՝

- Ոլորտային փաստաթղթերը, իրականացված հետազոտությունները և վիճակագրական տվյալների շտեմարանները
- ՓՄՁ սուբյեկտները
- Ոլորտային անկախ փորձագետները, քաղաքականություն մշակողները և կիրառողները

Կիրառված մեթոդներ

Հետազոտության շրջանակներում կիրառվել են որակական և քանակական մեթոդներ՝

- Փաստաթղթային վերլուծություն
- փորձագիտական (էքսպերտային) հարցազրույցներ
- առցանց հարցումներ ՓՄՁ սուբյեկտների հետ՝ ներառելով 331 ՓՄՁ-ներ հանրապետության ամբողջ տարածքում (հարցմանը ներառված ՓՄՁ-ների մասին տեղեկատվությունը՝ Հավելված 3)
- խորին հարցազրույցներ ՓՄՁ սուբյեկտների հետ

Հետազոտության աշխարհագրություն

Հետազոտությունն իրականացվել է Հանրապետության ամբողջ տարածքում

Հետազոտության իրականացման ժամկետներ

Մեթոդաբանության մշակում և դաշտային աշխանքների նախապատրաստում՝ սեպտեմբեր 2018թ.

Դաշտային աշխատանքների իրականացում՝ սեպտեմբեր 2018 – նոյեմբեր 2018թ.

Տվյալներ վերլուծություն և հաշվետվության պատրաստում՝ նոյեմբեր 2018



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ: ՓՄՁ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցավ ոչ բռնի «Թավշյա» հեղափոխություն, որի ակնառու քաղաքական արդյունքներից էր գործադիր իշխանության փոփոխությունը և Ազգային ժողովի նոր ընտրությունների նշանակումը 2018 թվականի դեկտեմբերին: Հեղափոխության պատճառների թվում նախկին կառավարության գործունեությունից և իշխող կուսակցության հանդեպ առկա դժգոհությունն էր, որը նշանակալիորեն պայմանավորված էր երկրում շուրջ 30% հասնող աղքատության, գործազրկության բարձր մակարդակի, արմատացած կոռուպցիոն համակարգի, սոցիալական անարդարության, տնտեսական խմբերի միջև ռեսուրսների անհավասարաչափ բաշխման և այդ անհավասարության աճող խորացման, արտագաղթի բարձր տեմպերի հետ:

Մի շարք միջազգային ցուցանիշներով Հայաստանը նախկին իշխանությունների օրոք չի արձանագրել նշանակալի դրական արդյունքներ, իսկ նոր կառավարության գործունեությունից ենթադրվող փոփոխությունները դեռևս տեղ չեն գտել հաշվարկվող միջազգային համաթվերում և դասակարգման աղյուսակներում: Այսպես, օրինակ համաձայն «FreedomHouse»-ի «Ժողովրդավարության» ցուցանիշի Հայաստանը դասակարգված է որպես «կիսաավտորիտար» երկիր՝ արձանագրելով 5.43 միավոր հնարավոր 7-ից¹: Երկրի ազատության աստիճանը գնահատվել է որպես «մասնակի ազատ», մամուլի ազատությունը՝ «ոչ ազատ»: Ըստ կոռուպցիայի ընկալման ինդեքսի (ԿԸԻ)՝ իրավիճակը նույնպես շատ խնդրահարույց է եղել: Ըստ համաթվի Հայաստանը զբաղեցրել է 104-րդ տեղը աշխարհի 180 երկրների շարքում²:

Նախկին իշխանությունների օրոք Հայաստանի դատական համակարգը խիստ կախված էր իշխող վարչակարգից, իսկ դատական հաշվետվողականության մեխանիզմները եղել են շատ թույլ զարգացած: Կաշառակերությունը և քաղաքական ազդեցության լծակների կիրառությունը բնորոշ են եղել դատական համակարգին, իսկ դատարանները համարվել են երկրում ամենանվազ վստահություն վայելող ինստիտուտներից մեկը³: Հայաստանում իշխանության ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման մարմինների անկախության աստիճանի ավելացումը նույնպես խոցելի ոլորտներից մեկն է համարվում: Ունենալով խիստ սահմանափակ հնարավորություններ՝ ՏԻՄ-երը խիստ կախված են կենտրոնական իշխանությունից բաշխվող ֆինանսական միջոցներից:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների տեղի ունեցած իշխանության փոփոխությունից հետո Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը հայտարարվեց նոր կառավարության գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը: Գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից բարձրաձայնվում է նախկին իշխող կուսակցության կողմից շարունակաբար տրված «աղքատության խրախուսման» քաղաքականության բացասական կողմերը, որը փորձ է կատարվում փոխարինել «աշխատանքի խրախուսման» քաղաքականությամբ: Քաղաքական փոփոխությունների համատեքստում հայտարարվեց նաև երկրում մենաշնորհների վերացման, տեղական և օտարերկրյա ներդրողներին պաշտպանության ապահովման հանձնառության, տնտեսական դաշտի ազատականացման մասին, որոնք կարող են դրական ազդակներ լինել գործարար միջավայրի բարելավման և տնտեսական դաշտի ակտիվացման համար: Նշենք նաև, որ ի տարբերություն այլ երկրների, որտեղ քաղաքական կտրուկ փոփոխություններին և հեղափոխություններին հաջորդել են տնտեսական անկման ցուցանիշներ, Հայաստանում տնտեսական ցնցումների անկում տեղի չունեցան, ավելին, տնտեսական աճի ցուցանիշը 2018 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել էր շուրջ 9%⁴:

¹ որտեղ 1-ը նշանակում է՝ «առավելագույն ժողովրդավար», 7-ը՝ «ոչ ժողովրդավար»

² Տես ավելին՝ <https://www.transparency.org/research/cpi/overview>

³ Տես ավելին՝ <https://freedomhouse.org/report/>

⁴ Ազգային վիճակագրական կոմիտե, www.armstat.am



Այսպիսով, 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի «Թավշյա» հեղափոխությունը բնակչության և բիզնես սեկտորի շրջանում ձևավորվեց դրական սպասումներ, որոնք կապվում են նոր կառավարության որդեգրած կոռուպցիայի դեմ պայքարի, տնտեսական միջավայրի բարելավման, աղքատության հաղթահարման և այլ քաղաքական և տնտեսական փոփոխությունների իրականացման հանձնառության հետ:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Հայաստանն ունի արտաքին ցնցումների նկատմամբ խոցելի փոքր ներքին շուկա և անբարենպաստ աշխարհագրական դիրք, ուստի երկրի համար որպես քաղաքականության հիմնական առաջնահերթություն կարևորվում է տնտեսական մրցունակության բարձրացումը և արտահանման հաշվին տնտեսական աճի ապահովումը: Հայաստանի սահմանները փակ են մնում իր չորս հարևաններից երկուսի՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Տնտեսությունն ունի ՀՆԱ աճի դրական միտում, սակայն ընթացիկ հաշվեկշիռը բացասական է: 2017թ.-ին Հանրապետությունում Համախառն ներքին արդյունքը կազմել է 5 568 901 մլն. դրամ, որից գյուղատնտեսության ոլորտի մասնաբաժինը կազմել 831 881 մլն. դրամ: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ ծավալը կազմում է 1 869 072 դրամ⁵:

Նախքան 2008-2009թթ. ճգնաժամը Հայաստանն ապրել է տնտեսական հզոր աճ՝ 2002-2007թթ. արձանագրելով ՀՆԱ-ի 13.4% միջին տարեկան աճ՝ պայմանավորված կապիտալի ներհոսքով և դրամական փոխանցումներով: 2005թ.-ին ՀՆԱ աճը կազմել է 13.87%, 2007-ին՝ 13.75%, 2008-ին՝ 6.9%: Աճի այս նշանակալի տեմպերին հետևեց ՀՆԱ ամենազգալի անկումը 2009թ.-ին՝ կազմելով 14.15%: 2009 թվականից հետո ՀՆԱ-ն, թեև արձանագրել է աճ, սակայն առավել նվազ տեմպերով: 2012 թվականին 7.2% աճ ունենալուց հետո Հայաստանի տնտեսական աճը նվազեց մինչ 3.3%՝ 2013 թվականին, և 3.5%՝ 2014 թվականին: 2015 թվականին ՀՆԱ աճը նվազեց մինչ 2.3%՝ տարածաշրջանային առավել լայն տնտեսական անկման արդյունքում, որը ներառում էր Հայաստանի վրա առևտրի, դրամական փոխանցումների և ներդրումների հոսքի միջոցով: Գործազրկությունը երկրում կազմում է 17,8%:

Հայաստանի տնտեսությունն ամուր կապված է ռուսական շուկային, որը երկրորդ ամենախոշոր ուղղությունն է ԵՄ-ից հետո և ներկայացնում է հայաստանյան արտահանման ծավալների մեկ քառորդն ու դրամական փոխանցումների մոտ 90%-ը: Ընդ որում, տնտեսությունը դեռևս խիստ դոլարայնացված է, ինչն ապելի է մեծացնում խոցելիությունն արտաքին ցնցումների նկատմամբ⁶: 2015 թվականի հունվարի 2-ից Հայաստանը Ռուսաստանի կողմից գլխավորվող Եվրասիական Տնտեսական Միության (ԵՄՄ) լիիրավ անդամ է՝ հետամուտ չլինելով ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրմանը: Հայաստանը մեծ ջանքեր է գործադրում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ուղղությամբ: Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվն արձանագրել է 399.9 մլն. ԱՄՆ դոլարի բացասական բալանս: Որպես արտաքին առևտրից մեծ կախում ունեցող և ընթացիկ հաշվեկշռի դեֆիցիտ ունեցող երկիր, Հայաստանի համար Եական է օտարերկրյա ներդրումների ներգրավումը և տեղական արտադրության խթանումը: Վերջին տաս տարիների ընթացքում տատանումներ է գրանցել նաև գնաճի մակարդակը: 2017 թվականին պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտների ծավալը կազմել է ընդամենը 1 237 780.8 մլն. դրամ, իսկ ՀՀ արտաքին պետական պարտքը 5 494.9 մլն. ԱՄՆ դոլար:

Համաշխարհային տնտեսական ֆորումի «Համաշխարհային մրցունակության» համաթվով Հայաստանը զբաղեցնում է 70-րդ տեղը աշխարհի 140 երկրների շարքում: Այս նույն ցուցանիշի «Մակրոտնտեսական կայունություն»⁷ ենթահամաթվով Հայաստանն ունի բավականին ոչ նպաստավոր դիրք մյուս պետությունների ցանկում: 140 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 89-րդ տեղը՝ Էկվադորից և Բանգլադեշից հետո: Հարևան Վրաստանն այս ցուցանիշով զբաղեցնում է 72-րդ տեղը, Ադրբեջանը 126-րդ տեղը: Այս գեկույցում որպես բիզնեսի վարման հիմնական խոչընդոտներ են նշված ֆինանսական ռեսուրսների անմատչելիությունը, հարկային դրույթաչափերը և հարկային վարչարարությունը, կոռուպցիան: Մինևույն ժամանակ Հայաստանը բավականին նպաստավոր դիրք ունի Համաշխարհային Բանկի՝ 2018թ. բիզնեսի վարման ինդեքսի ընդհանուր թվով՝ 189 երկրների ցանկում զբաղեցնելով 41-րդ տեղը և այս ոլորտում արձանագրելով ցուցանիշների մշտական բարելավում⁸:

⁵ Ազգային վիճակագրական կոմիտե, www.armstat.am

⁶ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.

⁷ Արտացոլում է գնաճի մակարդակը և ֆիսկալ քաղաքականության կայունությունը

⁸ <http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Սոցիալական համատեքստում Հայաստանի առջև ծառացած հիմնական մարտահրավերներն են աղքատության բարձր ցուցանիշը և եկամուտների անհավասարությունը, ժողովրդագրական բացասական միտումները, որոնք դրսևորվում են բնական հավելածի նվազմամբ և արտագաղթի բարձր տեմպերով, տարածքային ոչ համաչափ զարգացումը ք. Երևանի և մարզերի միջև, սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների թերզարգացվածությունը:

Ներկայումս Հայաստանը բնութագրվում է Էական տարածքային անհամաչափությամբ: Տնտեսական ակտիվությունը համեմատաբար բարձր է Երևանում, որտեղ կենտրոնացած է երկրի բնակչության մոտ մեկ երրորդը և ազգային ՀՆԱ-ի ավելի քան կեսը: Տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վիճակը և մատչելիությունը և, հետևաբար, համայնքային մակարդակի սոցիալական ծառայությունների որակը դեռևս ցածր են հատկապես Երևանից դուրս գտնվող բնակավայրերում, և խիստ տատանվում է շրջանից շրջան: Տարածքային անհամաչափությունը հանգեցնում է մեկուսացված տարածքների տնտեսական ներուժի թերի օգտագործմանը և խոչընդոտում է տնտեսական զարգացմանը:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվառմամբ (2011թ. մարդահամարի հիմքով վարվող) կազմել է 2 972.7 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 1,895.8 հազ. մարդ (63.8%), իսկ գյուղականը՝ 1,076.9 հազ. մարդ (36.2%): Աշխատունակ տարիքից ցածր բնակչությունը կազմում է 632.9 մարդ կամ մշտական բնակչության 21.3%-ը: Աշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 1 934.6 հազար մարդ կամ մշտական բնակչության 66.5%-ը, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը 405.2 հազար է և կազմում է մշտական բնակչության 13.6%-ը⁹:

Աշխատանքային ռեսուրսներն ընդհանուր առմամբ կազմում են 2 021.4 հազար մարդ, որից տնտեսապես ակտիվ բնակչությունը 1 230.8 հազար է կամ աշխատանքային ռեսուրսների 60.9%-ը: Չբաղվածները կազմում են 1 011.9 հազար մարդ կամ տնտեսապես ակտիվ բնակչության 82.2%-ը: ՀՀ ՎԿ կողմից 2017թ. իրականացված աշխատուժի հետազոտության արդյունքների համաձայն (ըստ Եվրամիության անդամ-երկրներում կիրառվող Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մեթոդաբանության) գործազրկության մակարդակը (հետազոտվել են 7 788 տնային տնտեսություններ) կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 17.8% կամ 218.9 հազ. մարդ: Գյուղատնտեսության ոլորտում զբաղված են 317.1 բնակիչներ, որը կազմում է տնտեսապես ակտիվ բնակչության 25.7%-ը: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը կազմում է 790.6 մարդ կամ մշտական բնակչության 26.6%-ը: Ինչ վերաբերում է աշխատանքի դիմաց վարձատրության ցուցանիշներին, ապա միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետությունում 195 074 ՀՀԴ է: Քաղաք Երևանում այս ցուցանիշը կազմում է 210 655 ՀՀԴ¹⁰:

Հայաստանում բարձր է աղքատության մակարդակը: 2016 թվականի տվյալներով աղքատության մակարդակը երկրում կազմել է 29.4%, որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը 1.8% է: Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ սահմանված է 23,313 ՀՀԴ, իսկ աղքատության ընդհանուր գիծը 40,867 ՀՀԴ է: Մյուս կողմից Հայաստանում բավականին բարձր է եկամուտների անհավասարաչափ բաշխումը: Ջինի գործակիցն ըստ եկամուտների անհավասարության կազմում է 0.375, ըստ սպառման անհավասարության՝ 0.286: Դա վկայում է այն մասին, որ Հայաստանում բնակչության անհավասարությունն ավելի խորն է ըստ եկամուտների ցուցանիշի՝ սպառման ցուցանիշի համեմատ: 2016թ. ամենաշատ ապահովված 10% բնակչության դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով 17.5 անգամ գերազանցել են ամենաքիչ ապահովված 10% բնակչության դրամական եկամուտներին: Աղքատության մակարդակը ավելի բարձր է գյուղական բնակավայրերում՝ կազմելով 30.4%¹¹, իսկ քաղաքային բնակավայրերում կազմում է 28.8%: Անվանական միջին ամսական դրամական եկամուտները տնային տնտեսության մեկ շնչի հաշվով կազմում են 56,544 ՀՀԴ:

9 Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, հրատարակված՝ 2017թ. հունվարի 31

10 Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2016թ. հունվար-դեկտեմբեր, հրատարակված՝ 2017թ. փետրվարի 20

11 Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2018թ. հունվար-հունիս



ԲԱԺԻՆ 1: ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ



1.1 ՓՄՁ ՈԼՈՐՏԸ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ՝ ԹՎԵՐԻ ԼԵՉՎՈՎ

ՓՄՁ-ների դասակարգումը: Հայաստանում ՓՄՁ դասակարգման չափանիշներն ամրագրված են եղել 2000թ.-ին ընդունված «ՓՄՁ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը հիմնվում էր աշխատողների թվաքանակի, Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթի և Նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքի չափորոշիչների վրա: 2010 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենքի փոփոխությունները և լրացումները», որով սկսեց կիրառվել ՓՄՁ սուբյեկտի մեկ միասնական սահմանում՝ աշխատողների թվաքանակի չափանիշը ԵՄ սահմանմանը համապատասխանեցնելու համար: Սահմանման մեջ կիրառվում են հաշվեկշռի, աշխատողների թվաքանակի և շրջանառության ծավալների չափանիշները, որով ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են «գերփոքր», «փոքր» և «միջին» խմբերի համաձայն Աղյուսակ 1-ում բերված պարամետրերի¹²:

ՓՄՁ դասակարգման չափորոշիչ	Աշխատողների թվաքանակ	Տարեկան շրջանառություն	Հաշվեկշիռ
Գերփոքր	<10 աշխատող	≤ 100մ. ՀՀ դրամ (181 000 եվրո)	≤ 100մ. ՀՀ դրամ (181 000 եվրո)
Փոքր	<50 աշխատող	≤ 500մ. ՀՀ դրամ (909 000 եվրո)	≤ 500մ. ՀՀ դրամ (909 000 եվրո)
Միջին	<250 աշխատող	≤1 500մ. ՀՀ դրամ (2 727 000 եվրո)	≤ 1 000մ. ՀՀ դրամ (1 818 000 եվրո)

Աղյուսակ 1. ՓՄՁ սուբյեկտների՝ «գերփոքր», «փոքր» և «միջին» խմբերում դասակարգման չափորոշիչները

ՓՄՁ-ների թիվը: Համաձայն ՏՁՆՆ կողմից տրամադրված վիճակագրական տվյալների՝ ըստ հարկ վճարողների քանակի¹³ Հայաստանում գրանցված են և գործում են 79,747 ՓՄՁ սուբյեկտ՝ առ 2018թ. հունվարի 1-ի դրության, որը կազմում է ընդհանուր հարկ վճարող ձեռնարկությունների 99,3%-ը: ՓՄՁ սուբյեկտների կազմում գերակշիռ են գերփոքր ձեռնարկությունները՝ կազմելով գրանցված բոլոր ձեռնարկությունների 91.5%-ը: Փոքր ձեռնարկությունները կազմում են ընդհանուր ՓՄՁ-ների 6.97%-ը: Միջին ձեռնարկությունները թվով 1,222-ն են և կազմում են ՓՄՁ-ների ընդհանուր թվի 1.53%-ը (Աղյուսակ 2): Բոլոր ՓՄՁ-ների կեսից ավելին՝ շուրջ 53%-ը, տեղակայված են մայրաքաղաք Երևանում, ՓՄՁ-ների մնացած մասը տեղակայված են ՀՀ մարզերում, ընդ որում համեմատաբար առավել մեծ թվով ՓՄՁ-ներ տեղակայված են Երևանին սահմանակից մարզերում՝ Կոտայքում, Արարատում և Արմավիրում (Հավելված 2): 1000 բնակչի հաշվով Երևանում ՓՄՁ խտությունը 39 է, մարզերում՝ 20: Մարզային կտրվածքով այս ցուցանիշն առավել բարձր է Սյունիքում, Վայոց ձորում և Կոտայքում (Հավելված 2):

¹² Կիրառվել է 2018թ. հոկտեմբերի փոխանակման կուրսն ըստ ՀՀ Կենտրոնական բանկի:


¹³ Հարկ վճարողների քանակի մեջ ներառված են այն հարկ վճարողները, որոնք ներկայացրել են եկամտային հարկի հաշվարկ, տարեկան ֆիզ.անձի եկամուտների հաշվետվություն, արտոնագրային վճարի հաշվարկ կամ ունեն շրջանառության ծավալ (ներառված են նաև 0-կանները): Տեղեկատվությունը տրամադրվում է ըստ 19.03.2018թ-ի տեղեկատվական բազայում առկա տվյալների:



ՓՄՁ տեղակայման վայր	Գերփոքր ձեռնարկություն	Փոքր ձեռնարկություն	Միջին ձեռնարկություն	Ընդամենը
ք. Երևան	37,605	3,591	996	42,192
Մարզեր	35,356	1,973	226	37,555
Ընդամենը	72,961	5,564	1,222	79,747

Աղյուսակ 2. ՓՄՁ սուբյեկտների թիվը Հայաստանում ըստ դասակարգման խմբերի և տեղակայման վայրի առ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ

ՓՄՁ չափով պայմանավորված առկա են տարբերություններ Երևանի և մարզերի միջև: Ք. Երևանում համեմատաբար ավելի մեծ կշիռ են զբաղեցնում «փոքր» և «միջին» ձեռնարկությունները՝ միասին կազմելով Երևանում տեղակայված բոլոր ՓՄՁ-ների 11%-ը՝ ի տարբերություն մարզերի, որտեղ այս երկու խմբերի մասնաբաժինն ընդամենը 6% է: Մարզերում տեղակայված գերփոքր ձեռնարկությունները, թեև թվային առումով չեն գերազանցում Երևանում տեղակայված նույն խմբի ձեռնարկությունների թվին, սակայն խմբերի միջև կառուցվածքում ունեն համեմատաբար առավել մեծ կշիռ (Գրաֆիկ 1):




Գրաֆիկ 1. ՓՄՁ-ների կազմի ըստ չափերի և տեղակայման վայրի

ՓՄՁ-ների թիվն ըստ գործունեության ոլորտների: Ինչ վերաբերում է ՓՄՁ-ների գործունեության ոլորտներին, ապա ՓՄՁ սուբյեկտների շուրջ 59%-ը գործում են մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտում. այս ոլորտը գերակշիռ է ինչպես ք. Երևանի, այնպես էլ բոլոր մարզերի ոլորտային կառուցվածքում (Հավելված 2): ՓՄՁ-ների ընդամենը 8.4%-ն է զբաղված արտադրության (որոնց շուրջ 40%-ը՝ պարենային մթերքի արտադրության) ոլորտում, որին հաջորդում են «կացության և հանրային սննդի կազմակերպման» ոլորտը՝ 4%, և «տեղեկատվության ու կապի» ոլորտը՝ 2.6% ցուցանիշներով:

Ք. Երևանում «մեծածախ ել մանրածախ առևտուր. ավտոմեքենաների ել մոտոցիկլների նորոգում» ոլորտում գործում են ՓՄՁ-ների 53%-ը: Մարզերում այս ցուցանիշն առավել բարձր է՝ կազմելով 60%-68%: Մշակող արդյունաբերության ոլորտը ք. Երևանում կազմում է 8%: Ոլորտն ամենամեծ մասնաբաժինն ունի Արմավիրի մարզում՝ կազմելով կառուցվածքի 11%-ը, ամենափոքրը Շիրակում՝




7%: Կշիռով հաջորդ առավել մեծ ոլորտը մարզերում «կացության եվ հանրային սննդի կազմակերպման» ոլորտն է, ք. Երևանում՝ «տեղեկատվություն եվ կապի» ոլորտը (Գրաֆիկ 2):



Գրաֆիկ 2. ՓՄՁ-ների թվաքանակն ըստ գործունեության ոլորտների


ՓՄՁ ոլորտում զբաղվածություն: Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները զբաղվածությամբ են ապահովում շուրջ 266 000 մարդու, որը կազմում է ընդհանուր զբաղվածության 26.3%-ը: Երևանում ՓՄՁ-ներում զբաղված են շուրջ 179 000 մարդ, որը կազմում է ընդհանուր ՓՄՁ սեկտորում զբաղվածության 67%-ը: Մարզերում այս ցուցանիշն առավել փոքր է՝ 87 հազար մարդ: Թեև քանակական առումով գերիջող ձեռնարկությունները գերակշռող են, սակայն զբաղվածության ապահովման առումով ձեռնարկությունների այս երեք խմբերում զբաղված են գրեթե հավասար մասնաբաժնով աշխատակիցներ: Մարզերում, ի համեմատություն Երևանի, առավել մեծ մասնաբաժին է զբաղեցնում «գերիջող» ձեռնարկություններում զբաղվածների թիվը՝ կազմելով 40%, և առավել փոքր է «միջին» ձեռնարկություններում զբաղվածների մասնաբաժինը, որը կազմում է 23% (ք. Երևանում՝ 37%) (Գրաֆիկ 3):



Գրաֆիկ 3. ՓՄՁ-ների կազմի ըստ ներգրավված աշխատակիցների թվի և տեղակայման վայրի

Շուրջ 69,000 մարդ ներկայումս զբաղված են մեծածախ եվ մանրածախ առևտրում, որը կազմում է ՓՄՁ ոլորտում զբաղվածության 26%-ը: Մյուս ոլորտներում զբաղվածությունն առավել ցածր է. 39,300 մարդ աշխատում է մաշկող արդյունաբերության ոլորտում՝ կազմելով ՓՄՁ ընդհանուր զբաղվածության 15%-ը, իսկ կացության եվ հանրային սննդի կազմակերպման ոլորտում ներգրավվա են ընդհանուր ՓՄՁ ոլորտում զբաղվածների 9%-ը (Հավելված 2):

ՓՄՁ-ներն ըստ շրջանառության և վճարած հարկերի: 2017 թվականի ընթացքում ՓՄՁ-ների տարեկան շրջանառությունը կազմել է 1892 մլրդ. դրամ, որը կազմում է տարվա կտրվածքով բոլոր ձեռնարկությունների շրջանառության 27%-ը: ՓՄՁ շրջանառության գերակշիռ մասը բաժին է ընկնում ք. Երևանում տեղակայված ձեռնարկություններին: ՓՄՁ տարեկան շրջանառության 16%-ը ապահովում են Երևանում տեղակայված միջին ձեռնարկությունները, թեև այս ձեռնարկությունները կազմում են ընդհանուր ձեռնարկությունների թվի ընդամենը 2%-ը:




Գրաֆիկ 4. ՓՄՁ-ների շրջանառության ծավալները 2017թ. համար ըստ ՓՄՁ չափերի և տեղակայման վայրի (մլրդ ՀՀԴ)

2017թվականին ՓՄՁ կողմից վճարված հարկերը կազմել են 205 մլրդ ՀՀԴ, որի կազմում մարզերում գտնվող ՓՄՁ-ների մասնաբաժինը կազմել է ընդամենը 26%: Ընդհանուր առմամբ գերփոքր ընկերություններն ապահովում են ՓՄՁ սեկտորից հարկային մուտքերի 25%-ը, իսկ «փոքր» և «միջին» ձեռնարկություններն ունեն գրեթե հավասար մասնաբաժին համապատասխանաբար 37% և 38%: Ի տարբերություն ք. Երևանում տեղակայված «միջին» ձեռնարկությունների, որոնք ապահովում են Երևանից հավաքագրված հարկերի 47%-ը՝ մարզային «միջին»



ձեռնարկություններն ունեն ավելի նվազ մասնաբաժին մարզային հարկային եկատուների կառուցվածում՝ ունենալով ընդամենը 17% մասնաբաժին (Գրաֆիկ 5):



Գրաֆիկ 5: ՓՄՁ-ների կողմից վճարված հարկերը 2017թ. համար ըստ ՓՄՁ չափերի և տեղակայման վայրի (մլրդ. ՀՀԴ)




1.2 ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Տնտեսությունում բիզնես միջավայրի յուրօրինակ բնութագրիչ է համարվում ՓՄՁ թվի դինամիկան, որը ցույց է տալիս թե որ ուղղությամբ է ընթանում ՓՄՁ ոլորտը՝ ընդլայնման թե կրճատման: Ցավոք Հայաստանում չի վարվում փակված կամ սնանկացած ՓՄՁ-ների վերաբերյալ հանրության համար բաց վիճակագրություն, ինչը հնարավորություն կտար հաշվարկել, թե նոր բացված ՓՄՁ-ների քանի տոկոսն է կենսունակ և որքան է ՓՄՁ-ների կյանքի միջին տևողությունը:

2002 թվականից ի վեր ՓՄՁ սուբյեկտների մասնաբաժինը ՀՆԱ կազմում կրկնապատկվել է և 2016 թվականի դրությամբ կազմել է մոտ 27%: 2012 թվականի դրությամբ ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր թիվը կազմել է 75,400, որը կազմել է այդ թվականին բոլոր գրանցված և գործող կազմակերպությունների 98%-ը: 2012 թվականի դրությամբ ՓՄՁ խտությունը ք. Երևանում 1000 բնակչի հաշվով կազմել է 38 սուբյեկտ, մարզերում շատ ավելի ցածր՝ 18 ընկերություն 1000 բնակչի հաշվով¹⁴: 2017 թվականի տվյալները ցույց են տալիս դրական դինամիկա՝ ի համեմատություն 2012 թվականի. 2017 թվականի դրությամբ ՓՄՁ խտությունը 1000 բնակչի հաշվով Երևանում 39 է, մարզերում՝ 20 (Հավելված 2):

2014-ից 2017թթ. ՓՄՁ սուբյեկտների թվի դինամիկայի ուսումնասիրությունը¹⁵ ցույց է տալիս, որ գրեթե բոլոր տիպի ՓՄՁ սուբյեկտների գծով առկա է ակտիվ հարկ վճարողների քանակական աճ: Եթե 2014 թվականը դիտարկենք որպես բազային տարի, ապա 2017 թվականի դրությամբ արձանագրվել է ՓՄՁ թվի 7% աճ: Միևնույն ժամանակ, 2016-ից 2017 թվականների ընթացքում 11%-ով նվազել է «միջին» ձեռնարկությունների թիվը (Գրաֆիկ 6):




Գրաֆիկ 6. ՓՄՁ թվի դինամիկան 2014-ից 2017թթ. ընթացքում

¹⁴ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.


¹⁵ Այս ենթաբաժնում ներկայացված 2014թ.-ից 2016թ. տվյալները վերցված են՝ «ՓՄՁ ոլորտի հիմնական բնութագրիչները ՀՀ-ում» զեկույցից, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոնի ՀՀ

Սակայն, երբ ՓՄՁ սուբյեկտների քանակի վերաբերյալ տվյալները համադրում ենք ՓՄՁ ոլորտում ներգրավված աշխատողների թվի դինամիկայի տվյալների հետ, ապա ակնհայտ է դառնում, որ ոլորտում զբաղվածության թիվը անկում է ապրել: Ինչպես նկատում ենք, 2014-ից 2017թ. ընթացքում ՓՄՁ ոլորտում բոլոր սուբյեկտների կտրվածքով նկատվել է աշխատողների թվաքանակի անկում, ինչը կարծում ենք առավելապես խոսում է առկա հիմնախնդիրների մասին (Գրաֆիկ 7):




Գրաֆիկ 7. ՓՄՁ-ներում ներգրավված աշխատակիցների թվի դինամիկան 2014-ից 2017թթ. ընթացքում

Այս տվյալները կարող ենք համարդել նաև ՓՄՁ-ների շրջանառության ծավալների հետ: 2014 թվականին ՓՄՁ ոլորտի շրջանառությունը կազմել է 1 566 մլրդ. դրամ, 2017-ին՝ այս թիվը հասել է 1 892 մլրդ. դրամի, ինչը նշանակում է շուրջ 21%-ի աճ բազային 2014 թվականի նկատմամբ: Աճը հատկապես շոշափելի է 2015-ից 2016 թվականների համեմատականում (Գրաֆիկ 8):



Գրաֆիկ 8. ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները 2014-ից 2017թթ ընթացքում (մլրդ ՀՀԴ)

2014-ից 2016 թթ. ընթացքում նկատվել է ինչպես շրջանառության ծավալների, այնպես էլ հարկային վճարումների շարունակական աճ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես վարչարարության, այնպես էլ ակտիվ հարկ վճարողների թվաքանակի աճով: Սակայն 2017 թվականի համար արձանագրվել է հարկային եկամուտների կտրուկ նվազում՝ ի հակադրության նրա, որ ՓՄՁ-ների շրջանառության ծավալները անկում չեն գրանցել (Գրաֆիկ 9):




Գրաֆիկ 9. ՓՄՁ կողմից վճարված հարկերի դինամիկան 2014-ից 2015 թթ ընթացքում (մլրդ ՀՀԴ)

Մեկ ՓՄՁ սուբյեկտի միջին տարեկան շրջանառության ցուցանիշների համաձայն միջինում մեկ «գերփոքր» և «փոքր» ակտիվ հարկ վճարող սուբյեկտի հաշվով շրջանառության ծավալները աննշան ավելացել են 2014-ից 2016թթ ընթացքում, սակայն «գերփոքր» ձեռնարկությունների դեպքում 2017 թվականի համար մեկ ՓՄՁ սուբյեկտի միջին տարեկան շրջանառության ցուցանիշները նվազել են, իսկ «փոքրի» դեպքում ցուցանիշն այս տարեթվին գրանցել է աճ: «Միջին» ձեռնարկությունները 2015 թվականի համար գրանցել են աճ, 2016թվականին՝ անկում, իսկ 2017թ.-ին կրկին աճ: Մեկ ՓՄՁ սուբյեկտի միջին տարեկան շրջանառության միջինացված ցուցանիշը 2014թ.-ից 2017թ. ընթացքում ընդհանուր առմամբ գրանցել է աճի միտում (Աղյուսակ 3):

Տարեթիվ	Գերփոքր	Փոքր	Միջին	Միջինում
2014թ.	6.1	102.6	546.6	21.1
2015թ.	6.3	109.3	572.0	21.2
2016թ.	8.1	112.6	472.0	23.2
2017թ.	7.8	118.4	543.1	23.7

Աղյուսակ 3. Մեկ ՓՄՁ սուբյեկտի միջին տարեկան շրջանառությունը 2014-ից 2017թթ ընթացքում (մլն դրամ)

Հարկ վճարողի հարկային ծանրաբեռնվածության հաշվարկը իրականացվել է հարկային վճարումների ծավալը հարաբերելով տվյալ ենթաուղղության ակտիվ հարկ վճարողների թվաքանակին: Մեկ ակտիվ հարկ վճարողը 2017 թվականին միջինում վճարել է մոտ 2.58 մլն դրամի հարկ: «Գերփոքր» ձեռնարկությունները տարեկան վճարել են միջինում շուրջ 700 հազար ՀՀԴ գումար հարկ, «փոքր» ձեռնարկությունները՝ 13.7 մլն հարկ: «Միջին» ձեռնարկությունների կողմից վճարված միջին տարեկան հարկը կազմել է 63.4 մլն ՀՀԴ (Գրաֆիկ 10): Հարկային վճարումների ծանրաբեռնվածության առումով առավել բարձր ոլորտներ են շինարարությունը, հանքարդյունաբերությունը, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման տեղեկատվությունը և կապի ոլորտները (2016թ.)¹⁶:



Գրաֆիկ 10. ՓՄՁ ոլորտում մեկ հարկ վճարողի հարկային ծանրաբեռնվածությունը 2017թ. համար (ՀՀԴ)

¹⁶ «ՓՄՁ ոլորտի հիմնական բնութագրիչները ՀՀ-ում» զեկույցից, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

«ՓՄՁ ոլորտի հիմնական բնութագրիչները ՀՀ-ում» զեկույցի՝ մեկ հարկ վճարողի ծանրաբեռնվածությունը շարունակաբար բարձրացել է, մասնավորապես 2015թ-ի համեմատ 2016թ.-ին մեկ ակտիվ հարկ վճարողից ստացված հարկերի մեծությունն աճել է շուրջ 39 տոկոսով, այն պարագայում երբ ակտիվ հարկ վճարողների քանակը դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է ընդամենը 3 տոկոսով: Ավելին, դիտարկվող ժամանակահատվածում ՓՄՁ շրջանառությունը ավելացել է ընդամենը 12 տոկոսով: ՓՄՁ սուբյեկտներից գանձվող հարկերի մեծությունն աճում է ավելի արագ տեմպերով, քան շրջանառությունը ավելի քան 3 անգամ: ՓՄՁ ոլորտում հարկային ծանրաբեռնվածությունը մեծանում է, իսկ հիմնական աճի բեռը բաժին է ընկնում առավելապես չափերով միջին սուբյեկտներին¹⁷:

¹⁷ «ՓՄՁ ոլորտի հիմնական բնութագրիչները ՀՀ-ում» զեկույցից, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ



ԲԱԺԻՆ 2: ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱԿՐՈ ՄԻՋԱՎԱՅՐ



2.1 ՓՄՁ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում կարգավորվում էր մի շարք օրենքների և հիմնադրությամբ փաստաթղթերի միջոցով: 2000 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունվել է **«Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը**, որը սահմանում է ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում հարաբերությունները: Օրենքի 3-րդ հոդվածում սահմանվում են այն հիմնական ուղղությունները, որոնք ենթակա են պետական աջակցության, այդ թվում՝ իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը, ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանը ու զարգացմանը՝ նպաստելը, տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը, արտաքին տնտեսական գործունեության խթանումը, նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը, բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը, կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը, պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ ՓՄՁ-ի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով: Ծրագիրը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տոդով: ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, ՀՀ կառավարության 19.03.2002թ. N282 որոշմամբ հիմնադրվում է **«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն»** հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ), որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականություն և ոլորտի զարգացման ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցը: Մինչ ՓՄՁ զարգացման ոլորտում ռազմավարության ընդունումը՝ ՓՄՁ զարգացման ուղղությամբ քաղաքականությունն իրականացվում էր ՀՀ Էկոնոմիկայի նախարարության¹⁸ կողմից մշակվող տարեկան գործողությունների ծրագրերով, որոնց իրականացնող կողմ է հանդիսանում ՓՄՁ ՉԱԿ-ը: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցության ամենամյա պետական ծրագրերին զուգահեռ կանոնավոր պատրաստվում է եռամյա միջնաժամկետ ծախսային ծրագիր, որտեղ մանրամասն թվարկվում են միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները¹⁹:

Մինչ ՓՄՁ ոլորտում ռազմավարության ընդունումը պաշտոնական իրականացման մեջ է եղել 2000 թվականի օգոստոսի 3-ին ընդունված **«Հայաստանում փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրություններ» փաստաթուղթը**, որը սահմանում է ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի առանձնահատուկությունները, զարգացման քաղաքականության և ռազմավարության նպատակները, ՓՄՁ քաղաքականության իրականացման կառուցվածքային ապահովման, զարգացման քաղաքականության և ռազմավարության իրականացման հիմնական ուղղությունները, այդ թվում՝ իրավական, ֆինանսական, արտադրության զարգացման, տարածաշրջանային զարգացման, ինովացիաների ներդրման հնարավորությունների

¹⁸ Այժմ՝ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

¹⁹ Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան ՓՄՁ քաղաքականության համաթիվ Արևելյան գործընկերության երկրներ, 2016 թ.



ընդլայնման, տեղեկատվական և խորհրդատվական ապահովման, ձեռնարկատիրության սոցիալական վարկի բարձրացման, բիզնես ուսուցման և կադրերի վերապատրաստման ոլորտներում²⁰:

ՓՄՁ քաղաքականության դաշտը շարունակական բարելավվել է սկսած 2012 թվականից: 2014 թվականի դեկտեմբերին դոնորների օժանդակությամբ պատրաստվել է Եվրոպայի Փոքր Բիզնեսի Ակտի տաս սկզբունքների շուրջ կառուցված ռազմավարության նախագիծ. 2015թ. հունիսին այն քննարկվել է կառավարության հիմնական շահեկիցների հետ²¹: ՓՄՁ ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ համալիր ուսումնասիրություն է իրականացվել Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատման շրջանակներում:

ՓՄՁ ոլորտին է անդրադառնում նաև ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշմամբ ընդունված **«Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»**: Ռազմավարությունում սահմանված են ՓՄՁ-ների ուղղակի աջակցության հիմնական քաղաքականությունները, որոնք ներառում են՝

1. Պետական վարկային երաշխավորությունների փորձի շարունակությունը և ընդլայնումը այն գործող և սկսնակ ՓՄՁ-ների համար, որոնք ունեն արտահանման, ներմուծման փոխարինման կամ գիտելիքների արտադրության ներուժ՝ գերակայություն տալով մարզերում գործող ձեռնարկություններին:
2. Սկսնակ գործարարության կայացմանն աջակցություն՝ ներառյալ կարողությունների և հմտությունների զարգացման, գործարար պլանավորման և սկսնակ գործարարներին ֆինանսների հասանելիության ապահովման միջոցառումները: Առանձին ծրագրեր ուղղված կլինեն կանանց և երիտասարդների շրջանում գործարարության զարգացմանը:
3. Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովում՝ գրավի կամ դրա իրացվելիության անբավարարության, բարձր ռիսկերի և այլ խոչընդոտների վերացման և կառավարման գործիքների միջոցով:
4. Կրթական և խորհրդատվական աջակցություն՝ հատկապես, եթե շուկայական գործող մեխանիզմները չեն ապահովում դրանք կամ կապված են մեծ տրանսակցիոն ծախսերի հետ: Առանձին ուղղությամբ պետական ծրագրերը միտված կլինեն գործարար ծառայություններ մատուցող ընկերությունների կարողությունների զարգացմանը:
5. Ուղղակի աջակցություն գործող և սկսնակ ՓՄՁ-ներին՝ շուկաների հասանելիության ապահովման, ինչպես նաև տեղեկատվական օգնության նպատակով: Ձեռնարկությունները կստանան աջակցություն ինտերնետային կայքերի, գովազդային վահանակների, ապրանքների փաթեթավորման և բրենդավորման համար:
6. Պետական գնումների համակարգի հասանելիության ապահովում ՓՄՁ-ների համար: Վերանայման պետք է ենթարկվեն պետական գնումների այն ընթացակարգերը, որոնք առանց արդարացի հիմնավորման նպատակի խոչընդոտներ են ստեղծում համապատասխան ոլորտում գործող ՓՄՁ-ների համար:

Ռազմավարությունը սահմանում է, որ ՓՄՁ-ների ստեղծման և հաջող գործունեության խրախուսումը տնտեսության վերը նշված ոլորտներում կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններից է: Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է, որ 2025 թվականին ՓՄՁ-ների ավելացրած արժեքի տեսակարար կշիռը

²⁰ Տես ավելին՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=11207>

²¹ Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան ՓՄՁ քաղաքականության համաթիվ Արևելյան գործընկերության երկրներ, 2016 թ.



ՀՆԱ-ում կաճի՝ 2012-ի մոտ 40 տոկոսից հասնելով 60 տոկոսի, իսկ մինչև 2025 թվականը հայկական ՓՄՁ-ների աշխատանքի միջին արտադրողականությունը կաճի 2-3 անգամ՝ նպաստելով նաև արտահանման մեջ ՓՄՁ-ների արտադրանքի տեսակարար կշռի աճին:

Ռազմավարությունը նաև սահմանում է, որ տարբերակված քաղաքականություն պետք է մշակվի և կիրառվի միկրո ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների նկատմամբ: Վերջիններս կարևոր են դրանց աճի և զարգացման հեռանկարի տեսանկյունից, և դրանց համար առավել արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել ՓՄՁ-ների հետագա աճը պայմանավորող կարևոր գործոնները: Մեկ այլ բաժնում, ՀԶԾ-ն անդրադառնում է ՏՏ ոլորտում ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների պետական աջակցության ծրագրերի իրականացմանը, որը տեղի է ունենալու այդ թվում՝ շուկաների հասանելիության, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի և տեղեկատվական դաշտի ապահովման միջոցով:

2015 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության նիստի N 44 արձանագրային որոշմամբ հաստատվեց **«ՀՀ փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարությունը»**: Այն սահմանում է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարական նպատակները և գործողությունների հիմնական ուղղությունները, որոնք են՝

- 1) ինստիտուցիոնալ, օրենսդրական և գործառնական միջավայրի բարելավում ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման համար,
- 2) ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորման հասանելիության բարելավում,
- 3) ձեռնարկատիրական կարողությունների (մշակույթի) խթանում և զարգացում,
- 4) ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացում,
- 5) պետություն-մասնավոր հատված երկխոսության բարելավում,
- 6) ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցների ուժեղացում,
- 7) կանանց ձեռներեցության խթանում, ինչպես նաև սկսնակ գործարարներին աջակցության տրամադրում:

Ընդհանուր առմամբ «ՀՀ փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարությունում» սահմանված ռազմավարական նպատակները համահունչ են «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում» սահմանված ՓՄՁ-ների ուղղակի աջակցության հիմնական քաղաքականություններին: Այնուամենայնիվ որոշակի ուղղություններով առկա են տարբերություններ: Մասնավորապես ՀԶԾ-ն պետական վարկային երաշխավորությունների փորձի շարունակության և ընդլայնման ոլորտում որպես գերակայություն է սահմանում մարզերում գործող ձեռնարկություններին, սկսնակ գործարարության կայացման աջակցության ծրագրերում երիտասարդներին տարբերակված մոտեցման ցուցաբերումը, այնինչ ՓՄՁ ռազմավարությունը նման տարբերակում չի նախատեսում: Մյուս տարբերությունը կայանում է նրանում, որ ՀԶԾ-ն հիմնական քաղաքականության ուղղություն է սահմանում պետական գնումների համակարգի հասանելիության ապահովումը ՓՄՁ-ների համար, որը սակայն ներառված չէ ՓՄՁ ռազմավարական նպատակներում որպես գերակա ուղղություն:



2.2 ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒՄ

Պետական ապարատի ինստիտուցիոնալ կարողությունները: Պետական արդյունավետ կառավարումը, կոռուպցիայի բացակայությունը և ինստիտուտների կայացվածությունը խթանում են ձեռնարկությունն ու նպաստում մասնավոր հատվածի աճին ու զարգացմանը: Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության համաթվի «Հանրակարգեր» ենթահամաթվով²² Հայաստանը զբաղեցնում է 67-րդ տեղը 140 երկրների շարքում: Այս ցուցանիշով Հայաստանը հետ է մնում հարևան Վրաստանից (40-րդ տեղը), Ադրբեջանից (58-րդ տեղ) և մոտ է գտնվում Ռուսաստանի և Ալբանիայի ցուցանիշներին (2018թ. դասակարգում): Ըստ «Համաշխարհային կառավարման ցուցանիշների»²³ «Կառավարության արդյունավետություն» ենթացուցանիշի Հայաստանը դասակարգված է 50-րդը՝ 0-ից 100 միավոր սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է վատագույն արդյունք, 100-ը՝ լավագույն արդյունք: 2012 թվականին այս ցուցանիշը եղել է 54, ինչը նշանակում է, որ այլ երկրների համատեքստում երկիրը հետընթաց է արձանագրել: Հարևան Վրաստանն այս ենթացուցանիշով 72-րդն է: Ըստ «Համաշխարհային կառավարման ցուցանիշների»²⁴ Հայաստանը որոշ ենթացուցանիշներով գրանցել է դանդաղ աճող դրական միտում, ինչպես օրինակ «թափանցիկություն», «կարգավորումների որակ», «օրենքի ուժ» ենթացուցանիշներն են, սակայն առկա են ենթացուցանիշներ, որոնց դեպքում արձանագրվել է անկում, ինչպես օրինակ «քաղաքական կայունություն և բռնության բացակայություն», «կառավարության արդյունավետություն», «կոռուպցիայի վերահսկում» ենթացուցանիշներն են (2017թ. դասակարգում):

Մինչ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած հեղափոխությունը Հայաստանում կարևոր խնդիր էր մնում կոռուպցիան: Ըստ Կոռուպցիայի ընկալման ինդեքսի (ԿԸԻ)՝ Հայաստանում այս ոլորտում իրավիճակը շատ խնդրահարույց էր²⁵: Թեև Հայաստանը ըստ ԿԸԻ-ի շարունակաբար բարելավել է իր արդյունքը սկսած 2010 թվականից, սակայն իր ցուցանիշով ակնհայտորեն հետ է մնում մի շարք համադրելի երկրներից, ինչպես օրինակ Վրաստանն է, Խորվաթիան, Մակեդոնիան և այլն: Համաշխարհային կառավարման ցուցանիշների կազմում «Կոռուպցիայի վերահսկումը» ենթահամաթվի ցուցանիշով նույնպես Հայաստանը ցույց է տվել ոչ խոստովնալից արդյունք՝ 2017 թվականին ունենալով 32.69 դասակարգում 0-ից 100 համակարգում (որտեղ 100-րդը առավելագույն դրական արդյունքն է), մինչդեռ Վրաստանն այս նույն ցուցանիշով ունի 77.4 դասակարգում: Այս խնդրի կարևորությունը գործարար հատվածի համար շեշտադրված է նաև «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույցում, որտեղ մասնավորապես նշվում է, որ հարցման ենթարկված ձեռնարկությունների 51.4%-ը հաստատել է, որ կաշառակերությունն ու կաշառքի վճարման այլ ձևերը շարունակաբար ներազդել են իրենց ընկերությունների աշխատանքի վրա, իսկ 33%-ը հաստատել է, որ կատարել են լրացուցիչ օրենքով չնախատեսված վճարումներ ադմինիստրատիվ գործընթացն արագացնելու կամ ծառայության համապատասխան մակարդակ ստանալու համար²⁶:

²² Ենթահամաթվը ներառում է անվտանգությունը, սեփականության իրավունքը, սոցիալական կապիտալը, ստուգումները և հաշվեկշիռները, թափանցիկությունը և էթիկան, հանրային սեկտորի կատարողականը և կորպորատիվ կառավարումը

²³ Տես ավելին՝ <http://info.worldbank.org/governance/wgi/#reports>

²⁴ Տես ավելին՝ <http://info.worldbank.org/governance/wgi/#reports>

²⁵ Տես ավելին՝ <https://www.transparency.org/research/cpi/overview>

²⁶ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.



«Նպաստավոր միջավայր ճանապարհորդության կայուն ձեռնարկությունների համար» հետազոտության շրջանակներում հարցազրույցում մասնակցած կազմակերպությունների ղեկավարների կարծիքով պետական հաստատություններում առկա են եղել բյուրոկրատական ընթացակարգեր, որոնք ուղեկցվել են մանր կոռուպցիայով (2016թ.)²⁷: Պետական մրցույթներին մասնակցության ընթացակարգերը թափանցիկ չեն եղել: Հայտարարությունները երբեմն տրվել են վերջնաժամկետից մի քանի օր առաջ, մինչդեռ պատրաստվելու և դիմելու համար անհրաժեշտ է եղել առավել երկար ժամանակ: Բացի այդ տեխնիկական բնութագրերը հստակ չեն եղել և երբեմն հարմարեցված են եղել նախապես ընտրված հաղթողներին: Համաձայն «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները» հետազոտության բիզնեսների ղեկավարների կարծիքով պետական գնումների մրցույթներում հիմնականում հաղթել են այն կազմակերպությունները, որոնք փոխկապակցված են եղել բարձրաստիճան պաշտոնյաների հետ և որոնց համար համապատասխանեցվել են տեղերի պահանջներն ու տեխնիկական առաջադրանքները²⁸ (2015թ.): Այս հետազոտությամբ նույնպես բարձրաձայնվում է նաև պետական գնումների գործընթացում թափանցիկության ապահովման խնդրի առկայության մասին: Հարցման ենթարկված ընկերությունների 51,4%-ը, որոնք տեղյակ են եղել պետական գնումների գործընթացների վերաբերյալ, նշել են, որ պետական հայտերի մրցույթային (տեղեկատվային) գործընթացը հիմնականում չի հետևում թափանցիկ գնումների ընթացակարգային կանոններին:

Ընկերությունների մեծամասնությունը տեղյակ չէ հակակառուպցիոն արդյունավետ ու անկախ հաստատությունների գոյության մասին, որոնք պատասխանատու են մասնավոր հատվածի կողմից ներկայացվող բողոքների քննման համար: Համաձայն ՆՄԿՁ գեկույցի՝ ընկերությունների միայն 7.7%-ն է տեղյակ եղել այդպիսի հաստատությունների գոյության մասին, մինչդեռ 60%-ն անտեղյակ է եղել, իսկ ընկերությունների 26.3%-ը նշել է, որ անկախ հակակառուպցիոն հաստատություններ գոյություն չունեն: Այս տվյալները խոսում են այն մասին, որ անհրաժեշտություն կա բարձրացնել նմանատիպ հաստատությունների վերաբերյալ իրազեկվածությունը և ակտիվ ներգրավել մասնավոր հատված, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների նկատմամբ բարձրացնել վստահությունը²⁹:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո նոր կառավարությունը որդեգրեց մի շարք ոլորտներում բարեփոխումների իրականացման քաղաքականություն, որոնց թվում առանցքային է կոռուպցիայի դեմ պայքարը և պետական կառավարման ապարատի արդյունավետության բարձրացումը: 2018 թվականի մայիսից իրականացված աշխատանքները և փոփոխությունները դեռևս արձագանք չեն գտել միջազգային զեկույցներում և համաթվերում, ուստի նոր կառավարության կողմից իրականացված աշխատանքների արդյունավետության մասին խոսելը դեռևս վաղ է:

Ինստիտուցիոնալ կարողությունները ՓՄՁ ոլորտում: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է ակտիվ մոտեցում կիրառել ՓՄՁ քաղաքականության իրականացման ուղղությամբ: 2012 թվականից սկսած Հայաստանը նախաձեռնել և իրականացրել է մի շարք բարեփոխումներ ուղղված ՓՄՁ ոլորտի զարգացմանը և աջակցությանը, այդ թվում՝ ներառելով կարգավորող օրենսդրության պարզեցումը և ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ.

²⁷ «Նպաստավոր միջավայր ճանապարհորդության կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.

²⁸ «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները», ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մարկրո և միջրո մակարդակներում, սեպտեմբեր 2015

²⁹ «Նպաստավոր միջավայր ճանապարհորդության կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.



հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը» շեշտադրում է արտահանմամբ պայմանավորված տնտեսական աճը, որի հիմքում են գյուղատնտեսության, ՏՏ, զբոսաշրջության և արտադրության ոլորտները: Առաջնահերթ գերակայությունների շարքում են տնտեսական մրցունակությանը և մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված բարեփոխումները (մասնավորապես, վարչարարական խոչընդոտների նվազեցումը և հարկային վարչարարության պարզեցումը):

ՓՄՁ քաղաքականության մշակումն իրականացվում է ՀՀ Տնտեսական ներդրումների և զարգացման նախարարության կողմից՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին և և ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության հիմնադրույթներին համապատասխան, որոնք հաստատվել են դեռևս 2000 թվականին: ՓՄՁ ոլորտում քաղաքականության ներքո զարգացման ծրագրերն իրականացվում են ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից, որը հիմնադրվել է 2002 թվականին կառավարության որոշմամբ և ՓՄՁ զարգացման տարեկան ծրագրերն իրականացնող անկախ կառույց է: ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից հրապարակվում է տարեկան հաշվետվություն, որը վերլուծում է ՓՄՁ հատվածի զարգացման հիմնական միտումները: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցության ամենամյա պետական ծրագրերին զուգահեռ՝ կանոնավոր պատրաստվում է եռամյա միջնաժամկետ ծախսային ծրագիր, որտեղ մանրամասն թվարկվում են միջոցառումները և դրանց իրականացման ժամկետները³⁰:

ՓՄՁ ՁԱԿ-ը շարունակում է հանդիսանալ Հայաստանի ՓՄՁ սուբյեկտներին բիզնես, տեխնիկական և ֆինանսական խորհրդատվություն տրամադրող հիմնական հաստատությունը: Այն իր գործունեությունն իրականացնում է ՓՄՁ աջակցության տարեկան պետական ծրագրերի միջոցով, որտեղ սահմանված է ծրագրված գործողությունների համընդգրկուն ցանկ՝ համապատասխան բյուջեով և ժամանակացույցով: ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործարարության աջակցության ծրագրերը, այդ թվում՝ փոքր վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր, ընդլայնվել են դոնորների Էական օժանդակությամբ և ՀՀ կառավարության միջոցներով: Ներկայումս ՓՄՁ ՁԱԿ-ը ներկայացված է մայրաքաղաք Երևանում, ինչպես նաև բոլոր մարզերի մեկ մարզային քաղաքում՝ մեկ աշխատողով:

ՓՄՁ ոլորտի զարգացման համատեքստում Էական բարեփոխումներ են կատարվել գործառնական միջավայրում՝ ընկերությունների գրանցման գործընթացների պարզեցմամբ և Էլեկտրոնային կառավարման ծառայությունների ընդլայնմամբ: Մյուս կողմից, միջազգային լավագույն գործելակերպերի համեմատ՝ սնանկության դաշտը դեռևս ունի թերություններ³¹: «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները» հետազոտության շրջանակներում հարցվածների մոտ կեսը՝ 47%-ը գտնում է, որ 2009թ.-ից 2014 թթ ընթացքում իրականացված բարեփոխումներն իրենց բիզնեսի վրա ոչ մի ազդեցություն չեն թողել: Ավելին, հարցված ՓՄՁ-ների 31%-ը համարում է, որ բարեփոխումներն իրենց բիզնեսի վրա թողել են բացասական ազդեցություն և միայն 14 տոկոսն է համարում, որ 2009-ից 2014 թթ տեղի ունեցած ռեֆորմներն իրենց բիզնեսի վրա ունեցել են դրական ազդեցություն³²:

³⁰ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.

³¹ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.

³² «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները», ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մարկրո և միջրո մակարդակներում, սեպտեմբեր 2015



Այս հետազոտական ծրագրի շրջանակներում առցանց հարցմանը մասնակցած 331 ՓՄՁ-ների 46%-ը համարում է, որ պետությունն ընդհանրապես բավարար չափով չի աջակցում ՓՄՁ ոլորտին, 30%-ը համարում է, որ ձեռնարկված միջոցառումներն «ավելի շուտ անբավարար են»: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 9%-ի կարծիքով պետական աջակցությունն «ավելի շուտ բավարար է», և միայն 5%-ն են ձեռնարկված միջոցառումները համարել լիովին բավարար: Այս հարցին դժվարացել են պատասխանել ՓՄՁ-ների 10%-ը: Այսպիսով, ՓՄՁ-ների 76%-ի կարծիքով պետական աջակցություն ՓՄՁ սեկտորին անբավարար է:

ՓՄՁ ոլորտում վիճակագրության վարում: ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման շրջանակը և որակը դեռևս բարելավման կարիք ունի: Որոշ վիճակագրական տվյալներ սահմանափակ են ինչպես օրինակ ՓՄՁ-ների կողմից իրականացվող արտահանման մասով, ՓՄՁ-ների փակման վերաբերյալ և այլ, իսկ օգտագործվող մեթոդաբանությունները կարելի է բարելավել: ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից հրապարակվում է տարեկան հաշվետվություն, որը վերլուծում է ՓՄՁ հատվածի զարգացման հիմնական միտումները: Իրապես, ՓՄՁ ՁԱԿ-ի պատրաստած հիմնական տվյալների հիմքում գլխավորապես ընկած է այլ պետական գերատեսչությունների (օրինակ՝ սոցիալական ապահովության և հարկային մարմիններ) տրամադրած սահմանափակ տեղեկատվության երկրորդային վերլուծությունը: Վերջիվերջո, ստվերային տնտեսության վերաբերյալ տվյալներն ու տեղեկատվությունը սահմանափակ են (չնայած էական փաստերին, որոնք հուշում են, որ այն զգալի չափերի է հասնում): Այս ոլորտի մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար և որպես բիզնեսի ֆորմալ ձևակերպման խրախուսման հասցեական քաղաքականության մշակման առաջին քայլ՝ ՀՀ կառավարությունը կարող է մշակել հետազոտությունների և այլ գործիքներ³³: Իրականացվող վիճակագրական տվյալների հավաքագրումը կարող է զուգակցվել նաև ՓՄՁ-ների կարիքների գնահատման ընտրանքային հետազոտություններով, որոնք կարող են ելակետային տվյալներ ծառայել բարեփոխումների ազդեցությունների գնահատման համար: Մյուս կողմից, ոչ համակարգային է իրականացվում է նաև ՓՄՁ ոլորտում իրականացվող բարեփոխումների մշտադիտարկումը և գնահատումը: Բավական է նշել, որ ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը չի ունեցել մոնիթորինգի և գնահատման պլան: Ներկայումս, նախատեսվում է միջազգային դոնոր կազմակերպությունների և խորհրդատուների ներգրավմամբ մշակել և ներդնել մեխանիզմներ ուղղված այս խնդրի լուծմանը:

³³ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.



2.3 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ: ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Գործարար միջավայրի միտումները: Համաձայն Համաշխարհային բանկի «Doing Business» զեկույցի Հայաստանը շարունակաբար առաջընթաց է արձանագրել գործարար միջավայրի բարելավման հարցում և այժմ աշխարհի 190 տնտեսությունների շարքում զբաղեցնում է 41-րդ տեղը³⁴ 2017 թվականի 47-րդ տեղի փոխարեն: «Բիզնեսի վարման դյուրինությամբ» Հայաստանն ունի 75 միավոր՝ առավելագույն 100-ից, և այս ցուցանիշով բարձր է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջին ցուցանիշից, ինչպես նաև մի շարք համադրելի երկրներից, ինչպես օրինակ Ռումինիան է, Յունաստանը և Բուլղարիան, սակայն իր ցուցանիշով հետ է մնում հարևան Վրաստանից³⁵: Բիզնեսի վարման դյուրինությամբ Հայաստանի միջին դասակարգված թիվը 2008-ից 2018 թվականների ընթացքում կազմել է միջինում 45.91՝ իր առավելագույնին հասնելով 2010 թվականին՝ զբաղեցնելով 61-րդ, իսկ նվազագույնին 2014-ին՝ 38-րդ տեղը³⁶: 2018 թվականի զեկույցում Հայաստանը բարելավել է իր դիրքերը երկու ենթացուցանիշներով՝ «Էլեկտրաէներգիայի ապահովում» և «սեփականության գրանցում»: 2019 թվականի զեկույցում Հայաստանը բարելավել է իր դիրքերը 5 ենթացուցանիշների գծով, սակայն մի շարք ենթացուցանիշների գծով դեռևս մնում է խնդրահարույց, ինչպես օրինակ «վճարել հարկերը» (87-րդ տեղ), «շինարարության թույլտվությունների ստացում» (98-րդ տեղ), փոքրամասնություն կազմող ներդրողների պաշտպանություն (51-րդ տեղ), վեճերի լուծում (95-րդ տեղ):

«Բիզնեսի սկսում» ենթացուցանիշով Հայաստանը աշխարհում 8-րդն է և համադրելի երկրներից հետ է մնում միայն Վրաստանից: Բիզնեսի գրանցումը Հայաստանում և՛ տևում է կարճ, և՛ ծախսատար չէ գործարարների համար և իրականացվում է «մեկ պատուհան» սկզբունքով: Կառավարությունը բարելավել է հանրային ծառայությունների թափանցիկությունը՝ ներդնելով Էլեկտրոնային համակարգեր, ներառյալ Էլեկտրոնային կառավարում (e-government) և Էլեկտրոնային ստորագրություն (e-signature) համակարգերը, և մեծ առաջընթաց է ապահովել Էլեկտրոնային գնումների ոլորտում: Վերջին տարեկան զեկույցով Հայաստանը բարելավվել է իր դիրքերը 5 հիմնական կետերով՝ Հայաստանը բիզնեսի գրանցումը հեշտացրել է հնարավորություն տալով բիզնեսին կամավոր ընտրել ավելացած արժեքի հարկի գրանցում: Հայաստանը սահմանել է Էլեկտրականության մատակարարման ցանցին միանալու նոր վերջնաժամկետ, որին պետք է հետևեն մատակարար կազմերպությունը:

Գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններից է Հայաստանում դատական համակարգի անկատարությունը և այս համակարգի նկատմամբ վստահության պակասը: Այս հետազոտական ծրագրի շրջանակներում առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 30%-ը նշել են, որ ունեն որոշակի խնդիրներ կապված դատական համակարգի պաշտպանության հուսալիության հետ, մյուս մասը չեն առանչվել դատական համակարգի հետ: Դատական համակարգի հետ առնչություն ունեցած ՓՄՁ-ների հիմնական մասը նշել է, որ խնդիր ունի կապված դատական համակարգի նկատմամբ վստահության հետ: Որպես խնդիրներ նշվել են նաև դատական գործընթացների չափից դուրս երկար տևողությունը, փաստաբանական որակյալ ծառայությունների հասանելիության խնդիրը, բռնազանձման գործընթացի անհուսալիությունը: Այսինքն, դատական համակարգի հետ որոշակի խնդիրներ ունեն յուրքանչյուր 3 ՓՄՁ-ների մեկը:

³⁴ http://www.worldbank.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2019-report_web-version.pdf

³⁵ <http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf>

³⁶ <http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>



Գործարար միջավայրի վրա ազդեցություն ունի նաև գնաճի մակարդակը: Համաձայն ՆՄԿՁ հարցման՝ հայկական ընկերությունների 40.3%-ը կարծում է, որ գնաճի մակարդակը լուրջ ազդեցություն ունի ֆիրմաների մրցունակության վրա: 24%-ի կարծիքով գնաճը ինչ-որ չափով կարևոր է և միայն 24%-ի կարծեքով կարևոր չէ: 12%-ը չի կարողացել պատասխանել այս հարցին³⁷: Գնաճի հետ մեկտեղ, ընկերությունների մրցունակության վրա ազդող մյուս գործոնը բարձր տոկոսադրույքն է, որը կարևոր են հարցման ենթարկված ընկերությունների 81%-ը: Բարձր տոկոսադրույքը բացասական ազդում է նաև ընկերությունների ներդրումային և ընդլայնման ծրագրերի վրա: Ընկերությունների մեծամասնության համար կարևոր մարտահրավեր է եղել նաև արտարժույթի փոխարժեքի տատանումներն, որն ազդում է ապրանք արտահանելու ընկերությունների որոշման վրա: Այն նաև բացասական ազդանշան է օտարերկրյա ներդրողների համար:

Հարկային վարչարարություն: Համաձայն 2017-2018 թթ Համաշխարհային մրցունակության զեկույցի հարկային դրույքաչափերը, հարկային վարչարարությունը և կոռուպցիան Հայաստանում բիզնեսի վարման գլխավոր խոչընդոտներն են՝ ֆինանսավորման հասանելիության հիմնախնդրից հետո³⁸ (2018թ. դասակարգում): Ըստ Համաշխարհային բանկի «Doing Business» զեկույցի այս ոլորտը Հայաստանում ամենախնդրահարույցներից մեկն է: Համաձայն «Վարել հարկերը» ենթահամաթվի, Հայաստանը զբաղեցնում է 82-րդ տեղը՝ հետ մնալով մի շարք համադրելի երկրներից, ինչպես օրինակ Վրաստանն է, Հունաստանը, Ռումինիան, իսկ միջին ցուցանիշը նվազ է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջին ցուցանիշից³⁹: Այնուամենայնիվ վերջին տարիներին արձանագրվել են որոշակի դրական միտումներ, մասնավորապես 2017 թվականին Հայաստանը բարելավել է տեղական հաշվապահական ծրագրերը կորպորատիվ եկամտային հարկերի և աշխատավարձային հարկերի համար՝ ներառելով հարկային հաշվարկումների լայն ցանկ: Սա հնարավորություն է տվել հաշվապահություն վարողի հաշվապահական ծրագրերը ինտեգրել հարկային մարմինների՝ տվյալների անվտանգ փոխանցման և պահպանման համակարգում⁴⁰:

Հայաստանում բավականին խճճված է հարկային դաշտը, ինչը հնարավորություն չի տալիս սկսնակ կամ գործող բիզնեսին իրականացնել ֆինանսական միջոցների արդյունավետ պլանավորում: Համաձայն այս հետազոտությունում ներգրավված փորձագետների գնահատականների՝ հարկային օրենսգիրքը խճճված և բարդ է անգամ ոլորտային մասնագետների համար, ինչի պատճառով ՓՄՁ-ների համար պարտադիր է դառնում իրավաբանների կամ հաշվապահների մասնագիտացված խորհրդատվությանը դիմելը, որոնք էլ պահանջում են հավելյալ ծախսեր:

Ըստ «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները» զեկույցի՝ ՓՄՁ-ները գտնում են, որ հարկային օրենքներում տեղ գտած ոչ կոնկրետ, երկիմաստ ձևակերպումները և օրենքների հաճախակի փոփոխությունները օրենսդրական հիմնական խոչընդոտ են հանդիսանում բիզնեսի դինամիկ աճի համար⁴¹: Ի դեպ այս խնդիրը արձանագրվել է դեռևս 2007 թվականին իրականացված ՀԳԳՄ վերլուծության շրջանակներում, ինչը նշանակում է, որ այս ոլորտում բարելավումներ չեն արձանագրվել: Չնայած հարկային դաշտում 2014-2015թթ. ընթացքում

³⁷ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.

³⁸ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.

³⁹ <http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf>

⁴⁰ http://www.worldbank.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2019-report_web-version.pdf

⁴¹ «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները», ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մարկրո և միջրո մակարդակներում, սեպտեմբեր 2015



իրականացվել են բարեփոխումներ, սակայն հարկային դաշտը ՓՄՁ-ների համար դեռևս մնում է խոչընդոտող գործոն:

2018 թվականի նոյեմբերի 13-ին ԱԺ լիազումար նիստում 2019 թ. ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ կառավարության կողմից ներկայացվել է հարկային համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները, որով նախատեսվում է ներմուծել «միկրոբիզնես» կատեգորիան և այս կատեգորիայի ներքո մինչև 20-24 մլն շրջանառություն ունեցող բիզնեսին ազատել հարկերից՝ կիրառելով որոշակի սահմանափակումներ և նորմավորումներ ըստ ոլորտների, գոտիականության՝ նախապատվությունը տալով մարզերում ծավալվող տնտեսական գործունեություններին: Քննարկման առարկա է նաև մինչև 3 աշխատող ունեցող «միկրոբիզնեսի» համար եկամտային հարկի այլ ռեժիմի կիրառությունը, որը ամենայն հավանականությամբ կլինի հաստատագրված վճար յուրաքանչյուր աշխատողի համար: Հարկային նոր օրենսգրքով հնարավոր է նախատեսվի նաև եկամտահարկի համահարթեցում՝ սահմանելով 23%: Այս բարեփոխումները ներկայումս ակտիվ քննարկումների փուլում է գտնվում:



ԲԱԺԻՆ 3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԵԶՈ ԵՎ ՄԻԿՐՈ
ՄԻՋԱՎԱՅՐ



3.1 Ձեռնարկություններ ՅԻՄՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ. ՍԿՍՆԱԿ ԲԻԶՆԵՍԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ձեռնարկություններ հիմնելու ընթացակարգերը Հայաստանում բավականին պարզեցված են: Էական բարեփոխումներ են կատարվել գործառնական միջավայրում՝ ընկերությունների գրանցման գործընթացների պարզեցմամբ և Էլեկտրոնային կառավարման ծառայությունների ընդլայնմամբ: Ընկերության «մեկ պատուհանով» գրանցման և Էլեկտրոնային կառավարության ծառայությունների զգալի ընդլայնման արդյունքում կրճատվել են ՓՄՁ սուբյեկտների մուտքի խոչընդոտները և գործառնական ծախսերը:

Սկսնակ բիզնեսին աջակցության կարևորությունը շեշտադրված է Փոքր Բիզնեսի Ակտում⁴² և ՓՄՁ զարգացման ռազմավարությունում: ՓԲԱ 10 ուղղություններից մեկը վերաբերում է «ՓՄՁ և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներին», որով նախատեսվում է հաստատել ՓՄՁ սուբյեկտների կարիքներին արձագանքող պետական կառավարման գործիքներ: ՓՄՁ զարգացման ռազմավարական նպատակ 7-ը նախատեսում է սկսնակ գործարարներին աջակցության տրամադրում: Մասնավորապես սկսնակ գործարարներին աջակցության խթանումը կարևորվում է այն առումով, որ վերջիններս չունեն բավարար գիտելիքներ և փորձ, հաճախ չեն տիրապետում բավարար ֆինանսական միջոցների, ուստի պետության աջակցությունը կարող է զգալի դեր ունենալ նրանց կայացման և հետագա զարգացման համար: Սկսնակ գործարարներին աջակցությունը կարևորվում է նաև նոր աշխատատեղերի ստեղծման, գործազրկության մակարդակի կրճատման առումով:

Սկսնակ ձեռնարկություններին պետական օժանդակություն տրամադրվում է հիմնականում ՓՄՁ ՉԱԿ-ի միջոցով, տրամադրվող աջակցությունը լրացնում է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը՝ թիրախավորով առավելապես ՏՏ ոլորտի սկսնակներին ու ձեռնարկություններին: Նորաստեղծ ընկերություններին և գյուղմթերք արտադրողներ ՓՄՁ սուբյեկտների համար գործում են բանկային ֆինանսավորման հասանելիության դյուրացմանն ուղղված պետական ծրագրեր: ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերն օժանդակում են ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ ձեռնարկություններին՝ վարկային երաշխավորությունների և տոկոսադրույքի վերին սահմանի միջոցով:

Համաձայն փորձագիտական հարցազրույցների արդյունքների՝ ձեռնարկություն հիմնելու և գրանցելու ընթացակարգերը Հայաստանում բավականին պարզեցված և մատչելի են. ՓՄՁ-ները գրանցման ընթացքում խնդիրներ և դժվարություններ չեն ունենում, կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի են հասցված: Իրավաբանական

ՓՄՁ գրանցման գործընթացը պարզ է, թափանցիկ և արագ:

Այնուամենայնիվ, իրականացված բարեփոխումների հիմնական շահառուները մայրաքաղաքն ու մի քանի քաղաքային շրջաններն են:

Սկսնակ գործարարներն ունեն բիզնեսի կազմակերպարական ձևի ճիշտ ընտրության հարցում խորհրդատվության կարիք:

Սկսնակ գործարարներն իրազեկված չեն, թե ինչ պետք է իրականացնեն բիզնեսի գրանցումից հետո և ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն հարկային մարմին:

Սկսնակ գործարարներն ունեն ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության, վարկային և գրանտային ծրագրերի մասին իրազեկվածության կարիք:

⁴²Տես ավելին՝ http://www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Armenia_SME_PI_Country_chapter_ARM.pdf




անձանց գրանցման ռեգիստրը փորձագետների կողմից համարվել է կայացած: Էլեկտրոնային համակարգը մեկ պատուհանի կիրառման միջոցով առավել կրճատել է իրավաբանական անձանց գրանցման տևողությունը: Ռեգիստրի կայքում բերված են նաև բիզնեսների գրանցման նմուշային փաստաթղթեր, ինչն օգնում է անհրաժեշտ փաստաթղթերը արագ նախապատրաստելուն: Սակայն նկատենք, որ իրականացված բարեփոխումների հիմնական **շահառուները մայրաքաղաքն ու մի քանի քաղաքային շրջաններն են:** Հայաստանի մարզերում կազմակերպություն գրանցելու համար դեռևս խոչընդոտներ են հանդիսանում «մեկ պատուհանի» բացակայությունը և ինտերնետի սահմանափակ հասանելիությունն ու կիրառելիությունը: Մյուս կողմից, գործարարությամբ զբաղվելու ցանկություն ունեցող մարդիկ իրազեկված չեն այն մասին, որ ձեռնարկություն հիմնելու ընթացակարգերը պարզեցված են և այս առումով իրազեկվածության բարձրացումը կխրախուսի ձեռներեցությամբ զբաղվել ցանկացող մարդկանց թիվը:

Համաձայն հետազոտության արդյունքների սկսնակ գործարարներն ունեն կազմակերպատիրավական տարբեր ձևերի վերաբերյալ իրազեկվածության պակաս և չեն կողմնորոշվում, թե կազմակերպատիրավական ձևերից որն է առավել նախընտրելի և նպատակահարմար ընտրել (անհատ ձեռներեց, ՍՊԸ, ընտանեկան ձեռնարկություն և այլն): Առաջարկվում է ԻԱ գրանցման փուլի համար միջոցներ ձեռնարկել բարձրացնելու մարդկանց իրազեկվածությունը տարբեր կազմակերպատիրավական ձևերի վերաբերյալ, մասնավորապես թե ինչ առավելություններ և թերություններ ունեն տարբեր կազմակերպատիրավական ձևերը և որ ձևին պետք է նախապատվություն տա սկսնակ գործարարը՝ ելնելով նախատեսված գործունեության ծավալներից և բնույթից: Այսպիսի իրազեկումը կարող է իրականացվել տեղեկատվական թերթիկների, առցանց հասանելի նյութերի, սոցիալական հոլովակների, ինչպես նաև առցանց և ոչ առցանց խորհրդատվական հարթակների միջոցով:

Ի տարբերություն գրանցման գործընթացի, որը պարզ և մատչելի է ՓՄՁ-ների համար, խնդրահարույց է գրանցմանը հաջորդող փուլերը, որը կապված է ՊԵԿ ներկայացվող հայտերի և փաստաթղթերի հետ: Համաձայն փորձագետների՝ սկսնակ գործարարների հիմնական մասը տեղյակ չէ, թե ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնի հարկային մարմինն և ինչ ժամկետներում, ինչի հետևանքով կարող է հայտնվել ոչ նպաստավոր հարկման դաշտում, ինչն էլ հետագայում հարկային մարմնի հետ երկկողմանի անհամաձայնությունների ու կոնֆլիկտային իրավիճակի պատճառ կարող է դառնալ: Այս փուլում է, որ սկսնակ բիզնեսն ունենում է փորձառու իրավաբանի ու հաշվապահի խորհրդատվության կարիք: Փորձագետները սկսնակ գործարարներին ՊԵԿ կողմից իրականացվող Էլեկտրոնային նամակի միջոցով ծանուցումը համարում են ոչ արդյունավետ: Պաշտոնական կայք էջերում չկա մատչելի և պարզ տեղեկատվություն այն մասին, թե ինչ պետք է անի սկսնակ գործարարը բիզնեսը գրանցելուց հետո: ՊԵԿ թե՛ գծի միջոցով հնարավոր է ստանալ տեղեկատվություն այս մասին, սակայն թե՛ գծի առկայության մասին տեղեկատվությունը նույնպես տարածված չէ, և այս մասին իրազեկված են հիմնականում միայն հաշվապահները. ձեռնարկատերերը՝ հատկապես նոր գրանցվող, իրազեկված չեն այս մասին: Փորձագետները նաև նշել են, որ պետական ռեգիստրների որոշ գրասենյակներում այս մասին իրազեկում իրականացվում է աշխատակիցների կողմից:


Այս հետազոտական ծրագրի շրջանակներում իրականացված առցանց հարցմանը մասնակցած 331 ՓՄՁ-ներից 108-ը գրանցված են եղել 2016-ից 2018թթ. ընթացքում: Այս ՓՄՁ-ների 6%-ը նշել է, որ ձեռնարկության հիմնադրման և գործունեության կազմակերպման վերաբերյալ առկա տեղեկատվությունն իրենց համար «ընդհանրապես հեշտ հասանելի» չի եղել, 32%-ի կարծիքով տեղեկատվությունը «ավելի շուտ հեշտ հասանելի» չի եղել: 37%-ը համարում է, որ առկա տեղեկատվությունը եղել է «ավելի շուտ հասանելի», իսկ 25%-ի կարծիքով՝ «լիովին հասանելի» (Գրաֆիկ):





Գրաֆիկ 11. Որքանո՞վ հեշտ հասանելի էր Ձեզ համար ձեռնարկության հիմնադրման և գործունեության կազմակերպման վերաբերյալ առկա տեղեկատվությունը. տրված պատասխանների բաշխումը ըստ ՓՄՁ-ների հիմնադրման ժամանակահատվածի

Հարցին, թե արդյոք ունեցել եք դժվարություններ բիզնեսի գրանցման ընթացքում տեղեկատվության ստացման հետ, հարցմանը մասնակցած ՓՄՁ ներկայացուցիչների հիմնական մասն արձագանքել է, որ որևէ դժվարություն չեն ունեցել և այս պատասխանն առավել հաճախ հնչել է 2016-ից 2017 թթ. ընթացքում գրանցված ՓՄՁ-ների կողմից: 2016-ից 2018թթ. ընթացքում գրանցված ՓՄՁ-ների 42%-ը նշել է, որ տեղեկատվության ստացման հետ կապված որևէ դժվարություն չի ունեցել, 19%-ը՝ ավելի շուտ չեն ունեցել դժվարություններ: ՓՄՁ-ների 27%-ի կողմից նշվել է, որ նարև «ավելի շուտ ունեցել են դժվարություններ», մինչդեռ հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 12%-ը նշել են, որ ունեցել են շատ դժվարություններ (Գրաֆիկ 11):



Գրաֆիկ 12. Արդյոք բիզնեսի գրանցման գործընթացում ունեցել եք դժվարություններ. տրված պատասխանների բաշխումը ըստ ՓՄՁ-ների հիմնադրման ժամանակահատվածի

Ինչ վերաբերում է ՓՄՁ հիմնադրման և գրանցման վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրներին, ապա նկատվում է տեղեկատվության ստացման աղբյուրների կառուցվածքի փոփոխություն տարբեր ժամանակահատվածներում գնանցված ՓՄՁ-ների համար: Մինչև 2005 թվականը գրանցված ՓՄՁ-ների դեպքում առավել հաճախ նշվել է «ունեմ համապատասխան կրթություն և կարիք չունեի հավելյալ տեղեկատվություն ստանալու» տարբերակը, ինչը թերևս նշանակում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ առավել շատ փորձ են կատարել զբաղվել հենց այդ մասնագիտությունն ունեցող մարդիկ: Այս տարիներին գրանցված ՓՄՁ-ները նաև նշել են, որ որպես տեղեկատվության ստացման աղբյուր խորհուրդներ են հարցրել այլ ձեռնարկատերերից կամ դիմել են ընտանիքի անդամների, բարեկամների օգնությանը: 2005 թվականից սկսած նկատվել է, որ տեղեկատվության ստացման աղբյուրներն առավել բազմազան են դառնում: Առավել շատ ձեռնարկատերեր են տեղեկատվություն փնտրել օնլայն հարթակներում կամ դիմել են մասնագիտացված կազմակերպությունների օգնությանը: Այս ՓՄՁ-ների մի մասը նշել է, որ ստացել է խորհրդատվություն ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից, որոշ մասն էլ տեղեկատվություն է փնտրել ՓՄՁ ՉԱԿ-ի կայքում, եղել են նաև պետական այլ աջակցությամբ վերապատրաստումներ անցած ՓՄՁ-ներ:

Տեղեկատվության ստացման աղբյուրներ	մինչ 2005 թվականը	2005-2010 թթ. ընթացքում	2010-2015 թթ. ընթացքում	2016-2018թթ. ընթացքում
Խորհուրդներ են հարցրել այլ ձեռնարկատերերից	17%	27%	22%	21%
Դիմել են մասնագիտացված կազմակերպությունների օգնությանը	3%	2%	5%	10%
Տեղեկատվություն են փնտրել օնլայն հարթակներում	6%	17%	19%	22%
Ստացել են խորհրդատվություն ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից	3%	2%	13%	8%
Տեղեկատվություն են փնտրել ՓՄՁ ՉԱԿ կայքում	3%	4%	1%	3%
Պետական այլ աջակցությամբ անցել են վերապատրաստումներ	3%	0%	2%	2%
Տեղեկացել են ընտանիքի անդամներից, բարեկամներից	14%	27%	15%	11%
Ունեմ համապատասխան կրթություն և կարիք չունեի հավելյալ տեղեկատվություն ստանալու	53%	19%	24%	22%
Մասնակցել են վերապատրաստումներ, դասընթացների	0%	2%	0%	2%

Աղյուսակ 4. Տեղեկատվության ստացման աղբյուրները ՓՄՁ-ների շրջանում ըստ ՓՄՁ-ների գրանցման ժամանակահատվածի

Սկսնակ գործարարները տեղյակ չեն նաև ՓՄՁ ՉԱԿ-ի գործունեության մասին, եթե նախկինում չեն առնչվել այս կառույցի հետ: Մի կողմից ՓՄՁ ՉԱԿ-ը մարզերում ներկայացված է մեկ աշխատողով և մարզի մեկ քաղաքում, մյուս կողմից վերջինիս գործունեության վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվում, ուստի սկսնակ գործարարները հիմնականում իրազեկված չեն նման ծառայության հասանելիության վերաբերյալ: Այսպիսի դեպքերում սկսնակ գործարարները տեղեկատվություն հիմնականում փորձում են ստանալ այլ աղբյուրներից:

Փորձագետները նաև նշել են, որ սկսնակ բիզնեսի աջակցության ծրագրերի թիրախայնության և արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտություն կա **ճշգրտել և հստակեցնել**



«սկսնակ բիզնեսի» սահմանումը: Փոքր բիզնեսի ակտով առաջարկվում է կիրառել ՓՄՁ սուբյեկտների դասակարգման տարբեր կատեգորիաների և խմբերի, այդ թվում՝ հատուկ թիրախային խմբեր՝ նախասկսնակներ, սկսնակներ, աճ և միջազգային ուսուցում⁴³: Դեռևս չգրանցված բիզնեսն ունի խիստ տեղեկատվության կարիք, սակայն ձեռներեցությամբ զբաղվելու ցանկություն ունեցող այսպիսի անձանց նախատեսվող ծրագրերում թիրախավորելը բավականին դժվար է ի տարբերություն արդեն իսկ գրանցված բիզնեսի, որի դեպքում ՓՄՁ ՁԱԿ-ի ներկայացուցիչները հնարավորություն ունեն կապ հաստատել նրանց հետ և առաջարկել իրենց ծառայությունները: Սկսնակ գործարարներն ունեն վարկային գործիքների և ռիսկերի վերաբերյալ ինֆորմացիայի մատչելիության խնդիր, ինչպես նաև ՓՄՁ ՁԱԿ կամ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից իրականացվող վարկային աջակցության ծրագրերի մասին տեղեկատվության ստացման կարիք:

Սկսնակ գործարարներին աջակցության համար փորձագետներն առաջարկել են ուժեղացնել ոլորտային ասոցիացիաները, ինչը կնպաստի վերջիններին կողմից գործարարներին մատչելի և որակյալ ծառայությունների մատուցմանը: Ի տարբերություն թեմատիկ կարճաժամկետ դասընթացների և մեկանգամյա խորհրդատվության՝ ոլորտային ասոցիացիաները կարող են բիզնեսին տրամադրել համալիր ծառայություններ՝ մարքեթինգային, հարկային, իրավաբանական և այլ ոլորտներում, հնարավորություն ստեղծեն գիտելիքների ու կարողությունների ուժեղացման, ստեղծեն վաճառքի ու արտահանման ընդհանուր հարթակներ: Սկսնակ գործարարը կարող է բիզնեսի վարման ամենասկզբում անդամագրվել որևէ ասոցիացիայի (նույնիսկ դեռևս չգրանցված), իսկ վերջինս կօգնի սկսնակ բիզնեսին ոտքի կանգնել:

Փորձագետները նաև նշել են, որ անհրաժեշտ է ընդլայնել ստարտ-ափերին տրամադրվող գրանտային և վենչուրային ֆինանսավորման հնարավորությունները, քանի որ խիստ սահմանափակ են սկսնակ բիզնեսի ֆինանսավորման հնարավորությունները: 2013 թվականին Հայաստանի առաջին վենչուրային հիմնադրամը՝ Granatus Ventures-ը, սկսեց ներդրումներ կատարել SS ոլորտի սկսնակ ձեռնարկություններում: Չկա բիզնես «իրեշտակների» ինստիտուցիոնալ ցանց, սակայն կան ներդրողներ, մասնավորապես, հայկական սփյուռքից⁴⁴:

⁴³ Տես ավելին՝ http://www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Armenia_SME_PI_Country_chapter_ARM.pdf

⁴⁴ Տես ավելին՝ www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Armenia_SME_PI_Country_chapter_ARM.pdf



3.2 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ձեռնարկությունների զարգացման առանցքային գործոններից մեկը մրցունակ և մատչելի ֆինանսական ծառայությունների առկայությունն է: Այս գործոնն առանցքային նշանակություն ունի երկրում առկա բոլոր ձեռնարկությունների համար՝ անկախ չափերից, տեղակայման վայրից, գործունեության բնույթից: Ֆինանսական միջոցների մատչելիությունը վերաբերում է ոչ միայն «փողի արժեքին» կամ տոկոսադրույքին, այլ նաև այնպիսի գործոններին ինչպիսիք են գրավը, վարկի տրամադրման ժամանակահատվածը, սպասարկման վճարները և միջնորդավճարները, երախավորության պահանջը և այլն: Կարևոր է ֆինանսական շուկայում առկա պրոդուկտների բազմազանությունը, որը հնարավորություն կարող է տալ առավել թիրախային և նպատակահարմար դարձնել ՓՄՁ-ների վարկավորումը:

Ֆինանսական ռեսուրսներին հասանելիության դժվարությունները ՓՄՁ զարգացման հիմնական և ամենակարևոր խոչընդոտներից մեկն է, որը բազմիցս արտացոլվել է տարբեր հետազոտություններում և զեկույցներում: Համաձայն 2017-2018 թթ. Համաշխարհային մրցունակության զեկույցի ֆինանսավորման հասանելիությունը համարվում է բիզնեսի վարման առաջին խոչընդոտը, որին հետևում են հարկային դրույքաչափերը, հարկային վարչարարությունը և կոռուպցիան⁴⁵: Ըստ «Ֆինանսական համակարգի զարգացվածության» ենթահամաթվի Հայաստանը զբաղեցնում է 78-րդ տեղը աշխարհի 137 երկրների շարքում, առավել բացասական արդյունքներ գրանցվելով ֆինանսական ծառայությունների հասանելիություն, ֆինանսական ծառայությունների մատչելիություն, տեղական արժեթղթերի միջոցով վարկավորման ցուցանիշներով: 2018 թվականի դասակարգմամբ «Ֆինանսական համակարգ»⁴⁶ ենթահամաթվով Հայաստանը զբաղեցնում է 87-րդ տեղը 140 երկրների շարքում: Այս ցուցանիշով Հայաստանը մեկ դիրքով առաջ է հարևան Վրաստանից (88-րդ տեղը), իսկ Ադրբեջանն այս ցուցանիշով զբաղեցնում է 96-րդ տեղը⁴⁷: Համաձայն «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույցի՝ ֆինանսավորման համապատասխան աղբյուր գտնելը Հայաստանում բիզնես վարելու հիմնական խնդիրն է: Բարձր են վարկերի տոկոսադրույքները (մոտ 15-25% փաստացի տոկոսադրույք), ոլորտային վարկավորման հնարավորությունները

Ֆինանսական ռեսուրսներին հասանելիության դժվարությունները ՓՄՁ զարգացման հիմնական և ամենակարևոր խոչընդոտներից մեկն է

ՓՄՁ-ների 42%-ն ունեն ֆինանսական ռեսուրսների ներգրավման խիստ կարիք, 26%-ը՝ ավելի շուտ կարիք ունեն ներգրավելու ֆինանսական միջոցներ

ՓՄՁ-ների գերակշիռ մասը բավարարված չէ առաջարկվող վարկավորման պայմաններով: Հարցման ենթարկված ՓՄՁ-ների 34%-ը ընդհանրապես բավարարված չեն շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման պայմաններով, 30%-ը՝ ավելի շուտ բավարարված չեն

Ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և հավասարությունը խնդրահարույց է

⁴⁵ <http://www3.weforum.org/docs/GCR20172018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2017%E2%80%932018.pdf>

⁴⁶ Խորությունը, մասնավորապես, վարկի, սեփական կապիտալի, պարտքի, ապահովագրության եւ այլ ֆինանսական պրոդուկտների առկայությունը եւ կայունությունը, մասնավորապես, ֆինանսական համակարգի չափազանց ռիսկային վարքագծի մեղմացումը

⁴⁷ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/#series=GCI4.A.02>



սահմանափակ են, գրավի պահանջները մեծ խնդիր են առաջացնում ձեռնարկատերերի համար⁴⁸:

Հայաստանում բանկային ծառայություններ են մատուցում 17 ընկերություններ, գործում են 39 ունիվերսալ վարկային կազմակերպություններ (ՈՒՎԿ), 10 ներդրումային ընկերություններ, 3 ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր: Գործում են նաև 9 ապահովագրական ընկերություններ: Բանկային ոլորտը այսօր համարվում է հայաստանյան տնտեսության ամենակայուն ոլորտներից մեկը: Ֆինանսական շուկայում առավել մեծ կշիռ ունեն առևտրային բանկերը, որոնց բաժին է հասնում ֆինանսական շուկայում տրամադրվող վարկային միջոցների մոտ 90%-ը⁴⁹: Ոչ բանկային ֆինանսական ձեռնարկությունները տիրապետում են ֆինանսական ոլորտի ակտիվների համեմատաբար համեստ՝ 8% մասնաբաժնին, որին հետևում են ապահովագրական ընկերությունները՝ 1.1% մասնաբաժնով⁵⁰: Համաձայն ԵՆԲ վարկավորման հետազոտության զեկույցի⁵¹ (2016թ.) բանկերը հանդիսանում են ՓՄՁ սեկտորի ֆինանսավորման հիմնական աղբյուրը, իսկ ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է վարկերի միջոցով: Ոչ բանկային ֆինանսավորման շուկաները թերզարգացած են: Հայաստանում բավականին բարձր է «Ներքին վարկ մասնավոր ոլորտին»⁵² (% ՀՆԱ-ի) ցուցանիշը: Այս ցուցանիշով Հայաստանն առաջ է մի շարք համադրելի երկրներից, ինչպես օրինակ Վրաստանն է, Լատվիան, Մակեդոնիան և այլն:

ԵՆԲ վարկային հետազոտության արդյունքների գրեթե բոլոր բանկերը իրականացնում են ՓՄՁ սեկտորի վարկավորում և տեղական արժույթով և օտարերկրյա: Բանկերի 90 տոկոսն առաջարկում է ոչ միայն վարկային պրոդուկտներ, այլև ՓՄՁ սեկտորի համար առևտրի ֆինանսավորման գործիքներ: Սակայն այս պրոդուկտները մեծապես տարածված են կապված վերջիններս առավել բարդ լինելու և երկրում ֆինանսական միջին գրագիտության ցածր աստիճանի հետ: Բանկերի շուրջ 60 տոկոսը նշել են, որ այսպիսի պրոդուկտների վերաբերյալ ցածր իրազեկվածությունը և գիտելիքները միջին կամ նշանակալի ձևով խոչընդոտում է առևտրային ֆինանսական շուկայի զարգացմանը: Այս ոլորտն ունի զրգացման պոտենցիալ հաշվի առնելով որ ՓՄՁ սեկտորի 6-ից 7 տոկոսը ներգրավված է արտահանման մեջ և ՓՄՁ արտադրանքն ունի արտահանման ներուժ:

ՓՄՁ սեկտորին վարկային միջոցներն առաջարկվում են և տեղական արժույթով և օտարերկրյա: Սակայն այն դեպքում երբ օտարերկրյա արժույթով վարկային միջոցները հիմնականում առաջարկվում են կարճաժամկետ և երկարաժամկետ տարբերակներով, տեղական արժույթով վարկերն առավելապես սահմանափակ են: Բանկերի 50 տոկոսը նշել է, որ տեղական արժույթով վարկերը հազվադեպ են տրամադրվում երկարաժամկետ տարբերակով:

Միջինում, ՓՄՁ պորտֆելի 74 տոկոսը երկարաժամկետ է (մեկ տարուց ավել), որում մեծ մասնաբաժին են կազմում օտարերկրյա արժույթով վարկերը: Երկարաժամկետ վարկերը հիմնականում կենտրոնացած են երկարաժամկետ հատված ենթադրող ժամկետի առավել նվազ

⁴⁸ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.

⁴⁹ Աղբյուր՝ ՀՀ Կենտրոնական բանկ, www.cba.am

⁵⁰ http://www.eib.org/attachments/efs/economic_report_neighbourhood_sme_financing_armenia_en.pdf

⁵¹ http://www.eib.org/attachments/efs/economic_report_neighbourhood_sme_financing_armenia_en.pdf

⁵² Մասնավոր հատվածին հատկացվող ֆինանսական ռեսուրսների (վարկեր, ոչ բաժնային արժեթղթերի գնում, առևտրային վարկեր, այլ դեբիտորական վարկեր և այլն)՝ համամասնությունը ՀՆԱ-ի նկատմամբ



հատվածում՝ գլխավորապես 3 տարի մարման ժամկետի հատվածում: Շատ քիչ վարկատեսակներ են նախատեսում 5 տարուց ավել մարման ժամկետ:

Ֆինանսավորման հնարավորությունները ՓՄՁ տեսանկյունից: Համաձայն ԵՆԲ վարկավորման հետազոտության զեկույցի Հայաստանում բանկային սեկտորի ծառայություններից օգտվում են փոքր և միջին ձեռնարկությունների 90 տոկոսը՝ մասնավորապես հաշիվների սպասարկման և խնայողությունների համար: Այնուամենայնիվ, փոքր ձեռնարկությունների 31 իսկ միջին ձեռնարկությունների միայն 55 տոկոսն են օգտվում վարկերից կամ վարկային գծերից: Սակայն նկատենք, որ վարկ ունեցող և վարկի համար դիմած ՓՄՁ-ների մասնաբաժինը դեռևս իրական պատկեր չի տալիս ՓՄՁ ոլորտում առկա ֆինանսական ռեսուրսների պահանջարկի վերաբերյալ, քանի որ մեծ թվով ՓՄՁ-ներ խուսափում են դիմել վարկավորման համար: Վարկավորման համար չդիմելու պատճառները բազմազան են, որոնց թվում են վարկավորման բարձր ընթացակարգը, որը զուգակցվում է վարկի բարձր տոկոսադրույթով: Այս իսկ պատճառով ՓՄՁ-ներն առավել հաճախ դիմում են ներքին ֆինանսավորման աղբյուրներին: Համաձայն ԵՆԲ գնահատման, ՓՄՁ սեկտորում անշարժ գույքի և աշխատանքային կապիտալի մեջ ներդրումների 70 տոկոսն իրականացվել է ներքին միջոցների հաշվին: Սրան հետևում են բանկային միջոցներով իրականացված ներդրումները: Համաձայն համադրելի երկրների հետ համեմատության՝ Հայաստանյան ՓՄՁ-ներն առավել հաճախ կիրառում են բանկային միջոցները ֆիրանսավորելու աշխատանքային կապիտալը, և ավելի քիչ են կիրառում այս միջոցները անշարժ գույքի մեջ ներդրում կատարելու համար:


Այս տվյալներն են հաստատում նաև ՆՄԿՁ հարցման արդյունքները (2015թ.), որոնց համաձայն Հայաստանյան ֆիրմաների մեծ մասն ապավինում են ինքնաֆինանսավորմանը: Այս կարծիքն են հայտնել հարցման ենթարկված ձեռնարկությունների շուրջ 80%-ը: Շատ ընկերությունների համար ֆինանսավորման աղբյուրներն իրենց սեփական միջոցներն են կամ անհատական ներդրողները: Ձեռնարկությունների շուրջ 50%-ը որպես ֆինանսավորման արտաքին աղբյուր նշել են բանկերը, այնուհետև վարկային միությունները և հաճախորդների կանխավճարները:

Ինչպես արդեն նշվեց, ՓՄՁ-ներից շատերը խուսափում են դիմել վարկ ստանալու համար բարձր տոկոսադրույթի և բյուրոկրատական ձգձգված ընթացակարգերի պատճառով⁵³: Բանկերից շատերը ներկայացրել են, որ ՓՄՁ-ներն ունենում են դժվարություններ կապված գրավադրման պահանջների կատարման հետ, քանի որ որպես գրավադրման հիմնական առարկա պահանջվում է անշարժ գույք, այնինչ ՓՄՁ-ները որպես սեփականություն հիմնականում ունենում են շարժական գույք: Մասնավոր կապիտալի և վենչուրային կապիտալի շուկաները դեռևս սաղմնային վիճակում են: Առանձնահատուկ խնդիր է ստարտ-ափերին և ձեռնարկությունների նախասկզբնական գործառնության փուլերում ֆինանսավորման ապահովումը: Թերզարգացած է նաև լիզինգային ոլորտը, թեև այս ոլորտը շարունակական բարելավում է արձանագրում: Վարկի երաշխավորության սխեմաներ շուկայում առկա են, սակայն առանձնահատուկ տարածված չեն: առկա են վարչարարական խնդիրներ, որոնք խոչընդոտում են այսպիսի սխեմաների ամբողջական կիրառությունը, նույնիսկ եթե ծրագրերը աջակցություն են ստացել միջազգային կազմակերպությունների կողմից:

⁵³ http://www.eib.org/attachments/efs/economic_report_neighbourhood_sme_financing_armenia_en.pdf




Այս հետազոտական ծրագրի շրջանակներում առցանց հարցմանը մասնակցած 331 ՓՄՁ-ների **42%-ը նշել է, որ ունեն ֆինանսական ռեսուրսների ներգրավման խիստ կարիք, 26%-ը՝ ավելի շուտ կարիք ունեն ներգրավելու ֆինանսական միջոցներ**: ՓՄՁ-ների 25%-ը ֆինանսական ռեսուրսների ներգրավման կարիք չունեն: Այս հարցին դժվարացել են պատասխանել ՓՄՁ-ների 7%-ը: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ հարցման ենթարկված ՓՄՁ-ների **68%-ն ունի ֆինանսական ռեսուրսների ներգրավման կարիք**: Նշենք, որ վարկավորված/վարկավորման կարիք ունեցող ՓՄՁ-ների կազմը գրեթե նույնն է մինչև 100 մլն ՀՀ դրամ և 100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓՄՁ-ների համար (Գրաֆիկ 13):



Գրաֆիկ 13. ՓՄՁ-ների վարկային միջոցների ներգրավման կարիքն ըստ ՓՄՁ-ների տարեկան շրջանառության ծավալների


Հետազոտության իրականացման պահին վարկ ունեցել են հարցման ենթարկված ՓՄՁ-ների **48%-ը**: Այս ՓՄՁ-ների միայն 36%-ն է նշել, որ անհրաժեշտության դեպքում կարող է վարկավորման միջոցով ներգրավվել լրացուցիչ ֆինանսական միջոցներ, իսկ 64%-ը հասել է վարկավորման սահմանաչափին և/կամ այլ պատճառներով պայմանավորված չի կարող ներգրավել լրացուցիչ վարկային միջոցներ: Մինչև 100 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓՄՁ-ների միայն 32%-ը անհրաժեշտության դեպքում կարող է վարկավորման միջոցով ներգրավվել լրացուցիչ ֆինանսական միջոցներ, 100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ ՓՄՁ-ների համար համար այս ցուցանիշը հասնում է մինչև 61%-ի:





Գրաֆիկ 14. Վարկ ունեցող ՓՄՁ-ների լրացուցիչ վարկային միջոցների ներգրավման հնարավորությունն ըստ ՓՄՁ-ների տարեկան շրջանառության ծավալների

ՓՄՁ-ների **52%-ը** հետազոտության իրականացման պահին գործող վարկ չի ունեցել, սակայն վերջիններիս կազմում 64%-ն ունի լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման կարիք, ընդ որում այս ցուցանիշն առավել բարձր է 100մլն-ից 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓՄՁ-ների համար՝ հասնելով 74%-ի: Վարկավորման կարիք չունեն հարցման ենթարկված ՓՄՁ-ների **18%-ը**:



Գրաֆիկ 15. Վարկ ունեցող ՓՄՁ-ներն ըստ վարկավորման կարիքի և ՓՄՁ-ների տարեկան շրջանառության ծավալների

Վարկավորված են 2016-ից 2018 թթ. ընթացքում հիմնադրված ՓՄՁ-ների 44%-ը, որը շատ մոտ է բոլոր ՓՄՁ-ների վարկավորման մասնաբաժնի ցուցանիշին: Այս ժամանակահատվածում հիմնադրված ՓՄՁ-ների 38%-ը չունի գործող վարկ, սակայն ունի լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման կարիք: Նոր ստեղծված ՓՄՁ-ների միայն 17%-ը չունի վարկավորման կարիք: Ըստ ՓՄՁ-ների հիմնադրման տարեթվի փոխվում է վարկավորված/ֆինանսական ռեսուրսների կարգ ունեցող/վարկավորման կարիք չունեցող ՓՄՁ-ների տոկոսային հարաբերակցությունը: Առավել վաղ հիմնադրված ՓՄՁ-ների առավել մեծ մասնաբաժինն է վարկավորված և առավել մեծ մասնաբաժինը չունի վարկային միջոցների ներգրավման



կարիք՝ ի համեմատություն նոր ստեղծած բիզնեսի, ինչը թերևս նշանակում է, որ այս բիզնեսը կարողացել է օգտվել ֆինանսական շուկայի ընձեռած հնարավորություններից (Աղյուսակ 5):

Կարգավիճակ ըստ վարկավորման	մինչ 2005 թվականը	2005-2010 թթ. ընթացքում	2011 -2015 թթ. ընթացքում	2016-2018 թթ. ընթացքում
Ունեմ վարկ	50%	52%	49%	44%
Չունեմ վարկ, բայց ունեմ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման կարիք	27%	31%	32%	38%
Չունեմ վարկավորման կարիք	23%	17%	19%	17%

Աղյուսակ 5. ՓՄՁ-ների ըստ վարկավորման կարիքի և հիմնադրման տարեթվի


ՓՄՁ-ների գերակշիռ մասը բավարարված չէ առաջարկվող վարկավորման պայմաններով: Հարցման ենթարկված ՓՄՁ-ների **34%-ը** ընդհանրապես բավարարված չեն շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման պայմաններով, **30%-ը**՝ ավելի շուտ բավարարված չեն: ՓՄՁ-ների 17%-ը նշել են, որ ավելի շուտ բավարարված են վարկավորման պայմաններով, մինչդեռ միայն 2%-ն է վարկավորման պայմանները լիովին բավարար համարել: ՓՄՁ-ների 17%-ը ծանոթ չէ վարկավորման պայմաններին: Վարկավորման պայմաններից առավել դժգոհ են մինչև 100 մլն ՀՀ դրամ և 100մլն-ից 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓՄՁ-ները (Աղյուսակ 5):

Վարկավորման պայմաններից բավարարվածություն	Մինչև 100 մլն ՀՀ դրամ	100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ	500 մլն-ից 1 500 մլն ՀՀ դրամ
Ընդհանրապես բավարարված չեմ	43%	29%	20%
Ավելի շուտ բավարարված չեմ	36%	45%	20%
Ավելի շուտ բավարարված եմ	19%	23%	60%
Լիովին բավարարված եմ	3%	3%	0%
Ընդամենը	100%	100%	100%

Աղյուսակ 6. ՓՄՁ-ների՝ վարկավորման պայմաններից բավարարվածությունն ըստ ՓՄՁ-ների շրջանառության ծավալների

Վարկավորման տարբեր բաղադրիչների գնահատման արդյունքը ցույց է տվել, որ առավել բացասական են գնահատվել վարկի տոկոսադրույքի և այլ միջնորդավճարների, գրավի վերաբերյալ պահանջների (գրավի գնահատում, գրավ/վարկ հարաբերակցություն), երաշխավորներ ներկայացնելու պահանջի և երաշխավորների թվի, երաշխավորի գույքի և եկամտի վերաբերյալ պահանջների պայմանները:





Գրաֆիկ 16. Վարկավորման տարբեր բաղադրիչներից ՓՄՁ-ների բավարարվածությունը

Ֆինանսավորմանը խոչընդոտող գործոնները ՓՄՁ-ների վարկունակությունը:

Ընդհանուր առմամբ, վարկի մերժման մասնաբաժինը Հայաստանում բավականին ցածր է: Համաձայն ԵՆԲ կողմից իրականացված վարկավորման հետազոտության հարցմանը մասնակցած բանկերի 10 տոկոսը նշել են, որ հաճախ են մերժում վարկային հայտերը, 10 տոկոսը, որ հայտերը մերժում են հազվագյուտ դեպքում, իսկ մնացած 80 տոկոսը՝ մերժում են երբեմն-երբեմն կախված դեպքից: Սա վկայում է, որ վարկերի հայտերի մերժումները բավականին ցածր են, սակայն ինքն-ընտրությունը տեղի է ունենում ՓՄՁ-ների շրջանում, ովքեր արդեն իսկ կանխագուշակում են վարկավորման դիմելու նպատակահարմարության վերաբերյալ: Ուստի մերժումների այս ցուցանիշները իրական պատկեր չեն տալիս:

Համաձայն ԵՆԲ Վարկավորման հետազոտության (2016թ.) ՓՄՁ-ների վարկավորման դժվարությունները կապված են իմ շարք նշանակալի խոչընդոտների հետ, որոնք են՝ վարկունակությունը և/կամ լավ վարկային պատմության բացակայությունը, բիզնես պլանի մշակելու կարողությունների պակասը (ֆինանսավորում պահանջող բիզնեսի կենսունակության և իրագործելության պատշաճ ներկայացման դժվարություններ), համապատասխան գրավի բացակայություն (գրավի արժեքի համապատասխանություն, իրացվելիության աստիճան, գերադասելի է անշարժ գույք), տեղական և միջազգային մակրոտնտեսական միջավայրի հետ կապված խնդիրներ և այլն:

Ըստ ՆՄԿՁ հարցումների (2015թ) ֆինանսական ռեսուրսների հասանելիության մյուս խնդիրը կապված է ֆինանսական ռեսուրսների՝ տարբեր չափերի ձեռնարկությունների կարիքներին ոչ բավարար ադապտացման հետ: Հարցման ենթարկված ձեռնարկությունների 37.7%-ը նշել է, որ ֆինանսական արտադրանքը հարմարեցված չէ ՓՄՁ-ների կարիքներին, 28%-ի կարծիքով՝ հարմարեցված է ինչ-որ չափով միայն: 11,6%-ի կարծիքով ֆինանսական պրոդուկտները հիմնականում հարմարեցված են տարբեր չափերի ձեռնարկությունների կարիքներին: Հարցվածների 22.7%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին: Ձեռնարկությունների 31.3%-ն անբավարար է համարել ՓՄՁ-ներին վարկավորելու քաղաքականության և կարգավորող մեխանիզմների մակարդակը և միայն 11% տոկոսն է արտահայտել հակառակ կարծիքը: Մյուս կողմից, համաձայն հենց այս նույն հետազոտության, ձեռնարկությունների

հիմնական մասը համարում է, որ շուկայում առկա են ֆինանսական արտադրանքներ և ծառայություններ, որոնք անհրաժեշտ են իրենց զարգացման յուրաքանչյուր փուլում:

Համաձայն ԵՆԲ վարկային հետազոտության՝ 2015 թվականի վերջի դրությամբ ՓՄՁ պորտֆելի 4.2%-ը համարվել է անհուսալի վարկ, որից 2.7%-ը բաժին է հասնում միկրո սեգմենտին: Այն կազմում է ամբողջ բանկային սեկտորի անհուսալի վարկերի 8%-ը համաձայն ԿԲ տվյալների: 2015 թվականին վարկային պորտֆելի կատարողականը վատթարացել է դոլարի նկատմամբ տեղական արժույթի արժեզրկման և տնտեսական աճի նվազման պատճառով ձեռնարկությունների թուլացման հետ: ՓՄՁ վարկային պորտֆելը խիստ դոլարիզացված է, մինչդեռ վերջիններիս հիմնական եկամուտը ստացվում է դրամական տեսքով՝ տեղական շուկայից և ՓՄՁ-ների քիչ մասնաբաժինն է ներգրավված արտահանման մեջ: Այս առումով ՓՄՁ-ները խոցելի են դառնում տեղական արժույթի տատանումների նկատմամբ: Մի կողմից բարձր է տեղական արժույթով վարկերի նկատմամբ ՓՄՁ-ների պահանջարկը, մյուս կողմից բանկերն ունեն տեղական արժույթով երկարաժամկետ վարկերի տրամադրման դժվարություններ: Ուստի ՀՀ դրամով վարկերի պահանջարկը մնում է հիմնականում չբավարարված:

Սկսնակ բիզնեսի վարկավորման մյուս խնդիրը կապված է վարկավորման գումարի չափի հետ, որը որպես ներդրումային կապիտալ չի բավականացնում նախատեսվող ծախսերի կատարման համար: Մյուս հիմնական խոչընդոտը կապված է վարկի մարման ժամկետների հետ, որը հիմնականում պահանջում է մարումներն իրականացնել սկսած հաջորդ ամսվանից այնինչ բիզնեսը դեռևս նախագործառնական փուլի մեջ է և ֆինանսական եկամուտներ դեռևս չունի: Այս խնդիրը հատկապես արդիական է գյուղատնտեսության ոլորտի, մասնավորապես այգիների հիմնադրման հետ կապված:

Փորձագետները նշել են, որ առկա են որոշակի չարդարացված ռիսկեր կապված բանկային գործիքների և գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորման ծրագրերի հետ կապված, մասնավորապես այն առումով, որ ինտենսիվ այգիների հիմնադրման, հակակարկտային ցանցի տեղադրման կամ կաթիլային ոռոգման ցանցի անցկացման համար վարկառուն պետք է ընտրություն կատարի երեք կազմակերպությունների ցանկից որևէ մեկին, իսկ այս դեպքում այդ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցումը լինում է շատ ավելի թանկ, իսկ վարկային բեռը կրում է գյուղատնտեսը:

Այս հետազոտության շրջանակներում ՓՄՁ-ների հետ խորին հարցազրույցների արդյունքում վերջիններս նույնպես ներկայացրել են վարկավորման հետ կապված առկա դժվարությունները և խոչընդոտները: Օրինակ գինեգործությամբ զբաղվող ընկերություններից մեկը ցանկանում է հիմնել այգիներ, սակայն վարկային միջոցներից օգտվել չի կարող մի կողմից բարձր տոկոսադրույքների պատճառով, մյուս կողմից՝ այգիներից բերքը և հետաքար եկամուտ հնարավոր կլինի ստանալ միայն երեք տարի անց, ինչը ոչ նպատակային է դարձնում այս ծրագրի իրագործումը վարկային միջոցների հաշվին: Նմանատիպ խնդիր է առաջ բաշվել նաև հուշանվերների արտադրությամբ զբաղվող ձեռնարկություններից մեկը, որը նշել է, որ արտադրանքի իրացումը տևում է երկար ժամանակ, իսկ վարկի մարումն օրհասական է: Չարտադրությամբ զբաղվող ընկերություններից մեկը ներկայացրել է, չի ցանկացել օգտվել Գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրվող լիզինգի հնարավորությունից, քանի որ պարտադիր պահանջ է եղել գործող բիզնեսի գրավադրումը, ինչը համարում է բիզնեսի ծաղկման փուլում զարգացմանը խոչընդոտող նշանակալի գործոն: Մանրածախ առեւտրով զբաղվող ընկերություններից մեկը խոչընդոտ է համարում վարկի



ստացման հաջորդ ամսվանից և տոկոսագումարների, և մայր գումարի մարման պահանջը և առաջարկում է կիրառել մայր գումարի վճարման հետաձգման տարբերակներ: Որոշ ՓՄՁ-ներ նախապատվություն են տալիս դիմել գրանտային ծրագրերի, քանի որ վարկերի տոկոսադրույքները շատ բարձր են: Որոշ ՓՄՁ-ներ ներկայացրել են, որ ունեն վարկավորման կարիք, սակայն խուսափում են դիմել բանկերին բյուրոկրատական քաշքշուքների և պահանջվող թղթարարության պատճառով: Ընդհանուր առմամբ ՓՄՁ ներկայացուցիչները նշել են, որ վարկի բարձր տոկոսադրույքները խիստ խանգարում են և անհնար են դարձնում վարկի միջոցով ֆինանսական կարիքը լրացնելու հնարավորությունը:

Ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրազեկվածությունը: Համաձայն ՆՄԿԶ հարցումների (2015թ.) ձեռնարկությունների 21,7%-ը նշել է, ֆինանսական ծառայությունների մասին ինֆորմացիան բավականաչափ տարածված չէ ՓՄՁ-ների շրջանում, իսկ 36%-ի կարծիքով՝ տարածված է միայն ինչ-որ չափով: Համաձայն այս հետազոտության շրջանակներում իրականացված օնլայն հարցումների ՓՄՁ-ների 17%-ը տեղյակ չէ վարկավորման պայմաններից և դժվարացել է պատասխանել վարկավորման վերաբերյալ հարցաշարում ներառված հարցերին:

Թեև շուկայում առկա են առևտրային ֆինանսական գործիքներ, այնուամենայնիվ շուկան մնում է թերզարգացած կապված պահանջարկ ներկայացնող կողմից առաջ եկող խոչընդոտների հետ՝ ներառյալ ՓՄՁ ցածր իրազեկվածությունը և ցածր ֆինանսական գրագիտությունը⁵⁴:

Անբավարար է գնահատվել նաև ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների իրազեկվածության ապահովմանն ուղղված ԿԲ-ի, ՓՄՁ ՉԱԿ-ի և այլ կառույցների կողմից իրականացվող աշխատանքները: Համաձայն փորձագետների՝ բանկերի կողմից իրականացվող գովազդային և մարքեթինգային արշավները նույնպես բավարար չեն մի քանի պատճառներով. բանկերը սեզամետավորում են իրենց հաճախորդներին և իրազեկումը տարվում է միայն թիրախային խմբի ուղղությամբ, մյուս կողմից ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի չի մատուցվում տարբեր թիրախային խմբերի համար, տեղեկատվությունը ոչ ամբողջական է և ՓՄՁ-ներից լրացուցիչ ջանքեր է պահանջվում ֆինանսական բոլոր հնարավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու համար: Այս մասին են վկայում նաև իրականացված այլ ոլորտային հետազոտությունները, օրինակ «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները» զեկույցում⁵⁵ հարցման ենթարկված ձեռնարկությունների 41.1%-ը նշել են, որ ունեն մատչելի վարկերի ձեռքբերման վրաբերյալ տեղեկատվության ստացման կարիք: Նշենք, որ այս ոլորտը ներառված է ՓՄՁ զարգացման ռազմավարական նպատակներ 2-ում՝ «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորման հասանելիության բարելավում»:

Համաձայն փորձագետների, բանկերը շուկայում առաջարկում են արդյունավետ գործիքներ, ինչպես օրինակ դեբիտորական պարտքերի ֆինանսավորման, արտասահմանյան մատակարարներին տրամադրվող երաշխիքներ, որոնց մասին սակայն ՓՄՁ-ները իրազեկված

⁵⁴ http://www.eib.org/attachments/efs/economic_report_neighbourhood_sme_financing_armenia_en.pdf

⁵⁵ «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները», ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մարկրո և միջրո մակարդակներում, սեպտեմբեր 2015: Հետազոտության ընտրանքը ներառում է 107 միկրո ձեռնարկություններ և ՓՄՁ-ներ:



չեն, ինչի պատճառով օգտվում են ոչ նպատակային և առավել թանկ բանկային պրոդուկտներից, ինչը իր բացասական ազդեցությունն է ունենում բիզնեսի հետագա զարգացման վերաբերյալ: ՓՄՁ-ների մեծամասնությունը հաճախ նաև տեղեկացած չեն լինում ֆինանսավորման շուկայում առաջարկվող գործիքներին: Նման խնդրին ավելի հաճախ առնչվում են հատկապես սկսնակ գործարարները: Մյուս կողմից Հայաստանում բավականին բարձր է Վարկային տեղեկատվական ինդեքսը⁵⁶:

⁵⁶ Վարկային տեղեկատվական ինդեքսը չափում է այն կանոնները, որոնք ներգործում են վարկային տեղեկատվության շրջանակների, մատչելիության և որակի վրա:



3.3 ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓՄՁ ՈԼՈՐՏԻՆ: ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՓՄՁ զարգացման ռազմավարությունում ռազմավարական նպատակ 5-ը անդրադառնում է պետություն-մասնավոր հատված երկխոսության բարելավմանը, իսկ և ռազմավարական նպատակ 6-ը անդրադառնում է երեք հիմնական ոլորտների՝ 1) ներգրավել տարբեր բիզնես ասոցիացիաների և պետական հատվածի ներկայացուցիչների՝ ՓՄՁ զարգացման ռազմավարության մեջ արտացոլված բոլոր նպատակների իրականացումն ապահովելու նպատակով, 2) ՓՄՁ զարգացման խորհուրդը որպես հարթակ կիրառել նշված նպատակների և համապատասխան գործողությունների իրականացման համար, 3) Համապատասխան աշխատանքներում ներգրավել նաև մարզպետարաններին և համայնքների ղեկավարներին:

Աջակցություն ՓՄՁ ոլորտին: «Արդյո՞ք ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ընթացքում ստացել եք խորհրդատվություն ՓՄՁ ՁԱԿ կամ պետական այլ մարմնի կողմից և/կամ մասնակցել եք վերջիններիս կողմից կազմակերպված դասընթացներին ձեռնարկատիրությանը վերաբերող թեմաներով» առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 27%-ը նշել է, որ երբևէ ստացել են խորհրդատվություն: «Որքանո՞վ արդյունավետ և օգտակար էր Ձեզ համար ստացած խորհրդատվությունը կամ աջակցությունը» հարցին խորհրդատվական ծառայություններ ստացած ՓՄՁ-ների 29%-ը նշել է, որ ընդհանրապես արդյունավետ չեն եղել, 14%-ը՝ ավելի շուտ արդյունավետ չեն եղել: ՓՄՁ-ների 43%-ը ստացած ծառայությունները համարել են ավելի շուտ արդյունավետ, իսկ ահա 14%-ը ծառայությունները համարել են լիովին արդյունավետություն: Որպես լրացուցիչ մեկնաբանություն ՓՄՁ-ներից մեկը նշել է «մասնակցել եմ ոչինչ չտվող կեղծ դասընթացի մեկ օր, ստացել եմ 500.000 դրամ աջակցություն»: Մեկ այլ ՓՄՁ նշել է, որ մեկ անգամ մերժում է ստացել ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից, որից հետո հիասթափվել է և այլևս չի մասնակցում ծրագրերին: Հնչել են նաև «անգամ չգիտեի ում կարելի էր դիմել աջակցության և խորհրդատվության համար» կարծիքներ:

2016-2018թթ. ընթացքում գրանցված և հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 20%-ը ՓՄՁ ՁԱԿ կողմից ստացել են աջակցություն որևէ ուղղությամբ, մինչդեռ 80%-ը որևէ աջակցություն չի ստացել: Աղյուսակ 7-ում ներկայացված են 2016-2018թթ.-ի ընթացքում աջակցություն ստացած ՓՄՁ-ների թիվն ըստ աջակցության ուղղությունների և արդյունավետության գնահատման միջին ցուցանիշները, որտեղ գնահատումն իրականացվել է 1-ից 10 բալանոց սանդղակով (1-ը՝ առավելագույն անբավարար, 10-ը՝ լիովին բավարար):

Թեև պետություն-մասնավոր հատված երկխոսության համար առկա են տարբեր հարթակներ և օրենսդրական կարգավորումներ, սակայն վերջիններիս գործունեության արդյունավետությունը ցածր է

Պետական մարմինների և բիզնես ասոցիացիաների միջև հաղորդակցությունը չի իրականացվում փակ շղթայով. ինչ-որ կետից սկսած հաղորդակցությունն ավարտվում է և առաջարկվող փոփոխությունները չեն ստանում իրավական ուժ

Էլեկտրոնային կառավարման ոլորտում դրական տեղաշարժն ակնհայտ է և ոլորտում առկա է դինամիկ զարգացում: Մինչև 2016 ժամանակ էլեկտրոնային ծառայությունների շահառուները հիմնականում ք. Երևանում գրանցված ՓՄՁ-ներն են




Աջակցության ուղղություն	Աջակցություն ստացած ՓՄՁ- ների քանակ	Աջակցության միջին գնահատական
Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	20	6.2
Գործարար ուսուցողական աջակցություն	10	
Ֆինանսական և ներդրումային աջակցություն	9	6.9
Գործարար ուսուցողական աջակցություն Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	11	-
Տեղական արտադրանքի աջակցման ծրագրեր	3	7.7
Գործարար ուսուցողական աջակցություն Ֆինանսական և ներդրումային աջակցություն	2	-
Համաֆինանսավորում նոր տեխնոլոգիական ներդրումների համար	2	6
Գործարար ուսուցողական աջակցություն Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն Ֆինանսական և ներդրումային աջակցություն	1	10
Գործարար ուսուցողական աջակցություն Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն Ֆինանսական և ներդրումային աջակցություն Համաֆինանսավորում նոր տեխնոլոգիական ներդրումների համար	1	10
Գործարար ուսուցողական աջակցություն Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն Տեղական արտադրանքի աջակցման ծրագրեր	1	8.5
Գործարար ուսուցողական աջակցություն Կանանց ձեռներեցության աջակցության ծրագրեր	1	-
Գործարար ուսուցողական աջակցություն Տեղական արտադրանքի աջակցման ծրագրեր	1	-
Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն Համաֆինանսավորում նոր տեխնոլոգիական ներդրումների համար	1	-
Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն Տեղական արտադրանքի աջակցման ծրագրեր	1	-
Կանանց ձեռներեցության աջակցության ծրագրեր	1	7
Կանանց ձեռներեցության աջակցության ծրագրեր Տեղական արտադրանքի աջակցման ծրագրեր	1	7
Ընդամենը որևէ աջակցություն ստացած ՓՄՁ-ներ	66	

Աղյուսակ 7. Պետական և/կամ ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից ստացած աջակցությունների բնույթը և արդյունավետության գնահատականները

Պետություն-ՓՄՁ սեկտոր կապ: 331 ՓՄՁ-ների շրջանում իրականացված առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 12 տոկոսը նշել է, որ լիովին տեղյակ է ՓՄՁ ոլորտում իրականացվող պետական քաղաքականության և իրականացվող միջոցառումների մասին, 40 տոկոսը՝ ավելի շուտ տեղյակ է: ՓՄՁ-ների 48 տոկոսը նշել է, որ իրազեկված չեն պետական քաղաքականության և իրականացվող միջոցառումների վերաբերյալ, ընդ որում 21 տոկոսը նշել է, որ ընդհանրապես տեղյակ չէ:





Գրաֆիկ 17. ՓՄՁ ոլորտում պետական քաղաքականության վերաբերյալ ՓՄՁ-ների իրազեկվածությունը

«Վերջին երկու տարիների ընթացքում մասնակցե՞լ եք արդյոք ՓՄՁ վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների շրջանակներում հրավիրված որևէ հանրային լսման կամ քննարկման» հարցին հարցման ենթարկված ՓՄՁ-ների միայն 6%-ն է նշել, որ մասնակցում են ակտիվորեն, 16%-ը մասնակցել են մեկ կամ երկու անգամ, իսկ 79%-ն ընդհանրապես չեն մասնակցել:

ՓՄՁ վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների շրջանակներում հրավիրված որևէ հանրային լսման կամ քննարկմանը մասնակցած ՓՄՁ-ների 28%-ը նշել է, որ հանրային քննարկումների ընթացքում իրենց կամ այլ ՓՄՁ ներկայացուցիչների կողմից բարձրացրած կարծիքները և առաջարկությունները օրենսդրական փոփոխություններ իրականացնելիս ընդհանրապես հաշվի չեն առնվել, 44%-ի կարծիքով՝ ավելի շուտ հաշվի չեն առնվել: ՓՄՁ-ների միայն 24%-ն է նշել, որ իրենց և այլ ՓՄՁ-ների կարծիքն ավելի շուտ հաշվի են առնվում, իսկ 4%-ի կարծիքով՝ լիովին հաշվի են առնվել:

Հարցման ենթարկված ՓՄՁ-ների 61%-ը նշել է, որ տեղյակ են, որ նախաձեռնվող օրենսդրական փոփոխությունների նախագծերին կարող ենք ծանոթանալ առցանց (օնլայն) հարթակներում: ՓՄՁ-ների մյուս մասն իրազեկված չէ այս մասին: Իրազեկված ՓՄՁ-ների 55%-ը նշել է, որ օգտվում է այս հարթակներից միայն նախագծերին ծանոթանալու համար, 11%-ը՝ ծանոթանում է նախագծերին և ներկայացնում է իր առաջարկությունները: ՓՄՁ-ների 34%-ը երբևէ չի օգտվել այսպիսի հարթակներից:

Հետազոտության շրջանակներում ներգրավված փորձագետները նշել են, որ պետություն-մասնավոր հատված երկխոսության տարբեր հարթակներ կան, սակայն վերջիններիս գործունեության արդյունավետությունը գրանցվել է բավականին ցածր: Համաձայն փորձագետների՝ ձևավորված հարթակները եղել են ձևական և բանակցությունները շոշափելի արդյունքներ չեն տվել, քանի որ երկու կողմերն առաջնորդվել են տարբեր շահերով: Ինչ վերաբերում է տարբեր պետական կառույցներին կից խորհուրդներին, ապա համաձայն փորձագետների այս խորհուրդները կրում են ձևական բնույթ և արդյունավետ չեն աշխատում: Օրինակ, Վարչապետ Կարեն Կարապետյանին կից ստեղծվել է ՓՄՁ խորհուրդը, որը նախատեսված էր, որ պետք է ունենա տարեկան չորս հանդիպում, սակայն իրականացվել է միայն մեկ հանդիպում, իսկ կառավարության փոփոխությունից հետո որևէ նիստ չի եղել: Խորհուրդներ կան նաև Ֆինանսների նախարարությանը և ՊԵԿ-ին կից: Այս երկու մարմիններին կից խորհուրդների անարդյունավետությունը կապված է եղել պատասխանատվությունների ճիշտ բաշխման հետ, այժմ այս խնդիրը հարթված է: ՊԵԿ-ին կից խորհրդում քննարկվում են հիմնականում հարկային վարչարարության հետ կապված հարցեր: Ֆինանսների նախարարությանը կից խորհրդի նիստ երբևէ տեղի չի եղել և սպասումները այս խորհուրդների հետ կապված չեն արդարանում, քանի որ վերջիններս չեն դառնում ինստիտուցիոնալ մարմիններ երկխոսության ծավալման համար, ուստի ՓՄՁ ոլորտի ջատագովությունն ու շահերի պաշտպանությունը կրկին տեղափոխվում է անհատական ոչ ֆորմալ դաշտ: Երկխոսությունը և պատասխանատվությունների բաշխումը նախ և առաջ պետք է տեղի ունենա պետական մարմինների միջև, այնուհետև նոր պետության-մասնավոր հատված-ՔՀԿ միջև:



Պետական մարմինների և բիզնես ասոցիացիաների միջև հաղորդակցությունը չի իրականացվում փակ շղթայով, քանի որ բիզնես ասոցիացիաները իրենց առաջարկներով ու տեղեկանքներով որոշակի չափով պետական մարմիններին տեղեկացնում են իրավիճակի մասին, ինչ-որ կետից սկսած հաղորդակցությունն ավարտվում է և առաջարկվող փոփոխությունները չեն ստանում իրավական ուժ: Փորձագետները համարում են ձևավորված խորհուրդները դրական քայլ, սակայն ոչ բավարար, քանի որ վերջիններս լիարժեք չեն ներկայացնում դաշտում գործող բոլոր շահագրգիռ կողմերին, մասնավորապես առաջարկվում է ընդգրկել բոլոր ասոցիացիաներից ներկայացուցիչներ:

Փորձագետները կարևորել են ՓՄՁ-ների, մասնավորապես՝ բիզնես ասոցիացիաների և ՀԿ-ների ակտիվ ներգրավվածությունը հարկային, մաքսային, օրենսդրական այլ նախաձեռնությունների մշակմանը և հանրային քննարկումներին և իրազեկվածության ապահովումը: Փորձագետները նաև կարևորել են բիզնես ասոցիացիաների և ՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկությունների հիմնավորվածությունը և փաստարկների վրա հիմնված լինելը, ինչն ուղիղ կապված է ասոցիացիաների փորձագիտական կարողությունների և հնարավորությունների հետ: Որոշակի բարեփոխումներ այս դաշտում սկսել են նշմարվել, մասնավորապես՝ ակնկալվում է Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին կից ստեղծել ՓՄՁ երկխոսության աշխատանքային և իրապես գործող հարթակ, որտեղ կներգրավվեն համապատասխան ոլորտի պետական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հարթակը պետք է համագործակցի ոլորտի համակարգման պատասխանատու փոխվարչապետի գլխավորությամբ ձևավորվելիք ՓՄՁ շարժացման խորհրդի հետ: Քննարկվում են բոլոր այն փոփոխությունները, որոնք արվում են հարկային ստուգումների դաշտում, այդ թվում՝ ռիսկերի վրա հիմնված ստուգումների ընթացակարգը, ստուգաթերթերի ներդրումը, ստուգումների ամենամյա ցանկի հրապարակումը և այլն:

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից հիմնադրվել է գործարարության աջակցման գրասենյակ՝ խրախուսելու պետական եւ մասնավոր հատվածի միջեւ համագործակցությունն ու երկխոսությունը: Այս գործում կարևոր դեր կարող են խաղալ նաև բիզնես կոալիցիաներն ու ասոցացիաները, պետական կառույցները (օրինակ՝ վերը նշված ՓՄՁ երկխոսության հարթակը և ՓՄՁ զարգացման խորհուրդը), մարզպետարանները և համայնքային կառույցները, ապագայում ակնկալվող բիզնես հաշտարարի ինստիտուտը և այլն: Այստեղ առավել կարևոր խնդիրը կայանում է այս բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ջանքերի համախմբման և կորդինացման մեջ՝ ընդհանուր շահերի և գործելակարգի սահմանմամբ: Կորդինացնողի հիմնական պարտականությունը կարծում են պետք է դրվի Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության վրա՝ համապատասխան փոխնախարարի անմիջական պատասխանատվությամբ:

Համաձայն փորագետների, պետական ոլորտը և ՓՄՁ-ներն ընթանում են ոչ համընթաց, քանի որ ՓՄՁ ոլորտը առավել մեծ քայլերով է առաջ գնում և մշտապես փոխվում են այս ոլորտի կարիքները, իսկ պետական ոլորտը չի կարողանում արձագանքել այս տեմպին: Միևնույն ժամանակ, կապված երկրում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հետ ներկայումս սպասումները դրական են:

Էլեկտրոնային կառավարման ծառայություններ: Էլեկտրոնային կառավարման ոլորտում դրական տեղաշարժն ակնհայտ է և ոլորտում առկա է դինամիկ զարգացում: Հայաստանը նշանակալից առաջընթաց է արձանագրել Էլեկտրոնային ծառայությունների զարգացման ուղղությամբ՝ առավելապես սկսած 2012 թվականից: 2010 թվականին ՀՀ կառավարությունը



ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում Էլեկտրոնային հասարակության ձևավորման» 2010-2020թթ. հայեցակարգը, որը նպաստել է Էլեկտրոնային ծառայությունների օգտագործման մակարդակի բարձրացմանը և պետական կառավարման մարմինների կողմից մի շարք օնլայն ծառայությունների ձևավորմանը: Այս ոլորտում առաջընթացը իր արտացոլումն է գտել նաև գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ (2-րդ լավագույն տեղը ԵԳ երկրների ցանկում՝ Համաշխարհային բանկի «Doing Business 2015» զեկույցում), բարելավված Էլեկտրոնային կառավարում և ընկերության գրանցում (մեկ պատուհան, Էլեկտրոնային պորտալ):

Մատուցվող Էլեկտրոնային ծառայությունների շարքում են իրավաբանական անձանց առցանց գրանցումը, հարկի վերադարձի դիմումների և սոցիալական ապահովության վճարների առցանց ձևակերպումը, կրթաթոշակի, գնումների Էլեկտրոնային համակարգերը, Էլեկտրոնային կադաստրը, Էլեկտրոնային գրանցումը, մտավոր սեփականության իրավունքի հայտերի ձևակերպումը, Էլեկտրոնային վիզան և Էլեկտրոնային վճարումները: Գործածության մեջ է դրվել Էլեկտրոնային ստորագրությունը, որը 2005թ. օրենսդրության ընդունումից հետո ինտեգրվել է մի շարք այլ Էլեկտրոնային կառավարման ծառայություններում: Գործում է նաև www.egov.am երկլեզու կայքը, որը մեկտեղում է ՀՀ պետական գերատեսչությունների Էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքները և տվյալների հիմնապաշարները:

Էլեկտրոնային կառավարման համակարգերը, մասնավորապես Ի-դրաֆթ կայք Էջը, արդյունավետ և թափանցիկ գործիք է համաձայն փորձագետների, սակայն ցածր է այս հարթակից օգտվողների թիվը, քանի որ չկա վստահություն, որ այս հարթակում մասնակցությունը և ներառումը կարող է որևէ շոշափելի փոփոխությունների հանգեցնել: Ինչպես արդեն նշվեց, մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքներով ՓՄՁ-ների 61%-ը տեղյակ է, որ նախաձեռնվող օրենսդրական փոփոխությունների նախագծերին կարող են ծանոթանալ առցանց (օնլայն) հարթակներում: ՓՄՁ-ների մյուս մասն իրազեկված չէ այս մասին: Իրազեկված ՓՄՁ-ների 55%-ը նշել է, որ օգտվում է այս հարթակներից միայն նախագծերին ծանոթանալու համար, 11%-ը՝ ծանոթանում է նախագծերին և ներկայացնում է իր առաջարկությունները: ՓՄՁ-ների 34%-ը երբևէ չի օգտվել այսպիսի հարթակներից: Ի-դրաֆթ կայքն ունի լայն իրազեկման կարիք:

Չնայած այս առաջընթացին՝ Հայաստանում դեռևս հիմնախնդիր է ՓՄՁ սուբյեկտների կողմից այս Էլեկտրոնային գործիքների մասին սահմանափակ իրազեկվածությունը և կիրառումը: 2015 թվականին ՏՀԶԿ կողմից Հայաստանի կազմակերպությունների շրջանում անցկացված հարցման արդյունքներով՝ հարցմանը մասնակցած ՓՄՁ սուբյեկտների մոտավորապես կեսը որևէ նպատակով չեն օգտվում պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքէջերից: Վերջին մեկ տարվա ընթացքում պետական մարմիններն առավել ակտիվորեն են իրականացնում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչի շնորհիվ Էլ տեղաշարժը անցած տարվա համեմատ նկատելի է, բայց դեռևս բավարար չէ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել, որ ստեղծված Էլեկտրոնային ծառայությունների շահառուները չշարունակեն մնալ հատկապես երևանում գրանցված ՓՄՁ-ները, քանի որ դեռևս բոլոր մարզային, գյուղական ՓՄՁ-ների հաշվապահները չարունակում են աշխատել թղթային եղանակով:



3.4 ՓՄՁ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Գործարար միջավայրի բարելավումը, մասնավորապես՝ ֆինանսավորման միջոցների մատչելիության բարձրացումը, ընկերությունների արդյունավետության շեշտակի բարձրացումը, հարկային/մաքսային կարգավորումների, վճարման չափերի և վարչարարության վերանայումը, ներկրման/արտահանման ոլորտներում առանձին ընկերությունների/մոնոպոլիստների չհիմնավորված արտոնությունների վերացումը կարող են էական նշանակություն ունենալ ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացման մեջ: Առանձին կարևորություն ունեն արտադրանքի/ծառայությունների մշտական և բարձր որակի ապահովման համար ներդրումները և հատկապես արտաքին շուկաների մասին պարբերական և վստահելի տեղեկատվության կազմակերպումը: Իրականում այս մասով ներդրվող ջանքերը, այդ թվում՝ նաև պետության կողմից, համաձայն փորձագետների գնահատականների, դեռևս աննշան են: Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության համաթվի «Ապրանքների շուկա» ենթահամաթվով⁵⁷ Հայաստանն ունի բավականին նպաստավոր դիրք մյուս երկրների շարքում՝ զբաղեցնելով 39-րդ տեղը 140 երկրների շարքում: Այս ցուցանիշով Հայաստանն առաջ է հարևան Վրաստանից (42-րդ տեղը), սակայն հետ է մնում Ադրբեջանից (37-րդ տեղը)⁵⁸: Մյուս կողմից Հայաստանը բավականին ոչ նպաստավոր դիրք ունի «Շուկայի մեծություն»⁵⁹ ցուցանիշով՝ զբաղեցնելով 118-րդ տեղը 140 երկրների շարքում, որով հետ է մնում հարևան Վրաստանից (102-րդ տեղ), իսկ Ադրբեջանը ունի առավել նպաստավոր դիրք՝ 65-րդը երկրների շարքում: «Բիզնես դինամիկա»⁶⁰ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 62-րդ տեղը և հետ է մնում հարևան Վրաստանից 53-րդ տեղ և Ադրբեջանից՝ 31-րդ տեղ: Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության համաթվի «Ենթակառուցվածքներ» ենթահամաթվով⁶¹ Հայաստանը զբաղեցնում է 74-րդ տեղը 140 երկրների շարքում: Այս ցուցանիշով Հայաստանը հետ է մնում հարևան Վրաստանից (72-րդ տեղը), Ադրբեջանից (46-րդ տեղ) և մոտ է գտնվում Վրաստանին, Յորդանանին և Վիետնամին⁶²: Հայաստանը բարելավել է էլեկտրականության ստացման

Նոր տեխնոլոգիաների ներդրումը, որը կարող է բարձրացնել ՓՄՁ-ների մրցունակությունը, մատչելի չէ ՓՄՁ-ների համար

ՓՄՁ-ների 43%-ը նշել է, որ արտաքին շուկաներ դուրս գալու համար իրենց բիզնեսին անհրաժեշտ է աջակցություն

Արտահանման ընթացակարգերի մասին ՓՄՁ-ների տեղեկացվածությունը և այս ոլորտում աշխատանքները թերի են

Թեև առկա են միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար համաֆինանսավորման ծրագրեր, սակայն նույնիսկ այդ դեպքում մասնակցությունը մատչելի չի ՓՄՁ-ների համար

⁵⁷ Չափվում է շուկայի ուժով, արտասահմանյան ֆիրմաների համար շուկայի բացության և շուկայի անկատարության աստիճանով

⁵⁸ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/#series=GCI4.A.02>

⁵⁹ Տեղական և օտարերկրյա շուկայների չափը, որին տեղական ֆիրմաներն ունեն հասանելիություն: Այն հաշվարկվում է որպես սպառման, ներդրումների և արտահանման հանրագումար:

⁶⁰ Մասնավոր սեկտորի կարողությունները ստեղծել և ներդնել նոր տեխնոլոգիաներ և աշխատանքի կազմակերպման նոր եղանակներ

⁶¹ Տրանսպորտային ենթակառուցվածքների որակը և ընդգրկվածությունը

⁶² <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/#series=GCI4.A.02>



Նորարար տեխնոլոգիաների ներդրում: Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության համաթվի «ԻՀ տեխնոլոգիաների ընդունում»⁶³ ենթահամաթվով Հայաստանն ունի բավականին նպաստավոր դիրք՝ ի համեմատություն մյուս ենթահամաթվերի և ընդհանուր համաթվի: 2018 թվականի հաշվետվությամբ Հայաստանը զբաղեցնում է 56-րդ տեղը, սակայն իր ցուցանիշով հետ է մնում հարևան Վրաստանից (45-րդ տեղ), Մոլդովայից (48-րդ տեղ), Ղազախստանից (44-րդ տեղ): Այս ցուցանիշով Հայաստանը մոտ է գտնվում Հունաստանին, Կոստա Ռիկային, Սաուդյան Արաբիային և Մոնտենեգրոյին⁶⁴: «Նորարարական կարողություններ»⁶⁵ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 60-րդ տեղը՝ առաջ լինելով իր երկու հարևաններից՝ Վրաստանից 85-րդ տեղ և Ադրբեջանից 71-րդ տեղ:

Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 88%-ը բիզնեսի տեխնոլոգիական առաջընթացը (նոր տեխնոլոգիաների հիման վրա բիզնես լուծումներ, բիզնեսի թվայնացում) համարել են կարևոր հիմնախնդիր բիզնեսի հետագա զարգացման համար: 5%-ը այս ոլորտը կարևոր չեն համարել, իսկ 7%-ը համարել են մասամբ կարևոր:

Փորձագետները նշել են, որ նոր տեխնոլոգիաների ներդրումը, որը կարող է բարձրացնել ՓՄՁ-ների մրցունակությունը, մատչելի չէ՝ մի կողմից այսպիսի տեխնոլոգիաների ներդրման համար պահանջվում են ֆինանսական ռեսուրսներ, որոնց ներգրավումը վարկային միջոցների հաշվին թանկ է բարձր տոկոսադրույքի պատճառով, մյուս կողմից ոլորտը ռիսկային է: Որոշ բանկերի կողմից տրամադրվում են լիզինգային միջոցներ տեխնոլոգիաների ներդրման համար: Տեխնոլոգիաների ներմուծումը ՓՄՁ-ների համար մատչելի չէ և դա կարող են իրենց թույլ տալ խոշոր ձեռնարկատերերը: Նորարարական տեխնոլոգիաների ներդրման հարցում պետական աջակցությունը գնահատվել է անբավարար: Նորարար տեխնոլոգիաների ներդրմանն է խոչընդոտում նաև շուկայի փոքր լինելը: Միևնույն ժամանակ առկա են նորարար տեխնոլոգիաների ներդրման համար գրանտային ծրագրեր, որոնք իրականացվում են ԵՄ, Ռուսաստանի դեսպանատան, Սևան Ստարտ-ափի և շահագրգիռ կողմերի միջոցով, սակայն այս գրանտատային ծրագրերը փոքրաթիվ են:

Վերջին տարիներին Հայաստանում խրախուսվում է այլընտրանքային Էներգիայի ստացման նորարար տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես օրինակ արևային Էներգիան է: Այս ոլորտում առկա է ինչպես պետական առաջակցություն և նպաստավոր կարգավորումներ, այնպես էլ տրամադրվում են մատչելի վարկային միջոցներ բանկերի կողմից: 2017 թվականին ընդունվել է օրենք, որով տրվել է վերականգնվող Էներգետիկայի սահմանումը և սահմանվել է «ինքնուրույն Էներգիա արտադրողը»: Այս ոլորտում հնարավոր է նույնիսկ 5% տոկոսադրույքով վարկավորում, բավականին արդյունավետ գործում են լիզինգային գործիքները: Փորձագետներն առաջարկել են ոլորտին տալ հարկային արտոնություններ՝ որպես հանքարդյունաբերության ոլորտին հակակշիռ: Կաթիլային ոռոգման համակարգերի ու հակակարկտային ցանցերի տեղադրումով ինտենսիվ այգիների հիմնումը սուբսիդավորվում է պետության կողմից, վարկերը տրամադրվում են անգամ մայր գումարի մարման հետաձգումներով:

Թույլ է զարգացած նաև գիտություն-մասնավոր շուկա կապը: Գիտական գիտելիքը մնում է տեսական հարթությունում և չի դառնում պրոդուկտ: Այս խնդիրը քիչ թե շատ հաղթահարված է միայն ՏՏ ոլորտում: Կան գիտական ինստիտուտներ – մասնավոր հատված համագործակցության մասնավոր և եզակի դեպքեր, սակայն համակարգային մոտեցումը դեռևս բացակայում է:

⁶³ Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ներդրման աստիճանը


⁶⁴ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/#series=GCI4.A.02>

⁶⁵ Հետազոտությունների և զարգացման ոլորտի որակը և քանակը



ՓՄՁ արտադրանքի արտահանում: Քանակական հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 22%-ը նշել է, որ Հայաստանյան շուկան ընդհանրապես չի բավականացնում իրենց բիզնեսի վարման համար, 20%-ի կարծիքով՝ ավելի շուտ շուկան բավարար չէ: ՓՄՁ-ների 25%-ը Հայաստանյան շուկայի մեծությունը համարել է ավելի շուտ բավարար իրենց բիզնեսի վարման համար, 23%-ը՝ լիովին բավարար: ՓՄՁ-ների 10%-ը դժվարացել է այս հարցին պատասխանել: Այսպիսով, ՓՄՁ-ների 42%-ի կարծիքով Հայաստանյան շուկան բիզնեսի արդյունավետ վարման համար փոքր է: Ինչ վերաբերում է արտաքին շուկաներ դուրս գալու պոտենցիալին, ապա հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 43%-ը համարել է, որ իրենց բիզնեսը չունի պոտենցիալ դուրս գալու արտաքին շուկաներ, 14%-ը նշել է, որ բիզնեսն ավելի շուտ ունի պոտենցիալ արտաքին շուկաներ դուրս գալու, մինչդեռ 28%-ի կարծիքով բիզնեսը լիովին ունի պոտենցիալ արտաքին շուկաներ դուրս գալու: 15%-ը դժվարացել է ապատասխանել այս հարցին: ՓՄՁ-ների 32%-ը նշել է, որ արտաքին շուկաներ դուրս գալու համար իրենց բիզնեսին խիստ անհրաժեշտ է աջակցություն, 11%-ի հավաստմամբ՝ ավելի շուտ կա աջակցության անհրաժեշտություն:

Ըստ արտահանման ուղղությամբ տարբեր աջակցության կարիքների գնահատման արդյունքների, գրեթե բոլոր ցուցանիշների դեպքում արձանագրվել է նույն արդյունքը: ՓՄՁ-ների շուրջ 34-35%-ը նշեն են, որ նշված ուղղություններից ոչ մեկով չունեն աջակցության կարիք, 22-23%-ը մասնակի ունեն աջակցության կարիք, իսկ 33%-ն ավելի շուտ կամ լիովին ունեն աջակցության կարիք (Գրաֆիկ 18):



Գրաֆիկ 18. Արտաքին շուկաներ դուրս գալու համար ՓՄՁ-ների աջակցության կարիքները

ԵՏՄ շուկա մուտքն այժմ ավելի դյուրինացել է ձեռնարկությունների համար՝ կրճատվել է թղթարարությունը, պարզեցվել են ընթացակարգերը, ներդրվել են հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային եղանակներ: Ընթացակարգերն առվել հեշտ են կենդանական և բուսական ծագում չունեցող ապրանքների դեպքում: Կենդանական կամ բուսական ծագման ապրանքների դեպքում թույլտվություն է տրամադրվում Սևնդի անվտանգության տեսչության կողմից: ՓՄՁ-ների կողմից արտադրանքի արտահանման հիմնական խոչընդոտը շարունակում է մնալ արտադրանքի որակը: Այն արտադրանքները, որոնք ունեն բարձր որակ առավել հեշտ են մուտք գործում միջազգային շուկա, ինչպես օրինակ քարերը, խմիչքը և այլն: Համապատասխան որակի ապահովումը միջազգային շուկա դուրս գալու համար կապված են մեծ ներդրումների պահանջի հետ: Գործում է արտահանման ապահովագրություն, որի դեպքում ապահովագրվում է գնորդի չվճարումների դեպքում: Սակայն ապահովագրական վճարները բարձր են, իսկ չվճարումների տոկոսն ավելի ցածր, ինչպիսի պատճառով արտահանողները խուսափում են ապահովագրվել: Արտահանմանը խոչընդոտող հիմնական գործոնների մեկը պահանջվող որակի և քանակի ապահովումն է:

Հայաստանում բավականին դժվար է պարենային արտադրանքի արտահանման համար անհրաժեշտ հավաստագրերի ստացումը, որը ոչ մատչելի է հատկապես ՓՄՁ-ի համար՝ և՛ երկարաժամկետ պրոցես է, և՛ ոլորտը մենաշնորհային է: Գործում է միայն մեկ կազմակերպության, որը Էկոսերտիֆիկատի տրամադրման համար սահմանում է սակագներ և ընթացակարգեր: Անհրաժեշտություն կա այս դաշտը դարձնել առավել մրցակցային:

Փորձագետները ցածր են գնահատել արտահանման ընթացակարգերի մասին ՓՄՁ-ների տեղեկացվածությունը և այս ոլորտում աշխատանքները թերի են: Հայաստանը օգտվում է GSP+ համակարգերից ԱՄՆ և ԵՄ շուկաներ մուտք գործելու համար, որը մի շարք ապրանքների դեպքում արտահանումն ազատում է մաքսատուրքերից: Փորձագետներից մեկը նշել է, որ դժվարություն է ունեցել GSP+ի մասին ՏՀՆՆ կայքում տեղեկատվություն գտնելու հարցում, քանի որ տեղեկատվություն առկա էր միայն անգլերեն լեզվով: Այս առումով ստացվում է, որ տեղեկատվությունը փակ է մնում ՓՄՁ-ների համար:

2015 թվականից գործում է «Բիզնես Արմենիա» հիմնադրամը (վերաբերենդավորված Հայաստանի զարգացման հիմնադրամը), որի նպատակն է Հայաստանի վարկանիշի և մրցունակության բարձրացումը, ներդրումների ներգրավումը, արտահանման խթանումը: Բիզնես Արմենիան նպատակ ունի նպաստել պետական մարմինների և գործարարների միջև համագործակցությանը, իրականացնել համատեղ նախագծեր, աջակցել օտարերկրյա ներդրումներին և հետևերդրումային ծառայությունների մատուցմանը: Սակայն ինչպես ցույց են տվել հետազոտության արդյունքները, ՓՄՁ ներկայացուցիչները իրազեկված չեն նաև ՏՀՆՆ ենթակայության ներքո գործող «Բիզնես Արմենիա» հիմնադրամի մասին: Փորձագետները կարևորել են նաև վիճակագրական հավաստի տվյալների առկայությունը, որը հնարավոր կլինի ներկայացնել ներդրողներն և որը ներդրողներին համապարփակ տեղեկատվություն կտա երկրում առկա տնտեսական իրավիճակի վերաբերյալ՝ սկսած աշխատաշուկայի հնարավորություններից մինչև օրենսդրական կարգավորումներ:

Մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին: Միջազգային ցուցահանդեսներում հայկական արտադրանքի մասնակցությունը կարևոր է, քանի որ այդպես հնարավոր է դառնում բարձրացնել հայկական արտադրանքի ճանաչելիությունը: Առկա են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են միջազգային ցուցահանդեսներին տեղական ձեռնարկությունների մասնակցության աջակցությանը: «Բիզնես Արմենիան» մասնակցում է տարբեր էքսպոների պետական



Ֆինանսավորմամբ, ՏՏ ոլորտին Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը տեղեկացնում է բոլոր միջազգային կոնֆերանսների մասին և ֆինանսավորում է մասնակցությունը: Իրականացվում են նաև տաղավարի տրամադրման ֆինանսավորում: Որոշ միջազգային ծրագրերով, որոնք իրականացվել են ԵՄ կամ Ճապոնիայի Ջայկա ծրագրով, շուրջ 30-ից 40 ՓՄՁ մասնակցել են ցուցահանդեսներին:

Թեև առկա են միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համաֆինանսավորման առաջարկներ, սակայն նույնիսկ այդ դեպքում մասնակցությունը մատչելի չի լինում ՓՄՁ-ների համար համաձայն փորագետների գնահատականների, քանի որ այսպես թե այնպես համաֆինանսավորումից դուրս մասը ծախսատար է ՓՄՁ-ների համար: Ուստի այս հնարավորություններից կարողանում է օգտվել հիմնականում միայն խոշոր բիզնեսը:

Փորձագետները նաև նշել են, որ անհրաժեշտ է նաև հետամուտ լինել ցուցահանդեսներին մասնակցության արդյունավետության գնահատմանը և մեկ շտեմարանում հավաքագրել տվյալներ մասնակցության շոշափելի արդյունքների վերաբերյալ, օրինակ կնքված պայմանագրերի քանակ, վաճառքների աճ և այլն: Մյուս կողմից այս ծրագրերում անհրաժեշտ է հետամուտ լինել կոռուպցիոն սխեմաների բացառմանը, ապահովվել այսպիսի հնարավորությունների վերաբերյալ լայն իրազեկում ՓՄՁ-ների շրջանում և մասնակիցների ընտրությունը կազմակերպել թափանցիկ և արդար ընթացակարգերով:



3.6 ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՁԱԿՑՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՓՄՁ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում ձեռնարկատիրական կրթության զարգացման անհրաժեշտությունը հիմնավորված է ՀՀ 2014-2025 թ.թ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշման հավելվածի ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 44 որոշման հավելվածի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության 44-րդ և 45-րդ կետերով:

Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հարցում ձեռնարկատիրական կրթության դերը կարևորելով՝ 2017 թվականին հանրակրթական մի շարք դպրոցներում փորձնական ներդրվել է «ձեռնարկատիրական կրթություն» առարկան, որի նպատակն է խթանել ՀՀ ուսումնական հաստատությունների շրջանավարտների ձեռնարկատիրական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացումը: Ձեռնարկատիրական կրթության համալիր ներդրումը նախատեսվում է հանրակրթական համակարգում իրականացնել 4 տարիների ընթացքում (2017թ. սեպտեմբերից 2020թ. սեպտեմբեր):

ՓՄՁ-ների զգալի մասը կարիք ունի ձեռնարկատիրական անհրաժեշտ կրթության, կարողությունների զարգացման, հատկապես՝ նոր մոտեցումների և տեխնոլոգիաների, շուկայավարման, հաշվապահական հաշվառման, կառավարման և ֆինանսական գործիքների օպտիմալ կիրառման հարցերում: Այս խնդիրը առավել հաճախ հանդիպող պատճառներից է, որի հետևանքով շատ ընկերություններ դադարում են գործել: Բիզնես կարողությունների զարգացման ծառայություններ մատուցող ընկերությունները, ասոցիացիաները, ՀԿ-ները, դոնորական ֆինանսավորմամբ այլ կազմակերպությունները հաճախ ունեն լուրջ, նեղ ուղղաձույթային և ժամանակավոր բյուջե: Ծառայությունների զգալի մասը հաճախորդների բիզնես կարիքներին բավարար չափով համապատասխանեցված չեն, այլ կերպ ասած՝ ունեն ընդհանուր բնույթ, ինչը նվազեցնում է նման աջակցության արդյունավետությունը: Այլ դեպքերում, երբ նման ծառայություններ մատուցվում են վճարովի հիմքով, հաճախ պարզապես մատչելի չեն հատկապես փոքր և դեռևս խիստ սահմանափակ դրամական շրջանառությամբ ընկերությունների համար:

Բիզնես ասոցիացիաներ և առևտրային պալատներ:

Համաձայն փորձագիտական գնահատականների՝ տնտեսվարող սուբյեկտների, բիզնես ասոցիացիաների և ուսումնական

Տնտեսվարող սուբյեկտների, բիզնես ասոցիացիաների և ուսումնական հաստատությունների միջև համագործակցության արդյունավետությունը դեռևս մնում է խնդրահարույց

Բիզնես ասոցիացիաները արդյունավետ չեն գործում և որակյալ ծառայություններ չեն մատուցում իրենց անդամներին ֆինանսական ռեսուրսների բավարար չլինելու պատճառով

Բիզնես ասոցիացիաները ՓՄՁ խնդիրները լուծում են տեղային, իրավիճակային մակարդակում, իսկ համակարգային, ինստիտուցիոնալ լուծումներ տալու գործիքներ դեռևս չունեն

Պետական աջակցությամբ մատուցվող կրթական ծառայությունների ներառողականությունը և հավասար հասանելիությունը բոլոր ՓՄՁ-ների համար խնդրահարույց է

հաստատությունների միջև համագործակցության արդյունավետությունը դեռևս մնում է խնդրահարույց, չնայած այն հանգամանքին, որ այս խնդիրը մշտապես բարձրաձայնվում և կարևորվում է ՓՄՁ ՁԱԿ-ի և ՓՄՁ հարցերով զբաղվող ասոցիացիաների կողմից: Այս ոլորտում առաջընթացը փորձագետները գնահատել են աննշան: Համագործակցությունը թույլ է թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական մակարդակներում՝ ԿԳՆ, ՏՁՆՆ, ասոցիացիաներ, ՀԿ-ներ: Համագործակցության վերաբերյալ հուշագրերն այս կառույցների միջև մնում են թղթի վրա և իրականություն չեն դառնում: Գիտական կազմակերպությունները որևէ դեր և համագործակցություն չունեն ՓՄՁ-ի հետ:

Բիզնես ասոցիացիաների՝ ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագետներ կրթելու գործընթացում դերակատարում ունենալու առումով այս երկու ինստիտուտների միջև կապը դեռևս շատ թույլ է և այս հարցում ավելի շատ կարևորվում է միջգերատեսչական համագործակցությունը՝ ներառելով նաև ԿԳՆ-ն և ՏՁՆՆ-ն: Համաձայն փորձագետների, անհրաժեշտ է բարձրացնել միջին մասնագիտական հաստատությունների կրթական որակը՝ շուկայի պահանջներին համապատասխան: Համաձայն փորձագետների խնդիրը երկկողմանի է. մի կողմից ուսումնական հաստատություններում չեն ուսուցանվում աշխատամոլայնում պահանջարկ ունեցող մասնագիտություններ, մյուս կողմից՝ ուսանողները սովորում են ոչ այն մասնագիտությունների գծով, որով հետագայում կցանկանային աշխատել:

Բիզնես ասոցիացիաները և առևտրաարդյունաբերական պալատները ՀՀ-ում դեռևս կայացման փուլում են գտնվում: Ասոցիացիաների կայացած չլինելու հիմնական և ամենակարևոր գործոնը ռեսուրսների սահմանափակությունն է, ինչը թույլ չի տալիս բիզնես ասոցիացիաներին ներգրավել որակյալ մասնագետներ և մատուցել որակյալ ծառայություններ իր անդամներին: Ֆինանսական ռեսուրսները չեն բավականացնում անդամավճարների ցածր լինելու պատճառով, իսկ սահմանափակ ռեսուրսների պատճառով հնարավոր չի լինում համալրել անհրաժեշտ հաստիքները: Այդ իսկ պատճառով ասոցիացիաներում աշխատանքի հիմնական մասն իրականացվում է կամավորական սկզբունքի հիման վրա, ինչն ազդում է աշխատանքի արդյունավետության և կատարողական ցուցանիշների վրա: Ձեռնարկությունների օգուտները, բիզնես ասոցիացիաներին անդամագրվելու դեպքում պետք է գերակշռեն, որպեսզի անդամագրումը լինի կամավոր սկզբունքի հիման վրա և շահավետ լինի ձեռնարկությունների համար, սակայն ներակիս իրավիճակում ձեռնարկատերերը չեն տեսնում ասոցիացիաներին անդամագրվելու ռեալ օգուտները: Չի գործում պետություն-բիզնես ասոցիացիա կապը, իսկ համագործակցությունը շատ թույլ է: Մյուս կողմից, առկա է վստահության պակաս ՓՄՁ-ների կողմից ասոցիացիաների և առևտրաարդյունաբերական պալատների նկատմամբ:

Այսպիսով, բիզնես ասոցիացիաները արդյունավետ չեն գործում և որակյալ ծառայություններ չեն մատուցում իրենց անդամներին ֆինանսական ռեսուրսների բավարար չլինելու պատճառով: Արդյունավետ չի գործում անդամավճարների ինստիտուտը: Ասոցիացիաներին աջակցող ծրագրերը բավականին սակավաթիվ են, սակայն այսպիսի աջակցության ծրագրերն էլ հաճախ թիրախային չեն լինում:

ՓՄՁ ՁԱԿ-ը մարզերում ներկայացված է բոլոր մարզերում: Մասնաճյուղերը տեղակայված են մարզային քաղաքներից մեկում: Ներկայացված է միայն մեկ աշխատողով: ՓՄՁ ասոցիացիան նշվել է որպես գործուն կառույց, սակայն վերջինս կարող է ՓՄՁ վերաբերյալ խնդիրները դեռևս լուծել հիմնականում տեղային և ոչ ֆորմալ կապերի միջոցով, իսկ համակարգային, ինստիտուցիոնալ լուծումներ դեռևս չկան: Մարզային մակարդակում մարզպետարանների և



տեղական մակարդակում համայնքապետարանների ներգրավվածությունը ՓՄՁ ոլորտի զարգացման գործում գնահատվել է խիստ անբավարար:

ՓՄՁ կարողությունները և կարիքները ՓՄՁ-ների տեսանկյունից:

Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության համաթվի «Հմտություններ»⁶⁶ ենթահամաթվով Հայաստանն ունի բավականին նպաստավոր դիրք և զբաղեցնում է 55-րդ տեղը՝ զիջելով հարևան Վրաստանին (45-րդ տեղը), և Ադրբեջանին (54-րդ տեղը)⁶⁷: Աշխատաշուկայի ցուցանիշով⁶⁸ Հայաստանը զբաղեցնում է 33-րդ տեղը՝ հետ մնալով հարևան Վրաստանից (31-րդ տեղ) և առաջ լինելով հարևան Ադրբեջանից (40-րդ տեղ):

Դասընթացների, վերապատրաստումի, մասնագիտական կրթության, տեղեկատվության հասանելիության ոլորտը հարցման ենթարկված ՓՄՁ-ների 89%-ը համարում է կարևոր հիմնախնդիր, 7%-ը մասամբ կարևոր, 5%-ը ոչ կարևոր: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 44%-ը նշել է, որ ունեն բիզնես խորհրդատվության և դասընթացների ծառայությունների կարիք, 48%-ն այսպիսի ծառայությունների կարիք չունի: ՓՄՁ-ների 8%-ը այս հարցին դժվարացել է պատասխանել:

Հարցմանը մասնակցած 331 ՓՄՁ-ների 6%-ն իրենց ձեռնարկատիրական կարողությունները գնահատել են լիովին անբավարար ձեռնարկության արդյունավետ կառավարման համար, իսկ 17%-ը գնահատել են ավելի շուտ անբավարար: 41%-ը համարում է, որ իրենց ձեռնարկատիրական կարողությունները ավելի շուտ բավարար են ձեռնարկության արդյունավետ կառավարումը կազմակերպելու համար, մինչդեռ 31%-ն իրենց ձեռնարկատիրական կարողությունները գնահատել են լիովին բավարար: Ըստ ձեռնարկության հիմնադրման ժամանակահատվածի հետ խաչաձև աղյուսակների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ իրենց ձեռնարկատիրական կարողությունները առավել հաճախ անբավարար են գնահատել 2017-2018թթ. ընթացքում ստեղծված ձեռնարկությունների հիմնադիրները: Նշենք նաև, որ արական սեռի ձեռնարկատերերը առավել ցածր են գնահատել իրենց ձեռնարկատիրական կարողությունները՝ կին ձեռնարկատերերի համեմատ:

«Ի՞նչ թեմաներով խորհրդատվական ծառայությունների կամ դասընթացների կարիք ունի Ձեր բիզնեսը» հարցին ի պատասխան առավել հաճախ նշվել են վաճառքի և մարքեթինգի խթանման, հարկային համակարգի և հաշվապահության, մարդկային ռեսուրսների կառավարման ուղղությունները (Գրաֆիկ 19): Ընդ որում, ձեռնարկատերերը նաև առավել հաճախ են նշել, որ ունեն վաճառքի և մարքեթինգի ոլորտում փորձառու աշխատակիցների ներգրավման կարիք:


Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 44%-ը համարում է, որ Հայաստանում առկա չեն բավարար քանակությամբ բիզնես խորհրդատվություն և դասընթացների ծառայություններ մատուցող ընկերություններ: 29%-ը համարում է, որ այսպիսի ընկերությունները ավելի շուտ բավարար են, իսկ 14%-ի կարծիքով՝ լիովին բավարար են: Այս հարցին դժվարացել են պատասխանել ՓՄՁ-ների 14%-ը:

⁶⁶ Աշխատումի հիմնական հմտությունները և նրանց կրթության վերաբերյալ որակական և քանակական ցուցանիշներ

⁶⁷ <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/#series=GCI4.A.02>

⁶⁸ Մարդկային ռեսուրսների վերակազմակերպման ճկունությունը և կառավարումը





Գրաֆիկ 19. Վերապատրաստման դասընթացների կարիքների ուղղություններն ըստ ձեռնարկատերերի

Ձեռնարկատիրական կարողությունների (մշակույթի) խթանում և զարգացում:

Համաձայն փորձագետների բավականին շատ են ՓՄՁ ՁԱԿ-ի, Ձբաղվածության պետական գործակալության, միջազգային կազմակերպությունների և տեղական ՀԿ-ների կողմից իրականացվող դասընթացները ՓՄՁ սեկտորի համար, այդ թվում դասընթացներ են իրականացվել ԱԶԲ, Ջինիշյանը, ԱՄՆ ՄԶԳ- և, ՀՍԶԱ-ն, ԵՄ տարբեր ծրագրերի շրջանակներում: Որոշ կազմակերպություններ և ՀԿ-ներ դասընթացներ իրականացնում են իրենց թիրախային խումբ հանդիսացող շահառուների համար, ինչպես օրինակ ՁԴԳ-ն դասընթացներ է իրականացրել գործազուրկների համար, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն՝ հաշմանդամների համար, Վորլդ Վիժըն կազմակերպությունը՝ երիտասարդների համար և այլն: Որոշ դասընթացների դեպքում նախատեսվում է նաև դասընթացի ավարտից հետո փոքր դրամաշնորհների տրամադրում սկսնակ ձեռնարկատերերին: ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացվում է նախնական և վերջնական գնահատում մասնակիցների շրջանում դասընթացների կարիքների վերաբերյալ: Այսպիսի գնահատումների արդյունքում են կազմակերպվել օրինակ սննդի վերամշակման, տեխնոլոգիաների և այլ թեմաներով դասընթացներ: Փորձագետները շեշտադրել են կրթական կարիքների, ինչպես նաև դասընթացների արդյունավետության գնահատման կարևորությունն արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Կարևոր են մատուցվող կրթական ծառայությունների ներառողականությունը և հավասար հասանելիությունը բոլոր ՓՄՁ-ների համար: Փորձագետներից մեկը, թեև նշել է, որ կրթական ծրագրերն արդյունավետ են իրականացվում, սակայն թերի են ներառողականության տեսանկյունից, քանի որ այդպիսի դասընթացներին մասնակցում են հիմնականում նույն ձեռնարկատերերը: Որոշ ՓՄՁ-ներ դասընթացներին մասնակցում են միայն ֆորմալ՝ դասընթացի ավարտին դրամաշնորհային միջոցներից օգտվելու համար: Մյուս կողմից, դասընթացների արդյունքում գրված բիզնես պլանները չեն կարևորվում ձեռնարկատերերի կողմից իրենց բիզնեսի

հետագա պլանավորման տեսանկյունից և միայն նպատակաուղղված են վարկային կամ գրանտային միջոցների ներգրավմանը:

Փորձագետներից մեկը նշել է, որ առկա են կոռուպցիոն ռիսկեր դասընթացների իրականացնող կազմակերպությունների ընտրության և դասընթացներին մասնակցող ձեռնարկատերերի ընտրության փուլերում և դասընթացի ավարտին տրվող գրանտային միջոցները նպատակին չեն ծառայում: Դասընթացներ վարող այսպիսի կազմակերպությունների ոչ թափանցիկ ընտրության պատճառով նվազում է դասընթացների արդյունավետությունը և երբեմն ստանում է ձևական բնույթ: Հաճախ դասընթաց վարողներն իրենք չեն տիրապետում դասավանդվող նյութին և չեն ունենում պրակտիկ հմտություններ մասնակիցներին իրենց փորձը փոխանակելու համար:



3.7 ԲՆԱԿԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Կառավարությունը ձեռնամուխ է եղել Կայուն Չարգացում ծրագրի իրականացմանը, որը ենթադրում է սպառման և արտադրության այնպիսի կառուցվածքների առկայություն, որոնք համատեղելի են երկրի բնապահպանական կայունության հետ: «Փոքր բիզնեսի ակտի» (ՓԲԱ) գնահատման 10 ուղղություններից մեկը «կանաչ» տնտեսությունն է ՓՄՁ սուբյեկտների համար, որով նպատակադրվում է խրախուսել ՓՄՁ սուբյեկտներին բնապահպանական մարտահրավերները դարձնել հնարավորություններ: ՓՄՁ զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության Ռազմավարական նպատակ 4-ի (ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացում) ենթանպատակներից մեկը ՓՄՁ սուբյեկտների ռեսուրսարդյունավետ գործունեության և «կանաչ» արտադրանքի/ծառայությունների առաջարկի մեծացման խրախուսումն է:

Բնապահպանության ոլորտում իրավահարաբերությունները Հայաստանում ներկայումս կարգավորվում են իրար հետ փոխկապակցված մի շարք օրենքներով, որոնցից առանցքայինը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքն է (2014թ.)⁶⁹, սահմանում է դրույթներ տնտեսական կամ այլ տիպի գործունեության շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխատեսման, կանխման և մեղմացման վերաբերյալ: Օրենքը սահմանում է գործունեության դասակարգման երեք կատեգորիաներ՝ Ա, Բ և Գ, որոնցից ՓՄՁ ոլորտին կարող է հիմնականում վերաբերել միայն «Գ» կատեգորիան, որի ներքո ներկայացվում են բնապահպանական առումով առավել նվազ ազդեցություն ունեցող գործունեության ոլորտները:

Համաձայն ՓԲԱ զեկույցի Հայաստանի գրեթե բոլոր ՓՄՁ սուբյեկտները կա՛մ ենթարկա չեն բնապահպանական կանոնակարգերի պահանջներին, կա՛մ իրենք չգիտեն, որ պետք է ենթարկվեն դրանց: ՏՀԶԿ-ի կողմից ավելի քան 400 ՓՄՁ սուբյեկտների շրջանում անցկացված հարցման (2014թ.) արդյունքներով՝ հարցված ՓՄՁ սուբյեկտների 56.7%-ը հայտարարել է, որ իրենք ենթակա չեն բնապահպանական որևէ պահանջի, իսկ 22.6%-ը հայտնել է, որ իրենք պարտադիր կատարում են միայն ընդհանուր պարտավորությունները (երբեմն անվանվում է՝ «շահերի պաշտպանություն»), ինչպես օրինակ՝ ոչ թունավոր թափոնների

«Կանաչ» աշխատակարգերի խթանման և ներդրման ծրագրերը և նախաձեռնություններն ունեն հատվածական բնույթ և համակարգային, ինստիտուցիոնալ չեն

ՓՄՁ-ների 52%-ը վերջին երկու տարիների ընթացքում իրականացրել է միջոցառումներ/աշխատանքներ ուղղված իրենց արտադրության/ծառայությունների մատուցման գործընթացում ծախսվող ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը

Ռեսուրսների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ/աշխատանքներ իրականացրած ՓՄՁ-ների միայն 6%-ն է պետական որևէ մարմնից ստացել ֆինանսական առաջակցություն, 7%-ը՝ ստացել են տեխնիկական առաջակցություն

⁶⁹ Տես ավելին՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91594>




պատշաճ հեռացումը⁷⁰: Բնապահպանության նախարարության մոնիթորինգի ներքո են գտնվում շուրջ 4000 տնտեսվարող սուբյեկտներ, որը կազմում է երկրի ՓՄՁ սուբյեկտների մոտ 5%-ը: Տնտեսվարող մյուս սուբյեկտների մեծ մասը հայտնի չեն երկրի բնապահպանական մարմիններին: Հարցված ՓՄՁ սուբյեկտների 2%-ից քիչն ունի սերտիֆիկացված ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգ: 2012 թվականի դրությամբ, Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ինստիտուտը ISO 14001 սերտիֆիկատներ է տրամադրել ընդամենը 10 ՓՄՁ սուբյեկտի: Ներկայումս, այդուհանդերձ, ՓՄՁ սուբյեկտների փոքր մասի նկատմամբ կիրառվում են չափազանց շատ կարգավորումներ՝ թույլտվությունների տրամադրման բարդ ռեժիմի միջոցով, մինչդեռ ահռելի մեծամասնությունը կարգավորումից դուրս է մնում: Այնուամենայնիվ իրականացված հատվածական միջոցառումները որևէ շոշափելի ազդեցություն չեն թողնում Հայաստանի գործարար համայնքի բնապահպանական կատարողականի վրա⁷¹:

Համաձայն մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների՝ «վերջին երկու տարիների ընթացքում, Դուք կամ Ձեր ընկերության աշխատակիցները մասնակցե՞լ են արդյոք բնապահպանական կառավարման համակարգերի, էկո արտադրանքի/ծառայության կամ բնապահպանական այլ թեմայով որևէ ուսուցողական դասընթացի» հարցին դրական պատասխան է տվել հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների միայն 15%-ը: ՓՄՁ-ների 11%-ի դեպքում բնապահպանական կառավարման համակարգերի, էկո արտադրանքի/ծառայության կամ բնապահպանական այլ թեմայով ուսուցողական դասընթացի մասնակցել են հենց ՓՄՁ ղեկավարները: ՓՄՁ-ների 85%-ը որևէ նման դասընթացի չի մասնակցել (Գրաֆիկ 19): Դասընթացներին մասնակցած ՓՄՁ-ները առավել հաճախ «գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «կացության եվ հանրային սննդի կազմակերպում» և «մշակող արդյունաբերության» ոլորտներից են, ընդ որում ընդգծված տարբերակում կապ ՓՄՁ տեղակայման վայրի և մասնակցության միջև առկա չէ. այսպիսի դասընթացներին մասնակցել են և՛ ք. Երևանում, և՛ մարզերում տեղակայված ՓՄՁ-ները: Նշենք նաև, որ այսպիսի դասընթացների համեմատաբար ավելի շատ մասնակցել են մինչև 100 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓՄՁ-ները:

⁷⁰ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.

⁷¹ «Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.






Գրաֆիկ 20. Բնապահպանական կառավարման համակարգերի, Էկո արտադրանքի/ծառայության կամ բնապահպանական այլ թեմայով որևէ ուսուցողական դասընթացի ՓՄՁ-ների մասնակցությունը վերջին երկու տարիների ընթացքում

ՓՄՁ սուբյեկտների ռեսուրսարդյունավետ գործունեության խրախուսումը նույնպես թիրախավորված է եղել ՓՄՁ զարգացման ռազմավարական նպատակներում: Համաձայն առցանց հարցման արդյունքների՝ հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 52%-ը վերջին երկու տարիների ընթացքում իրականացրել է միջոցառումներ/աշխատանքներ, որոնք ուղղված են եղել իրենց արտադրության/ծառայությունների մատուցման գործընթացում ծախսվող ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը (Գրաֆիկ 20): Այսպիսի միջոցառումներ/աշխատանքներ իրականացրած ՓՄՁ-ներն առավել հաճախ «գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «կազմակերպության ել հանրային սննդի կազմակերպում», «մեծածախ ել մանրածախ առևտուր», «մշակող արդյունաբերություն», «մշակույթ, զվարճություններ ել հանգիստ» ոլորտներից են եղել: Ռեսուրսների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ/աշխատանքներ իրականացրած ՓՄՁ-ների միայն 6%-ն է պետական որևէ մարմնից ստացել ֆինանսական աջակցություն, 7%-ը՝ ստացել են տեխնիկական աջակցություն: Միջոցառումներ իրականացրած ՓՄՁ-ների 87%-ը որևէ օժանդակություն չի ստացել պետական մարմիններից: ՓԲԱ զեկույցում 2016 թվականի դրությամբ ռեսուրսների արդյունավետության ապահովման միջոցառումներ ձեռնարկած ընկերությունների 88%-ը որևէ տեխնիկական կամ ֆինանսական աջակցություն չեն ստացել, ուստի կարող ենք ասել, որ ցուցանիշը արձանագրել է 1 տոկոսային կետով բարելավում: Պետական որևէ աջակցություն ստացած ՓՄՁ-ների շուրջ 80%-ը տեղել են գերփոքր ձեռնարկություններ, մնացած 20%-ը՝ «փոքր»: Այս առումով նույնպես առկա է առաջընթաց, քանի որ ՓԲԱ զեկույցի համաձայն աջակցություն են ստացել հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունները, իսկ գերփոքր ձեռնարկությունները ընդհանրապես չեն օգտվել պետական աջակցությունից:





Գրաֆիկ 21: վերջին երկու տարիների ընթացքում միջոցառումների/աշխատանքների իրականացում, որոնք ուղղված են եղել ՓՄՁ արտադրության/ծառայությունների մատուցման գործընթացում ծախսվող ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը



3.8 ԿԱՆԱՆՑ ԶԵՆՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Ձեռներեցության ոլորտում կանանց դերի աճը և հատկապես գյուղաբնակ կանանց տնտեսական գործունեության զարգացումը Հայաստանի գենդերային քաղաքականության հայեցակարգի առանցքային առաջնահերթություններից է⁷²: Սկսնակ կին ձեռներեցիների աջակցությունը Գենդերային քաղաքականության 2011-2015 թթ.-ի ռազմավարական գործողությունների ծրագրի նպատակներից մեկն է⁷³: 2013 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է «Կանանց ձեռներեցության ռազմավարությունը Հայաստանում»: 2013-ից ի վեր ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերը պարունակում են կանանց ձեռներեցությանը նվիրված հատուկ բաժին: ՀՀ կառավարությունը կանանց ձեռներեցության խթանման համար աջակցություն է ստացել Ասիական զարգացման բանկից և մի շարք այլ դոնոր կազմակերպություններից, որոնց շրջանակներում կին գործարարներին ցուցաբերվել է աջակցություն գործը սկսելու, մենթորության, քուլչինգի, ֆինանսական միջոցների հասանելիության, բիզնես խորհրդատվության և այլ աջակցության ձևերով: Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված աջակցության շրջանակներում պատրաստվել է նաև «Հայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում» զեկույցը, որում ամփոփված է նաև կանանց ձեռներեցության վերաբերյալ բավականին համապարփակ տեղեկատվություն⁷⁴:

Կանանց ձեռներեցության վերաբերյալ հայեցակարգային մի շարք դրույթներ արտացոլված են նաև ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունում, որտեղ ռազմավարական նպատակ 7-ը սահմանում է, որ անհրաժեշտ է «ընդլայնել կին ձեռներեցիներին տրամադրվող ուղղակի աջակցության և խորհրդատվական միջոցառումները»: Կանանց ձեռներեցության խթանմանն ուղղված միջոցառումների նպատակը «կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով ձեռներեցիների շրջանում գործարար կանանց հարաբերակցության, ինչպես նաև ձեռներեցության ոլորտում նրանց դերի մեծացումն է, ինչը կնպաստի երկրում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը և հետևաբար տնտեսական աճին⁷⁵»: ՓՄՁ ՉԱԿ կողմից 2016-2018թթ. ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված կանանց ձեռներեցության զարգացմանը, որոնց թվում են՝ տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական բնույթի

ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը սեռային տարանջատմամբ թերի է իրականացվում, ինչը հնարավորություն չի տալիս պատկերացնում կազմել այս ոլորտում կանանց ներգրավվածության և դերի մասին

Կանանց բիզնեսների մեծամասնությունը ոչ միայն հիմնականում անհատական կամ միկրո մակարդակի ձեռնարկություններ են, այլ դրանք նաև զբաղեցնում են որոշակի ոլորտներ՝ կենտրոնանալով առևտրի, ծառայությունների և փոքրածավալ արտադրության՝ հաճախ տնային պայմաններում ստեղծված արտադրանքի վրա

Թեև ֆորմալ առումով առկա չեն կին ձեռնարկատերերի ֆինանսավորման սահմանափակումներ, սակայն խոչընդոտներ առաջանում են կապված գրավի բացակայության, ձեռներեցության փորձի պակասի, բարձր տոկոսադրույքների, ռիսկի դիմելու ցանկության պակասի պատճառով

⁷² Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգ

⁷³ Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագիր 2011-2015թթ.,

⁷⁴ Տես ավելին՝ «Հայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում», Ասիական զարգացման բանկ, հուլիս 2015

⁷⁵ ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարություն

միջոցառումների իրականացումը: Կանանց ձեռներեցության զարգացման պետական ծրագրից բացի, բազմաթիվ դրամաշնորհատուներ, միջազգային կազմակերպություններ և ՀԿ-ներ ևս ունեն կանանց ձեռներեցության զարգացման ու գործարարության վերաբերյալ դասընթացների ծրագրեր: Բանկերի կողմից նույնպես կան պրոդուկտներ, որոնք առաջարկում են ավելի մատչելի վարկեր կին ձեռնարկատերերի համար: Գործում են նաև կանանց ասոցիացիաներ, ինչպես օրինակ «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան» Է: 2017 թվականից իրականացվում է ՀՀ վարչապետի՝ «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխությունը: Այս ծրագրերի արդյունավետությունը փորձագետների կողմից գնահատվել է հիմնականում բավարար:

Չնայած իրականացված աշխատանքներին և արձանագրված առաջընթացին, կանանց ձեռներեցության ոլորտը դեռևս մնում է խոցելի և առկա են մի շարք ուղղություններ, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության մշակման ընթացքում:

Սեռային տարանջատմամբ վիճակագրական տվյալների բացակայություն: ՓՄՁ զարգացման ոլորտի վերլուծությունն ըստ գենդերային բնութագրիչների դժվարանում է գործարար աշխարհում կանանց և տղամարդկանց վերաբերյալ թերի վիճակագրական տվյալների պատճառով: Առկա վիճակագրական տվյալները հակասական պատկերացում են տալիս ՓՄՁ սեկտորում ներգրավված կանանց թվի վերաբերյալ: Մի շարք պաշտոնական տվյալներ սեռային տարանջատմամբ չեն վարվում և միայն մասնակի պատկերացում են տալիս մասնավոր ձեռնարկություններում կանանց դերի մասին:

Կանանց ձեռներեցության վերաբերյալ առկա են մի շարք վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են 2009-ից 2014 թվականներին և հիմնականում պարունակում են հակասական տեղեկատվություն: Ըստ տարբեր գնահատականների կանայք կազմում են ակտիվ ձեռնարկատերերի 20%-ից 25%-ը: Համաձայն ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգի» կանայք կազմում են բիզնեսի սեփականատերերի 20%-25%-ը, ինքնազբաղվածների՝ 36.2%-ը և գործատուների՝ 10.3%-ը⁷⁶: Հայաստանի գործատուների հանրապետական միություն կողմից տրամադրված տվյալների համաձայն ակտիվ ձեռնարկություններից 20.7%- ի սեփականատերերը կանայք են՝ շուրջ 78,000 ձեռնարկություններից 16,200-ը (2014թ.)⁷⁷: Համաձայն «Հայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում» զեկույցի կանայք ներկայացնում են ձեռներեցների և միկրո ձեռնարկությունների մոտ 30%-ը (50,000 ձեռնարկություններից 15,000-ը)⁷⁸: Սույն հետազոտական ծրագրի շրջանակներում իրականացված առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 41%-ը վարվել են կին ձեռնարկատերերի կողմից: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բիզնեսի սեփականատեր հանդիսանալը կնոջ դեպքում դեռևս չի նշանակում զբաղվել գործարարությամբ, քանի որ շատ հաճախ բիզնեսի «իրական սեփականատերերը» տղամարդիկ են:

⁷⁶ ՀՀ կառավարություն. 2010թ., Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգ, Երևան, Էջ 11:

⁷⁷ Արտացոլված է՝ «Հայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում» զեկույցում, Ասիական զարգացման բանկ, հուլիս 2015

⁷⁸ Արտացոլված է՝ «Հայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում» զեկույցում, Ասիական զարգացման բանկ, Մանիլա, 2015թ.



Այսպիսով, կանանց կողմից նախաձեռնված կամ ղեկավարությամբ գերփոքր և ՓՄՁ ձեռներեցության մասով իրավիճակի և միտումների գնահատման համար պաշտոնական վիճակագրական տվյալներ չեն հրապարակվում, ինչի պատճառով նաև դժվար է դառնում ոլորտային վերլուծությունները և առաջարկությունների ներկայացումը:

Ոչ ֆորմալ գործարարությունը կանանց շրջանում: ՓՄՁ-ների պետական աջակցության ռազմավարությունը «կանանց պատկանող բիզնեսը» սահմանում է որպես «կնոջ կողմից ղեկավարվող կամ կապիտալում կնոջ կողմից առնվազն 30% ներդրում ունեցող ձեռնարկություն»: Մի կողմ թողնելով «կնոջը պատկանող բիզնես» սահմանման շուրջ հնարավոր քննարկումները իրավական հարթությունում, նկատենք, որ ռազմավարությունը ճանաչում է միայն «ձեռնարկությունը» և ոչ ֆորմալ հատվածում ներգրավված կանայք կարող են դուրս մնալ առաջարկվող զարգացման մոդելներից: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, կանայք կարող են ներգրված լինել ոչ ֆորմալ կամ միկրո բիզնեսում (ինչպես օրինակ մանր առևտուր, արհեստագործական իրերի արտադրություն տնային պայմաններում, հուշանվերների պատրաստում և այլն)՝ միևնույն ժամանակ դուրս մնալով «գործարարության» ընդունված սահմանումներից: Էքսպերտային հարցազրույցների արդյունքների համաձայն, այս կանայք կարիք ունեն լրացուցիչ աջակցության «անհատական» կամ ոչ ֆորմալ գործարարության դաշտից տեղափոխվելու գերփոքր կամ փոքր բիզնեսի դաշտ:

Կանանց ձեռնարկատիրական գործունեության ոլորտները: Կանանց բիզնեսների մեծամասնությունը ոչ միայն հիմնականում անհատական կամ միկրո մակարդակի ձեռնարկություններ են, այլ դրանք նաև զբաղեցնում են որոշակի ոլորտներ՝ կենտրոնանալով առևտրի, ծառայությունների և փոքրածավալ արտադրության՝ հաճախ տնային պայմաններում ստեղծված արտադրանքի վրա: Կանանցից շատերն ունեն ծառայությունների մատուցման բիզնեսներ հիմնականում այն ոլորտներում, որոնց ծանոթ են կամ որոնք սպասարկում են այլ կանանց, օրինակ՝ կարուճն, գեղեցկության սրահներ, ժամանց, հյուրասիրություն և զբոսաշրջություն (հյուրատների կառավարում), կրթություն (մանկապարտեզներ կամ ուսուցում), մշակույթ (պարի կամ երաժշտության դասեր) և խորհրդատվություն: Գյուղական վայրերում կանայք ներգրավված են սննդի արտադրությունում (օրինակ՝ պանրագործություն, կաթնամթերքի մշակում, բույսերի աճեցում, չրի և խմորեղենի պատրաստում), բայց ոչ մեծ ծավալի արտադրություն: Կանայք նաև զբաղվում են առևտրով՝ ներառյալ արտասահմանից ապրանքի ներկրմամբ՝ Յայաստանում վերավաճառելու նպատակով: Ի հակադրություն այս ամենի, նշվում է, որ տղամարդկանց մեծ մասը ձեռներեց գործունեություն սկսում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացող ոլորտում, սակայն գրեթե ոչ մի կին այդ ոլորտում նման գործունեություն չի ծավալում⁷⁹:

Գենդերային կարծրատիպեր և կին ձեռնարկատերերի առանձնահատուկ կարիքները: Համաձայն ԱԶԲ կողմից իրականացված հետազոտության գենդերային դերերը, ինչպես նաև կանանց բիզնեսի վերաբերյալ կարծրատիպերը բավականին ազդեցիկ են: Կանայք, ովքեր ցանկանում են զբաղվել գործարարությամբ, ժամանակի սղության պատճառով ավելի շատ բարդությունների են հանդիպում, քան տղամարդիկ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք պետք է համատեղեն գործարար պատասխանատվությունը ընտանեկան պարտականությունների հետ: Ինչպես պատկերավոր ներկայացվել է այս

⁷⁹ «Յայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում» զեկույցում, Ասիական զարգացման բանկ, հուլիս 2015



հետազոտությունում՝ «գործարարությամբ զբաղվելը կնոջը չի ազատում տնային տնտեսություն վարելու և երեխաներին խնամելու պարտականություններից»:

Կին ձեռնարկատերերի շրջանում իրականացված հետազոտության արդյունքների համաձայն, հարցվողներից շատերը նշել են, որ բիզնես միջավայրը Հայաստանում ունի բազմաթիվ մարտահրավերներ սկսնակների համար, սակայն գենդերային խտրականությունը դերակատարում չունի այս իմաստով: Գենդերային խտրականության իրենց անձնական փորձ մասին հարցին ի պատասխան գրեթե բոլոր ձեռներեց կանայք (95%) նշել են, որ իրենք չեն ենթարկվել ակնհայտ անհավասար վերաբերմունքի⁸⁰:

Ֆինանսավորման հասանելիությունը կին ձեռնարկատերերի համար: Կանանց համար միկրոֆինանսավորման շատ տարբերակներ կան, և վարկավորման պահանջները գենդերային սահմանափակումներ չեն դնում, միևնույն ժամանակ շուկայում առկա են վարկատեսակներ, որոնք նախատեսված են հենց կին ձեռնարկատերերի համար: Կանայք որևէ առանձնահատուկ արգելքի չեն հանդիպում վարկ ստանալիս, քանի դեռ նրանք աշխատում են և համապատասխանում են վարկավորման պահանջներին: Այնուամենայնիվ, համաձայն ԱԶԲ հետազոտության, դե ֆակտո վարկերը կանանց համար հասանելի չեն գրավի բացակայության, ձեռներեցության փորձի պակասի, բարձր տոկոսադրույթների, ռիսկի դիմելու ցանկության պակասի պատճառով: Մյուս կողմից փոքրաթիվ կանայք ունեն անկախ սեփականություն, նրանք նաև անկախ չեն իրենց գույքի օգտագործման համար որոշումներ կայացնելու գործում (օրինակ՝ վարկի համար գույքը գրավադրելու հարցում): Երբ կանայք ունենում են համատեղ սեփականություն, կամ նույնիսկ ամբողջությամբ սեփականատեր լինելու դեպքում, սովորաբար «ընտանիքի հայրը, եղբայրը կամ ամուսինն են հոգ տանում գույքի մասին, որը օրինականորեն պատկանում է կնոջը կամ ընտանիքի մորը»⁸¹:

Համաձայն մեր կողմից իրականացված հետազոտության շրջանակներում ներգրավված փորձագետների, ձեռնարկատիրական գործունեություն նախաձեռնելու հարցում կանայք առավել անինքնավստահ են և ունեն տեղեկատվության ստացման և լրացուցիչ աջակցության կարիք: Սակայն իրագործվող մի շարք ծրագրեր, հիմնականում՝ դոնորական աջակցությամբ, լուծում են առավելապես տեղական և փոքրածավալ խնդիրներ, ավելի շատ ուղղված են սկսնակ կամ գերփոքր գործարարության աջակցելուն՝ պակաս ուշադրություն դարձնելով ՓՄՁ-ներին: Մյուս կողմից, սոցիալական ձեռնարկատիրությունը, ինչը հետզհետե ավելի է տարածվում Հայաստանում, ավելի հաճախ նախաձեռնվում և/կամ ղեկավարվում է կանանց կողմից:

⁸⁰ Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2014թ., Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման գնահատում, Երևան

⁸¹ Study on Women's SMEs in Armenia. Consultant's report. Unpublished. /2013թ. Հայաստանում կանանց ՓՄՁ-ների ուսումնասիրություն, խորհրդատուի հաշվետվություն, Հրապարակված չէ/, արտացոլված է «Հայաստան. Երկրի գենդերային իրավիճակի գնահատում» զեկույցում, Ասիական զարգացման բանկ, հուլիս 2015 զեկույցում
ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ | ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈՒՆԻՑԻԱ
ԵՐԵՎԱՆ 2018

3.9 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԵՆՈՒՄԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄ

Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում զարգացման առաջին քայլերն է անում: Այն, որպես այդպիսին, իրավակազմակերպական ձև չի համարվում. սոցիալական ձեռնարկությունները կարող են լինել շահույթի նպատակ հետապնդող կամ չհետապնդող և հանդես գալ որպես կոոպերատիվ, ՔՀԿ, այլ փոխադարձ կազմակերպություն, ինչպես օրինակ հիմնադրամ, սոցիալական ձեռնարկություն կամ բարեգործական կազմակերպություն:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից»: Համաձայն այս օրենքի կազմակերպությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում, կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ: Արգելվում է կամավորներին ներգրավել կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ:

ՍՁ առանձնահատուկ կարիքները: Սոցիալական ձեռնարկությունները գործում են նույն օրենսդրական դաշտում ինչ ՓՄՁ-ները, և համաձայն փորձագետների գնահատականների, ունեն այն նույն հիմնախնդիրները, որոտային առաջնահերթությունները և կարիքները ինչ ՓՄՁ-ները: Սակայն ի տարբերություն ՓՄՁ-ների, ՍՁ-ների հիմնախնդիրներն առավել սուր են, քանի որ ՍՁ-ների կողմից ստացված շահույթներն ուղղվում են սոցիալական հիմնախնդիրների լուծմանը և նույն բիզնես միջավայրում այլ ընկերությունների հետ մրցակցելը ՍՁ-ների դեպքում դառնում է ավելի դժվար: ՍՁ-ների համար ավանդական բիզնեսի հետ մրցակցությունը տեղի է ունենում անհավասար պայմաններում, մասնավորապես կապված հետևյալ առանձնահատկությունների հետ՝

- ՍՁ-ներում սովորաբար ներգրավվում են հատուկ կարիքներով մարդիկ կամ սոցիալական խոցելի այլ խմբերի ներկայացուցիչներ: Հատուկ կարիքներով մարդկանց և խոցելի այլ խմբերի ներկայացուցիչների ուսուցումը ժամանակատար և ծախսատար գործընթացը է և ՍՁ-ները

ՍՁ-ները գործում են նույն օրենսդրական դաշտում ինչ ՓՄՁ-ները և ունեն նույն հիմնախնդիրները, որոտային առաջնահերթությունները և կարիքները ինչ ՓՄՁ-ները

ՍՁ-ների հիմնախնդիրներն առավել սուր են, քանի որ ՍՁ-ների կողմից ստացված շահույթներն ուղղվում են սոցիալական հիմնախնդիրների լուծմանը և նույն բիզնես միջավայրում այլ ընկերությունների հետ մրցակցելը ՍՁ-ների դեպքում դառնում է ավելի դժվար



այս նպատակին հասնելու համար լրացուցիչ ռեսուրսներ են ներդրում, քանի որ սովորաբար այս խմբերի ներկայացուցիչները չեն ունենում բավարար կարողություններ և հմտություններ, այն դեպքում, երբ ՓՄՁ-ները կարող են ներգրավել աշխատաշուկայում արդեն իսկ վերապատրաստված և կարողություններ ունեցող և ավելի մրցունակ կադրերի:

- Պայմանավորված նախնական կարողությունների և հմտությունների թերի լինելու հետ՝ ՍՁ-ների կողմից ներգրավված աշխատուժի աշխատանքն ունենում է ցածր արտադրողականություն:
- ՍՁ-ները սահմանափակված են օգտվելու շահույթի բաշխման լայն հնարավորություններից:
- ՔՀԿ սեկտորի կողմից իրականացվող ՍՁ-ների դեպքում բիզնես մտածողության չի գերիշխում:
- Շահերի և իրավունքների պաշտպանության առումով ՍՁ-ներն առավել խոցելի են, քանի որ գործելով ձեռնարկատիրական դաշտում և ունենալով բիզնեսին բնորոշ բոլոր խնդիրները, միևնույն ժամանակ իրենց առջև ունեն շատ կարևոր սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտություն՝ իրենց ամենօրյա գործունեության արդյունքում անընդհատ բախվելով վերաբերմունքային և արժեքային կարծրատիպերի:

Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի զարգացման համար փորձագետներն առաջարկել են հետևյալ ուղղությունները՝

- հստակեցնել ՍՁ-ների աշխատանքում կամավորության ինստիտուտի դերը՝ արտոնություններ տալով միայն ՍՁ-ներին և բացառելով խոշոր բիզնեսի կողմից այսպիսի ռեսուրսի չարաշահումը:
- ոլորտին հատուկ ուշադրություն՝ ֆինանսավորման, վարկային ավելի ցածր տոկոսադրույքների, տեխնիկական և խորհրդատվական աջակցության մասերով՝ հաշվի առնելով, որ ՍՁ-ների մոտ բիզնես բաղադրիչը պետք է լինի շատ ավելի ուժեղ, քան սովորական բիզնեսինը պայմանավորված շահույթի բաշխման հնարավորությունների սահմանափակությամբ ՍՁ-ների դեպքում:
- Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի հետագա զարգացման և ընդլայնման համատեքստում փորձագետները կարևորել են ոլորտում տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ունեցող վերապատրաստողների առկայությունը, մասնավորապես առաջարկվում է ոլորտում գործող ՍՁ-ների հիմնադիրներին, նախաձեռնողներին վերապատրաստել որպես թրեյներներ:

Համաձայն փորձագետների, սոցիալական ձեռնարկատիրության ոլորտը ըստ էության դեռևս գտնվում է սաղմնային զարգացման շրջանում և Էական ազդեցություն աշխատատեղերի ստեղծման, համայնքային տնտեսությունների զարգացման վրա դեռևս չունի: Այս ուղղությամբ կրթական, խորհրդատվական և ֆինանսների հասանելիության հարցերով պետական, ՀԿ-ների և դոնորական Էական աջակցությունը կարող է ապահովել թռիչքաձև աճ՝ մի ամբողջ շարք դրական սոցիալական ազդեցություններով:




ԲԱԺԻՆ 4. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՈԼՈՐՏԱՅԻՆ
ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



4.1 ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է ՓՄՁ ոլորտի կարիքների առաջնահերթությունները ըստ ՓՄՁ-ների և հարցազրույցներին մասնակցած փորձագետների: Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ներին առաջարկվել է գնահատել իրենց բիզնեսին առնչվող գործոնները 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ոլորտը բիզնեսի վրա ունի լիովին բացասական ազդեցություն, 5-ը՝ լիովին դրական: Համաձայն արդյունքների՝ բոլոր ոլորտները գնահատվել են հիմնականում բացասական, ընդ որում բոլոր ոլորտներին ՓՄՁ-ների շուրջ 30%-ը տվել են «լիովին բացասական» գնահատական, իսկ 20%-ը՝ ավելի շուտ բացասական: ՓՄՁ-ների շուրջ 35%-ը առաջարկվող ոլորտների համար տվել է «չեզոք» գնահատական և միայն 16%-ն է ազդեցություն ունեցող ոլորտները գնահատել դրական (Գրաֆիկ 19):



Գրաֆիկ 22. ՓՄՁ սեկտորի վրա ազդեցություն ունեցող ոլորտների գնահատում ՓՄՁ-ների կողմից

Ոլորտի կարիքները և խնդիրներն ըստ ՓՄՁ ներկայացուցիչների: Առցանց հարցման միջոցով ՓՄՁ-ներին հնարավորություն է տրվել ներկայացնել իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները՝ առանց ուղղորդելու վերջիններիս պատասխանները: Հնչած 523 պատասխանների տարբերակների շարքում առավել հաճախ նշվել են «շուկայի մեծությանը և գերհագեցվածության» ոլորտի հիմնախնդիրներ, որին հաջորդում են «ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիության» և «հարկային վարչարարության» ոլորտներին վերաբերող հիմնախնդիրները (Աղյուսակ 19): Նշենք, որ 2015 թվականին իրականացված «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները» զեկույցի (2015թ.)⁸² և «Համաշխարհային մրցունակության զեկույցի» (2017թ.) արդյունքների հետ համադրության համատեքստում փոխվել է ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնների կազմը: Եթե այս երկու հետազոտություններում առաջին տեղում «ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունն» էր որպես ամենակարևոր խոչընդոտող գործոն, ապա այժմ ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող ամենակարևոր ոլորտը շուկայի փոքրությունն է և գերհագեցվածություն: Մյուս կողմից «կոռուպցիան» որպես զարգացմանը խոչընդոտող գործոն, որը վերոնշյալ երկու հետազոտություններում եղել է ըստ կարևորության համապատասխանաբար 5-րդ և 4-րդ գործոնը, մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքներով կարելի է ասել բացակայում է: «Կոռուպցիան» որպես բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոն նշել են հարցմանը մասնակցած 331 ՓՄՁ-ներից միայն 2-ը: Կոռուպցիայի փոխարեն, որպես կարևոր գործոններ նշվել են պետական աջակցության բացակայությունը, օրենսդրական դաշտի թերությունները, պետական հաստատությունների ցածր պրոֆեսիոնալիզմ և անգործություն, արհեստական խոչընդոտներ պետական և ՏԻՄ մարմինների կողմից գործոնները: «Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները» զեկույցում (2015թ.) նշվել են նաև այլ գործոններ, որոնք բացակայում են մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքներում, ինչպես օրինակ «քաղաքական կամքի բացակայությունն» է կամ «դատական համակարգի անկատարությունը»: Որպես ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոններ նշվել են նաև «որակյալ կադրերի բացակայությունը աշխատաշուկայում», «մրցակցության անհավասարություն, այդ թվում մենաշնորհների առկայությունը», «անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների անհասանելիություն, տեղեկատվության մատչելիության պակասը» և այլ գործոններ (Աղյուսակ 19):

N	ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող գործոններ	Հնչած պատասխանի քանակ	% պատասխ. կազմում
1	Շուկայի փոքրություն , գերհագեցվածություն, գնողունակ պահանջարկի բացակայություն, ոլորտի ցածր շահութաբերություն բարձր մրցակցության պատճառով	115	23%
2	Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիություն, այդ թվում վարկերի բարձր տոկոսադրույթներ	88	18%
3	Հարկային վարչարարություն , այդ թվում եկամտահարկի բարձր դրույքաչափ	85	17%
4	Որակյալ կադրերի բացակայությունը աշխատաշուկայում	48	10%
5	Պետական աջակցության բացակայություն , օրենսդրական դաշտի թերություններ, պետական հաստատությունների ցածր պրոֆեսիոնալիզմ և անգործություն, արհեստական խոչընդոտներ	45	9%

82



	պետական և ՏԻՄ մարմինների կողմից		
6	Շուկայական մրցակցության անհավասարություն , այդ թվում մենաշնորհների առկայություն	19	4%
7	Անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների անհասանելիություն , տեղեկատվության մատչելիության պակաս	13	3%
8	Չարգացման հեռանկարի, ներդրումային ծրագրերի, նպաստավոր բիզնես միջավայրի բացակայություն, անկայունություն, ոչ նպաստավոր աշխարհագրական դիրք, ազգային արժույթի անկայունություն	13	3%
9	Ենթակառուցվածքներ. Էներգամետուրսների բարձր գներ, միջհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ	11	2%
10	Սոցիալ-տնտեսական իրավիճակ, արտագաղթ, աղքատություն	11	2%
11	Տնտեսության թերզարգացվածությունը	9	2%
12	Հումքի ձեռքբերման և գնման դժվարություններ, տրանսպորտային բարձր ծախսերը, ներմուծման և արտահանման դժվարություններ	8	2%
13	Տեխնիկական հագեցվածության բացակայություն/պակաս, որակյալ սերտիֆիկացման հնարավորության բացակայությունը	7	1%
14	Համագործակից գործընկերների հետ կապերի հաստատման դժվարությունները	5	1%
15	Անշարժ գույքի ձեռքբերման դժվարություններ	4	1%
16	Այլ գործոններ	11	2%

Աղյուսակ 8. ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող գործոնների ընդհանրացված ցանկ

Քննարկենք ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող 5 առավել կարևոր գործոններն առանձին-առանձին՝

- 1. Շուկայի փոքրություն, գերհագեցվածություն, գնողունակ պահանջարկի բացակայություն, ոլորտի ցածր շահութաբերություն բարձր մրցակցության պատճառով:** Խոչընդոտող հաջորդ գործոնը, որն առավել հաճախ է նշվել ՓՄՁ-ների կողմից (23% դեպքերում) կապված է շուկայի կոնյուկտուրայի հետ, մասնավորապես շուկայի փոքր լինելու, քաղաքացիների կողմից վճարունակ պահանջարկի ցածր լինելու, մրցակցության անկառավարելիության և շուկայի գերհագեցվածության, բարձր մրցակցության պատճառով ոլորտի ցածր շահութաբերության հետ:
- 2. Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիություն:** Ըստ առաջնահերթության հարկային ոլորտի հետ գրեթե նույն հորիզոնականում է ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիության հիմնախնդիրը: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ներից 62-ը նշել են այս ոլորտը որպես խոչընդոտող հիմնախնդիր, իսկ 26-ը մասնավորապես մատնանշել են վարկերի բարձր տոկոսադրույթները որպես խոչընդոտող գործոն: Բացի այդ ՓՄՁ-ները խոսել են նաև վարկի ստացման դժվարությունների մասին, մասնավորապես գործարարների դեպքում, ովքեր նախկինում չեն ունեցել վարկային պատմություն կամ վարկային պատմությունը լավ չէ: ՓՄՁ-ների կողմից դժգոհություն է առաջացրել նաև վարկերի տրամադրման համար գրավադրման պահանջի առկայությունը՝ հատկապես գյուղատնտեսության ոլորտում:
- 3. Հարկային ծանր բեռը ՓՄՁ սեկտորի համար:** ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող ամենակարևոր գործոններից հաջորդը ըստ հնչած պատասխանների եղել է հարկային ծանր բեռը, որը ենթադրում է և՛ հարկային բարձր դրույքաչափերը (այդ թվում եկամտային հարկի դրույքաչափը), և՛ հարկային վարչարարությունը: Հարցմանը



մասնակցած 331 ՓՄՁ-ներից 85-ը նշել են այս ոլորտը որպես իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոն: Որպես առանձին գործոն նշվել է նաև եկամտային հարկի բարձր դրույքը: Համաձայն ՓՄՁ-ների հարկերը պետք է լինեն պարզ, հասկանալի և կայուն, սակայն Հայաստանում դա այդպես չէ:

- **Հարկային հաշվետվությունների վարման դժվարություններ:** Հարկային հաշվապահության վարման ձևը դժվարություն է ներկայացնում ՓՄՁ-ների համար: Օրինակ՝ շրջանառության հարկով աշխատող ԱՁ-ն եռամսյակը մեկ անգամ պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել հարկային մարմնին, որը պահանջում է մասնագիտական գիտելիքներ: Հաջորդ տարի սահմանված ժամկետում հարկային մարմնին դիմում չներկայացնելու դեպքում գործունեությունը կհայտնվի ընդհանուր հարկման դաշտում: Հարկային մարմինները որևէ պարտավորություն չեն կրում նախապես ծանուցում իրականացնելու համար:
- **Եկամտային հարկի և արձակուրդային վճարների վճարման դժվարություններ:** ՓՄՁ-ները եկամտային հարկի դրույքաչափը համարում են բարձր, որը խոչընդոտում է բիզնեսի զարգացմանը: Համաձայն ՓՄՁ ներկայացուցիչներից մեկի՝ ԱՁ-ն, որն ունի 2 կամ 3 աշխատող ի վիճակի չէ աշխատողին վճարել արձակուրդային վճարները, քանի որ աշխատավարձային վճարումներն իրականացնում է օրվա վաճառքից: ՓՄՁ ներկայացուցիչն առաջարկում է վճարած հարկերից իրականացնել աշխատողների արձակուրդային վճարների փոխհատուցում:
- **ԱԱՀ վճարող և շրջանառության հարկ վճարող ձեռնարկությունների համագործակցության դժվարություններ:** Համաձայն ՓՄՁ-ների ԱԱՀ վճարող ձեռնարկությունների և շրջանառության հարկ վճարող ձեռնարկությունների համագործակցությունը գրեթե անհնար է տարբեր հարկման դաշտերում գործելու հանգամանքով պայմանավորված, ինչի պատճառով շրջանառության հարկ վճարող առավել փոքր ձեռնարկությունները չեն կարողանում օգտվել շուկայի ընդլայնման հնարավորություններից և գտնել համապատասխան շուկաներ իրացման համար:
- **Կադրային քաղաքականություն:** ՓՄՁ սեկտորի աշխատողների համար գործում են Կադրային քաղաքականության և աշխատանքի ձևակերպումների հետ կապված նույն նորմերը, որոնք նախատեսված են խոշոր բիզնեսի և այլ աշխատողների համար: Աշխատանքային օրենսդրության խիստ պահանջները հավասարապես գործում են նաև ՓՄՁ-ների նկատմամբ, օրինակ՝ հանգստյան օրերին աշխատելը, արտաժամյա աշխատանքը և այլն, ինչը դժվարությունների առաջ է կանգնեցնում ՓՄՁ-ներին:

4. Որակյալ կադրերի բացակայությունը աշխատաշուկայում: Հատկանշական է, որ որակյալ կադրերի բացակայությունը աշխատաշուկայում արձանագրվել է որպես ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող 4-րդ գործոն, իսկ անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների անհասանելիություն, տեղեկատվության մատչելիության պակասը որպես 6-րդ գործոն, ինչը թեևս նշանակում է, որ կրթական համակարգից սպասելիքները



մնում են բարձր, իսկ բիզնեսի վարման և մարքեթինգի տեսանկյունից կրթական համակարգը դեռևս չի կարողանում բավարարել ՓՄՁ ոլորտի կարիքները:

- 5. Պետական ոլորտի կողմից աջակցության բացակայություն:** Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ներից 45-ը որպես իրենց բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոն նշել են պետական աջակցության բացակայությունը: Մյուս կողմից, եղել են ՓՄՁ-ներ որոնք մատնանշել են, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծվում են արհեստական խոչընդոտներ: Որպես խոչընդոտող գործոն նշվել է նաև պետական հաստատությունների ցածր պրոֆեսիոնալիզմը և անգործությունը:

ՓՄՁ-ների առանձնահատուկ կարիքները: ՓՄՁ կարիքների ցանկում ՓՄՁ-ների կողմից առանձնահատուկ շեշտադրվել են նաև հետևյալ խոչընդոտները՝

- **Մարքեթինգային և գովազդային ծառայությունների բարձր գները:** Գովազդային ընկերությունների ծառայությունների համար առաջարկվող արժեքները բավականին բարձր են և շատ քիչ մեղիա ընկերություններ ունեն ՓՄՁ փաթեթներ, իսկ եղած փաթեթներն էլ մեծ հաշվով անարդյունավետ են: ՓՄՁ-ներն առավել հաճախ կիրառում են սոցիալական ցանցերում գովազդային արշավներ (ինչը չի խթանում տեղական մարքեթինգային և գովազդային ծառայություններ մատուցող ընկերությունների արտադրանքը և ենթադրում է ֆինանսական միջոցների արտահոսք երկրից դուրս): Հատկապես սկսնակ բիզնեսներն ունեն որակյալ մարքեթինգային և բրենդի մշակման ծառայությունների կարիք, որոնք մատչելի չեն ՓՄՁ-ների համար: Բիզնես ավտոմատացման ներդրումը նույնպես պահանջում է մեծ ֆինանսական ներդրումներ:
- **Նախագծա-շինարարական փաստաթղթերի պահանջների բարդ պահանջները:** Փոքր արհեստանոցների կառուցումը ենթադրում է նախագծային, փորձաքննական և այլ փաստաթղթերի կազմում, որը հավելյալ ծախս է սկսնակ բիզնեսի համար: Այդպիսի շինությունը պահանջվում է կառուցել լիցենզավորված շինարարի կողմից՝ միջինում 100մք շուրջ 4 մլն դրամ արժեքով, ինչը հնարավորություն չի տալիս անհատական աշխատող ինքնազբաղվածին ընդլայնել բիզնեսը:



ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող գործոններ	Հնչած պատասխ. քանակ	% ընդամենը պատասխ., կազմում
Հարկային ծանր բեռը ՓՄՁ սեկտորի համար	80	15.3%
Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը	62	11.9%
Շուկայի փոքր լինելը	36	6.9%
Քաղաքացիների վճարունակ չլինելը	32	6.1%
Անկառավարելի մրցակցությունը և շուկայի գերհագեցվածությունը	31	5.9%
Վարկերի բարձր տոկոսադրույթներ	26	5.0%
Խոչընդոտող գործոններ չկան	24	4.6%
Որակյալ կադրերի բացակայությունը աշխատաշուկայում	21	4.0%
Պետական աջակցության բացակայությունը	20	3.8%
Մարդկային ռեսուրսների սակավություն	19	3.6%
Ոլորտի ցածր շահութաբերությունը բարձր մրցակցության պատճառով	16	3.1%
Թերի օրենսդրական դաշտը	15	2.9%
Հավասար մրցակցային միջավայրի բացակայությունը	10	1.9%
Տնտեսության թերզարգացվածությունը	9	1.7%
Մենաշնորհների առկայություն	9	1.7%
Հումքի ձեռքբերման և գնման դժվարություններ	7	1.3%
Անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների անհասանելիություն	7	1.3%
Էներգամետուրսների բարձր գները	6	1.1%
Տեղեկատվության մատչելիության պակաս	6	1.1%
Եկամտային հարկի բարձր տոկոսադրույթները	5	1.0%
Համագործակից գործընկերների հետ կապերի հաստատման դժվարությունները	5	1.0%
Միջհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ	5	1.0%
Որակյալ կրթության բացակայություն	5	1.0%
Աղքատության բարձր շեմ	5	1.0%
Պետական հաստատություններ ցածր պրոֆեսիոնալիզմը և անգործությունը	4	0.8%
ՏԻՄ-երի և մարզպետարանների կողմից արհեստական խոչընդոտներ ստեղծելը	4	0.8%
Տրանսպորտային բարձր ծախսերը	4	0.8%
Ներմուծման ու արտահանման դժվարություններ	4	0.8%
Տեխնիկական հագեցվածության բացակայություն/պակաս	4	0.8%
Անշարժ գույքի ձեռքբերման դժվարություններ	4	0.8%
Արտագաղթի բարձր տեմպեր	4	0.8%
Անպատճելիության մթնոլորտը	3	0.6%
Աշխատուժի բարձր գին	3	0.6%
Ոչ բարենպաստ ներդրումային միջավայր	3	0.6%
Աշխարհագրական դիրքը	3	0.6%
Արմատավորված կոռումպացված համակարգ	2	0.4%
Ապրանքի գովազդման դժվարություններ	2	0.4%
Տնտեսական ճգնաժամ/անկայունություն	2	0.4%
Բիզնես միջավայրի բացակայություն	2	0.4%
Վարչարարության պատճառով ստեղծվող խոչընդոտներ	2	0.4%
Սոցիալ-տնտեսական իրավիճակ	2	0.4%
Ապրանքների բարձր գներ	1	0.2%
Որակյալ սերտիֆիկացման հնարավորության բացակայությունը	1	0.2%
Վիզայի ստացման դժվարությունները (Շենգեն, ԱՄՆ վիզա)	1	0.2%
Վստահության պակաս գործընկերների շրջանում	1	0.2%
Կապի միջոցների անհասանելիություն	1	0.2%
Ժամանակակից տեխնոլոգիաների բացակայություն/ներդրման դժվարություն	1	0.2%
Կարծրատիպային մտածելակերպ	1	0.2%
Չարգացման հեռանկարի բացակայություն	1	0.2%
Ազգային արժույթի անկայունություն	1	0.2%
Ներդրումային ծրագրերի բացակայություն	1	0.2%
Ընդամենը տարբերակներ	523	100.0%

Աղյուսակ 9. ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող գործոնների ընդլայնված ցանկ

ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ | ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ
ԵՐԵՎԱՆ, 2018



Փոքր և միջին տնտեսվարող սուբյեկտների արդյունավետ գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոնները, որոնք կարող են համարվել առաջնահերթություններ հետագա ռազմավարության մշակումների համար, համաձայն փորձագիտական գնահատականների, հետևյալն են՝

- **Հարկային ոլորտը**

Հարկային համակարգը ներկայումս աշխատում է պատժիչ մեթոդներով: Հարկային օրենսդրությունը խճճված և խրթին է ՓՄՁ-ների համար՝ առկա են տարբեր հարկատեսակներ և հարկման ձևեր, որոնցում կողմնորոշվելը դժվար է: Հարկային դաշտը և փոփոխությունները կանխատեսելի չեն և պետք է լինեն այդպիսին առնվազն 3 տարվա համար: Եկամտային հարկի դրույթաչափը բարձր է: Հարկային/մաքսային գործընթացները բարդ են և անբավարար է վարչարարությունը: Այս ոլորտում առկա է կոռուպցիա և իրազեկվածության ցածր մակարդակ:

- **Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը**

Բանկային ոլորտը չի իրականացնում բիզնեսին աջակցելու առաջնային գործառնություն: Վարկային գործիքները բազմազան չեն: Անհրաժեշտություն կա բանկերը «գրավատներից» դարձնել ֆինանսական ծառայություն մատուցող կազմակերպություններ: Չափազանց բարձր են վարկային տոկոսադրույքները: Իսկ վարկի տրամադրման համար գրավադրման պահանջը ստեղծում է վարկավորման համար լրացուցիչ խոչընդոտներ:

- **Իրազեկվածության, կարողությունների և հմտությունների պակաս ՓՄՁ-ների շրջանում**

Սկսնակ գործարարներն ունեն խորհրդատվության կարիք: Օրենսդրական անհամապատասխանությունները և օրենսդրական դաշտի խճճված լինելը դժվարացնում է ՓՄՁ-ների համար տեղեկատվության մատչելիությունը: Անհրաժեշտություն կա բարելավել բիզնեսի վարման և/կամ կորպորատիվ կառավարման մշակույթը:

- **Շուկայի փոքր լինելը**

Շուկայի փոքր լինելը և արտագաղթի պատճառով անընդհատ կրճատվելը խոչընդոտում է ՓՄՁ ոլորտի զարգացումը:

- **Ներդրումային դաշտ**

Ներդրումների գրանցման պաշտպանության օրենսդրական դաշտը թերի է:



4.2 ՓՄՁ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ 2019-2021ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՓՄՁ-ՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ներին հնարավորություն է տրվել ներկայացնել առաջարկություններ ուղղված ՓՄՁ զարգացման նոր 2019-2021թթ. ռազմավարության մշակմանը, մասնավորապես առաջարկվել են ծրագրեր և ոլորտային բարեփոխումների ուղղություններ:

Համաձայն հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների գնահատականների՝ ՓՄՁ զարգացման համատեքստում պետական աջակցության կարիք ունեցող ոլորտներն են արտադրությունը, գյուղատնտեսությունը, ՏՏ ոլորտը, զբոսաշրջությունը, առևտուրը, ծառայությունների մատուցման և սպասարկման ոլորտը, ինչպես նաև թեթև և ծանր արդյունաբերության ոլորտները (Աղյուսակ 10):

N	Ոլորտներ	Հնչած պատասխանների բաշխում
1	Արտադրություն	23
2	Գյուղատնտեսական	22
3	ՏՏ ոլորտ	22
4	Զբոսաշրջություն	17
5	Առևտուր	15
6	Ծառայությունների մատուցում և սպասարկում	13
7	Թեթև և ծանր արդյունաբերություն	12
8	Կրթություն	9
9	Օրգանական գյուղատնտեսություն	6
10	Արհեստագործական արտադրանք	5
11	Առողջապահական ու դեղագործական ոլորտ	3
12	Հանրային սնունդ	2
13	Շինարարություն	2
14	Թեթև արդյունաբերության	1
15	Սննդի վերամշակում	1
16	Անասնապահություն	1

Աղյուսակ 10. Պետական աջակցության կարիք ունեցող ոլորտներն ըստ ՓՄՁ-ների գնահատականների

ՓՄՁ-ների կողմից ՓՄՁ զարգացման նոր 2019-2021թթ. ռազմավարությանն ուղղված առաջարկություններն ամփոփված են Աղյուսակ 9-ում և 10-ում: Համաձայն ոլորտային բարեփոխումների ուղղությունների՝ ՓՄՁ-ներն առավել հաճախ առաջարկել են նվազեցնել հարկային բեռը, բարելավել ՓՄՁ վարկավորման պայմանները (տոկոսադրույքը, տրամադրվող գումարի չափը, ժամկետները), անցկացնել ուսուցողական դասընթացներ և խորհրդատվություններ, որոնց մասին նախապես կիրականացվի իրազեկում, և իրականացնել շուկայի ընդլայնմանն ուղղված միջոցառումներ:



Ոլորտ	ՓՄՁ կողմից ներկայացված առաջարկություններ
Ընդհանուր առաջարկներ	- ՓՄՁ նոր ռազմավարությունը պետք է լինի ոլորտին առնչվող բոլոր իրավական ակտերի և ծրագրերի հիմքը: - Պետական աջակցությունը ՓՄՁ-ներին տրամադրվի արդարացի հիմքով՝ առանց կոռուպցիան սխեմաների: - Հաշվի առնվեն նաև մարզերում և գյուղական համայնքներում գործող ձեռնարկությունների առանձնահատուկ կարիքները: - Խրախուսել արտադրության ոլորտը և ներմուծումը փոխարինել տեղական արտադրանքով: - Սննդի ոլորտում գործող ՓՄՁ-ների գործունեության կարգավորման համար սահմանվել խիստ, բայց հասկանալի, հավասար և կիրառելի նորմեր: - Օրենսդրական փոփոխությունների իրականացման և կիրառության մեջ դրվելու ժամանակահատվածի երկարացում: - Նախքան փոփոխությունների կատարումը գնահատել առաջարկվող փոփոխությունների ազդեցությունը:
Հարկային վարչարարություն	- Պարզեցնել հարկային դաշտը: - Բացառել ավելորդ հարկային վարչարարությունը: - ՓՄՁ հասկացությունից առանձին սահմանել «միկրոձեռնարկություն» կատեգորիան և մշակել այս խմբի ներքո ձեռնարկատիրական գործունեության աջակցությանն ուղղված ծրագրեր: - Հարկային դաշտում իրականացվող բարեփոխումների միջոցով կարգավորել ԱԱՀ դաշտում աշխատող և շրջանառության հարկով աշխատող ձեռնարկությունների համագործակցության հնարավորությունը: - Գերփոքր ԱՁ-ներին ազատել հարկերից ու տուրքերից: - ՓՄՁ ներդրումներին համաչափ նվազեցում իրականացնել հարկերից, եթե ՓՄՁ-ն տեխնիկական միջոցներ (սարքավորումներ) է ձեռք բերում տեղական արտադրողներից կամ օգտվում է տեղական ՏՏ ընկերությունների արտադրանքից: - Պարտադիր եռամսյակային էլ. հաշվետվությունների ներկայացումը փորարինել տարեկան մեկ անգամ հաշվետվության ներկայացումով: - Երեք տարով ազատել սկսնակ ՓՄՁ-ներին բոլոր հարկերից՝ հաշվի առնելով, որ այսպիսի ՓՄՁ-ները հարկային մուտքերում ունեն շատ փոքր մասնաբաժին: - Բարելավել ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգը: - Բարելավել Հարկային օրենսգիրքը՝ այն բացառելով հակասությունները և երկիմաստ դրույթները, և իրավական ու լեզվական առումով դարձնել առավել պարզ: - Տրամադրվել հարկային արտոնություններ հաշմանդամություն ունեցող կամ ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամ ունեցող գործարարներին կամ հաշմանդամություն ունեցող անձնանց հետ կապված բիզնես ծրագրերին - Կրճատել արտահանման դեպքում 5-ից 6 ամիս տևող ԱԱՀ վերադարձի ժամկետները ընդհուպ մինչև մի քանի շաբաթ ժամկետով: - Հարկային վճարումների ժամանակացույցի ճկունություն և արտոնությունների տրամադրում



Ֆինանսավորման հասանելիություն	▪ Հնարավորություն ստեղծել շուկայում առկա ֆինանսական պրոդուկտների և գործիքների մասին տեղեկատվությունը ստանալ մեկ աղբյուրից ▪ Ապահովել բանկային գործիքների և պրոդուկտների մասին տեղեկատվության հասանելիություն և մատչելիությունը բոլոր ՓՄՁ-ների համար ▪ Մաքրել ՓՄՁ սեկտորում նախորդ տարիներին բիզնես վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող գործարարների վարկային պատմությունը: ▪ Գյուղատնտեսական վարկերի և լիզինգի դեպքում, երբ վարկային ծրագրերը սուբսիդավորվում են պետության կողմից, չկիրառել անշարժ գույքի գրավադրման պահանջ:
Խորհրդատվական և ուսուցողական ծրագրերի իրականացում, տեղեկատվության հասանելիություն և մատչելիություն	▪ Պետական աջակցությամբ իրականացվող խորհրդատվական ծառայությունների մատուցումը և դասընթացներն իրականացնել իրապարակային (որը կարող է իրականացվել նաև առցանց եթերով հեռարձակման միջոցով): Այսպիսի միջոցառումների համար իրականացրել իրազեկման միջոցառումներ: ▪ Պետական մակարդակով անվճար վարչարարական՝ իրավաբանական և հաշվապահական հաստիքների տրամադրում սկսնակ ՓՄՁ-ների ամսվազն 3-6 ամսով: ▪ ՓՄՁ-ների ղեկավարների համար ինտենսիվ անվճար իրավաբանական և հաշվապահական դասընթացների, վերապատրաստումների իրականացում: ▪ Առցանց և ոչ առցանց հարթակներում սկսնակ գործարարներին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման հարթակների ստեղծում, այս հարթակների վերաբերյալ իրազեկվածության ավելացում:
Արտահանում և մրցունակություն, բրենդավորում և աջակցություն մարքեթինգի ոլորտում	▪ Առցանց խորհրդատվության կամ հաղորդակցության միջոցով ստեղծել ՀՀ և միջազգային ձեռնարկությունների արդյունավետ համագործակցության և բիզնեսի վարման հարթակներ: ▪ Հիմնադրամների կամ ասոցիացիաների միջոցով նպաստել մրցակից ընկերությունների միջև համագործակցության ծավալմանը և համաբերենդավորմամբ արտասահմանյան շուկաներ դուրս գալուն: ▪ Արտերկրում գնորդների հետ կապերի հաստատմանն ուղղված գործողությունների իրականացում՝ այդ թվում «Made in Armenia» բրենդի մշակում և առաջխաղացում: ▪ Ստանդարտների ներդրում, որոնց համապատասխանությունը ՀՀ տարածքում կերաշխավորի Եվրամիությունում և ասիական զարգացած շուկաներում ապրանքի իրացման հնարավորությանը: ▪ հայկական բրենդների ստեղծմանը և զարգացմանը աջակցող ծրագրերի իրականացում
Ձեռնարկատիրական կրթություն և կարողությունների զարգացում	▪ Ամրապնդել բիզնես-կրթական հաստատություն կապը՝ բիզնեսի պահանջարկին համապատասխան իրականացնելով տարբեր ուսումնական հաստատություններում մասնագետների վերապատրաստում և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կողմնորոշման և վերապատրաստման իրատեսական և արդյունավետ Նոր ծրագրերի ներդրում (օր.՝ Զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով): Ձեռնարկատերերի գիտելիքների և հմտությունների զարգացման ծրագրերի իրականացում (օր.՝ ՓՄՁ ՉԱԿ-ների միջոցով):



Պետական գնումներ	Գնանշման ժամանակ վերահսկել առաջարկված գների արժանահավատությանը և նախնական գնից որոշակի չափով շեղման դեպքում մերժել հայտերը
Աջակցություն սկսնակ գործարարներին	- Երկարաժամկետ ու ցածր տոկոսադրույքով ֆինանսական միջոցների տրամադրում սկսնակ գործարարներին: - Լինի պետական լոգիստիկ կենտրոն, որը բիզնես սկսելուց առաջ մարդկանց տրամադրի տեղեկատվություն և խորհրդատվություն նախատեսվող գործունեության անհրաժեշտության և պահաջարի վերաբերյալ: Օրինակ, եթե մարդը ցանկանում է հացի վաճառքով զբաղվել Հրազդան քաղաքում, հստակ տեղեկատվություն տրամադրվի, թե քանի հացի վաճառակետ կա քաղաքում և որքան արդյունավետ կլինի ևս մեկ վաճառակետի ավելացումը: - Սկսնակ գործարարների համար հիմնել հարկային մենթորության ինստիտուտ, որը կօգնի սկսնակ բիզնես խուսափել հարկային սխալներից և կբարձրացնի գործարարների գիտելիքները և կարողություններն այս ոլորտում:
Ոլորտային աջակցություն	- Խթանել տեղական արտադրությունը՝ հատկապես ներմուծմանը փոխարինող արտադրատեսակների մասով: - Մշակել բարձր տեխնոլոգիաների ոլորտի և տեղական արտադրության խրախուսման ճանապարհային քարտեզ՝ ներառելով գրանցումը, վարկավորման գործիքները, միջազգայնացումը և այլն: - Կիրառել ոլորտային արտոնություններ սահմանելու մեխանիզմները արտադրական առանձին ոլորտների համար, ինչը կօգնի ոլորտը բերել հարկային դաշտ և կնպաստի գործող ձեռնարկությունների խոշորացմանը:
ՓՄՁ ոլորտի շահերի պաշտպանություն	- Ներդնել բիզնես հաշտարարի ինստիտուտը - Բողոքների քննման անկախ և գերադաճ աշխատող համակարգի ներդրում պետական մարմիններում: Այսինքն ստորաբաժանման աշխատանքի կամ աշխատակցի մասին բողոքը պետք է քննի անձամբ վերադաս ստորաբաժանման ղեկավարը և օպերատիվ արագությամբ լուծում հարցին: - Ձեռնարկատերերի շահերի պաշտպանության տարատեսակ հարթակների զարգացում (օր.՝ տարածքային առևտրաարդյունաբերական պալատներ, ոլորտային ասոցիացիաներ, տնտեսական օմբուդսմենի ինստիտուտ և այլն):
Պետություն-մասնավոր հատված երկխոսություն	Քաղաքականությունների մշակման, իրականացման, գնահատման փուլերում հանրային մասնակցության խթանում, հարթակների հասանելիության ապահովում, մեխանիզմների զարգացում:

Աղյուսակ 11. ՓՄՁ ոլորտից ստացված առաջարկություններ ուղղված ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության մշակմանը



N	ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված առաջարկներ	Հնչած պատասխ. քանակ	% պատասխ. կազմում
1	Հարկային բեռի նվազեցում	60	25.53%
2	ՓՄՁ վարկավորման պայմանների բարելավում՝ տոկոսադրույքը, տրամադրվող գումարի չափը, ժամկետները	28	11.91%
3	Ուսուցողական դասընթացների և խորհրդատվությունների իրականացում, որոնց մասին նախապես կկազմակերպվի իրազեկում	20	8.51%
4	Շուկայի ընդլայնմանն ուղղված միջոցառումներ	9	3.83%
5	Արտոնյալ պայմաններ մարզերում և գյուղական վայրերում բիզնես գործունեության համար	9	3.83%
6	Արտոնյալ հարկային քաղաքականություն նորաստեղծ բիզնեսի համար	8	3.40%
7	Պարզեցված հարկային ռեժիմ ՓՄՁ-ների համար	7	2.98%
8	Պետական վարկավորման և լիզինգային քաղաքականության արդյունավետ հայեցակարգ	7	2.98%
9	Ֆինանսական ռեսուրսների հասանելիությանն ուղղված ծրագրեր	6	2.55%
10	Ավելի մեղմ վարկային տոկոսներ և փոխառություններ ՓՄՁ-ների համար	5	2.13%
11	Անվճար իրավաբանական և ֆինանսական խորհրդատվություն ՓՄՁ սեկտորին	5	2.13%
12	Մրցակցային առողջ միջավայրի ստեղծում	5	2.13%
13	Վարվող հարկային քաղաքականության պարզեցում և կայունացում	4	1.70%
14	Արտահանման խթանմանն ուղղված ծրագրեր	4	1.70%
15	Բիզնեսի պաշտպանի ինստիտուտի կայացման ծրագրեր	4	1.70%
16	Բիզնես ղեկավարների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում	3	1.28%
17	Հայկական արտադրանքը արտաքին շուկա հանելու հնարավորությունն ընձեռող ծրագրերի իրականացում	3	1.28%
18	Օրգանական գյուղատնտեսության աջակցության ծրագրեր	3	1.28%
19	Հավասար մրցակցային պայմանների հաստատում բոլոր գործարարների համար	3	1.28%
20	Հարկային վճարումների ժամանակացույցի հետ կապված արտոնությունների տրամադրում	3	1.28%
21	Աջակցություն տեղական արտադրողներին	3	1.28%
22	Իրականացվեն աջակցման հստակ ծրագրեր ուղղված հայկական բրենդների ստեղծմանը եվ զարգացմանը	2	0.85%
23	Մարքեթինգի ոլորտի զարգացում	2	0.85%



24	Մարքեթինգի վերաբերյալ կարողությունների զարգացում	2	0.85%
25	Արտադրական գործընթացի զարգացմանն ուղղված նորարար գաղափարների խթանում	2	0.85%
26	Հաշվապահական ծառայությունների մասին տեղեկացվածության ավելացմանն ուղղված ծրագրեր	2	0.85%
27	Պետական աջակցությունն արտահանման գործընթացին	2	0.85%
28	Աջակցություն թեթև արդյունաբերությանը	2	0.85%
29	Դպրոցներում բիզնես դասընթացների կազմակերպում	2	0.85%
30	Ձեռնարկատերերի միջև փորձի փոխանակման նպատակով հանդիպումների կազմակերպում	2	0.85%
31	ՓՄՁ-ներին տրամադրել ապրանքը անվճար գովազդելու հնարավորություն	2	0.85%
32	ԱԱՀ-ի վերադարձի ժամկետի կրճատում	1	0.43%
33	Պետական գնումների գործընթացում գնառաջարկների արժանահավատության ստուգում	1	0.43%
34	Հարկային նոր օրենքների վերաբերյալ դասընթացներ, ինչպես սկսել նոր բիզնես (դասընթացի վերջում ֆինանսական աջակցություն)	1	0.43%
35	Քաղաքականությունների փոփոխության դեպքերում ազդեցության գնահատման մեխանիզմների ներդրում	1	0.43%
36	Ներդրումային ծրագրերի խթանում արդյունաբերական ոլորտում	1	0.43%
37	Գերփոքր բիզնես ոլորտի աջակցություն ֆինանսական օժանդակության միջոցով	1	0.43%
38	Վիզայի ստացման ընթացակարգերի պարզեցում ՓՄՁ գործարարների համար	1	0.43%
39	Աջակցություն արտերկրյա գործընկերների ձեռքբերման հարցում	1	0.43%
40	Շրջանառության հարկի շեմի վերանայում	1	0.43%
41	Աջակցություն մարզերում ՏՏ ոլորտի զարգացմանը	1	0.43%
42	Հավելյալ արտոնությունների տրամադրում ուսանողների կողմից ղեկավարվող ՓՄՁ-ներին	1	0.43%
43	Ճանապարհների բարվոք վիճակի ապահովում	1	0.43%
44	Ներմուծումը խթանող ծրագրեր	1	0.43%
45	Օտարերկրյա ներդնողների համար շահավետ հարկային արտոնությունների սահմանում	1	0.43%
46	Նորարարությունների խթանմանը նպաստող ծրագրեր	1	0.43%
47	Ոչ լոմբարդային այլ ռեալ բանկային վարկավորում ՓՄՁ-ներին	1	0.43%
Ընդամենը հնչած պատասխաններ		235	100%

Աղյուսակ 12. ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների կողմից ներկայացված առաջարկների ընդլայնված ցանկ

ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ | ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ
ԵՐԵՎԱՆ 2018



ՓՄՁ ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, մարտահրավերները և հնարավորությունները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
- գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ առաջընթաց. Նպաստավոր դիրք ՀԲ «Doing Buisness» զեկույցում - բարելավված էլեկտրոնային կառավարում և ընկերության գրանցում (մեկ պատուհան, էլեկտրոնային պորտալ) - ՏՀՏ ոլորտում գրանցված առաջընթաց և մարդկային կապիտալ - Ձեռնարկատիրության/ՓՄՁ զարգացման մի շարք դոնորական ծրագրերի առկայություն և շարունակականություն - Ձեռնարկատիրական կրթության ներդրում հնարակրթական և միջին մասնագիտական կրթական հաստատություններում - ՓՄՁ ՁԱԿ-ի միջոցով իրականացվող բիզնես և ֆինանսական աջակցության լայն ընտրանի, ՓՄՁ ՁԱԿ-ի կարողություններ և ռեսուրսներ - Պետական-մասնավոր հատված երկխոսության համար օրենսդրական և կարգավորող դաշտի առկայություն	- ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարության նպատակների իրականացման ցածր կատարողական, ռազմավարությունում գործողությունների պլանի բացակայություն - Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիություն ՓՄՁ սեկտորի համար - Հարկային վարչարարության ծանր բեռ ՓՄՁ-ների համար - Աշխատաշուկայում առկա կադրերի գիտելիքներ և հմտությունների անհամապատասխանություն բիզնեսի կարիքներին: - Տարածքային անհամաչափ զարգացում և տնտեսական հնարավորությունների կենտրոնացում ք. Երևանում - Վիճակագրական տվյալների հավաքագրման թույլ զարգացած մեխանիզմներ
Հնարավորություններ	Սպառնալիքներ
- Հարկային օրենսգրքի փոփոխություն, որով նախատեսվում է նվազեցնել ՓՄՁ-ների համար հարկային բեռը - Եկամտահարկի նվազեցմանն ուղղված գործողություններ - Տեղական արտադրանքի խրախուսման և արտահանման աջակցությանն հանձնառությունն ու կառավարության կողմից - Արտահանման ծավալների աճի հնարավորություններ ԵԱՏՄ և ԵՄ հետ համագործակցության շրջանակներում - ՀՆԱ կառուցվածքի փոփոխությանն ուղղված հանձնառություն՝ արդյունաբերության, զբոսաշրջության և ՏՏ ոլորտների մասնաբաժնի ավելացման պրիզմայով - Հայկական սփյուռքի մեծ ներուժ և ներդրումների ավելացման հնարավորություն - Ֆինանսավորման ոչ բանկային աղբյուրների հնարավորությունների ավելացում (օրինակ՝ վենչուրային հիմնադրամ) - Կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիայի վերացման հանձնառություն կառավարության կողմից - Քաղաքական փոփոխություններով պայմանավորված դրական սպասումներ ձեռնարկատերերի և ներդրողների շրջանում	- Երկրի զգալի կախվածություն տարածաշրջանային զարգացումներից (օրինակ՝ Ռուսաստան է ուղղվում արտահանման ծավալների քառորդ մասը) և դրամական փոխանցումներից (ՀՆԱ 18-20%): - Աշխարհագրական դիրքը և տարածաշրջանի ոչ կայուն վիճակ - Շուկայի փոքրություն - Ոչ բարձր վիճակում գտնվող ենթակառուցվածքներ (ճանապարհներ, ոռոգման ցանց և այլն) - Արտասահմանյան շուկաների պահանջների բավարարման դժվարություններ արտահանվող ապրանքների որակի և քանակի մասով - Կախվածություն դոնորների կողմից մաս-մաս իրականացվող ծրագրերից՝ առանց գործողությունների հեռանկարային ծրագրերի Ստվերային տնտեսության մեծ մասնաբաժին



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հիմնական եզրակացություններ

Հիմք ունենալով իրականացված հետազոտության արդյունքները կատարվել են հետևյալ եզրակացությունները՝

ՓՄՁ ոլորտի վիճակագրություն

- Բոլոր ՓՄՁ-ների կեսից ավելին՝ շուրջ 53%-ը, տեղակայված են մայրաքաղաք Երևանում, ՓՄՁ-ների մնացած մասը տեղակայված են ՀՀ մարզերում, ընդ որում համեմատաբար առավել մեծ թվով ՓՄՁ-ներ տեղակայված են Երևանի սահմանակից մարզերում՝ Կոտայքում, Արարատում և Արմավիրում:
- ՓՄՁ սուբյեկտների կազմում գերակշիռ են գերփոքր ձեռնարկությունները՝ կազմելով գրանցված բոլոր ձեռնարկությունների 91.5%-ը: Փոքր ձեռնարկությունները կազմում են ընդհանուր ՓՄՁ-ների 6.97%-ը: Միջին ձեռնարկությունները թվով 1,222-ն են և կազմում են ՓՄՁ-ների ընդհանուր թվի 1.53%-ը
- ՓՄՁ սուբյեկտների շուրջ 59%-ը գործում են մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտում. այս ոլորտը գերակշիռ է ինչպես ք. Երևանի, այնպես էլ բոլոր մարզերի ոլորտային կառուցվածքում: ՓՄՁ-ների ընդամենը 8.4%-ն է զբաղված արտադրության (որոնց շուրջ 40%-ը՝ պարենային մթերքի արտադրության) ոլորտում, որին հաջորդում են «կացության և հանրային սննդի կազմակերպման» ոլորտը՝ 4%, և «տեղեկատվության ու կապի» ոլորտը՝ 2.6% ցուցանիշներով:
- Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները զբաղվածությամբ են ապահովում շուրջ 266 000 մարդու, որը կազմում է ընդհանուր զբաղվածության 26.3%-ը: Երևանում ՓՄՁ-ներում զբաղված են շուրջ 179 000 մարդ, որը կազմում է ընդհանուր ՓՄՁ սեկտորում զբաղվածության 67%-ը: Մարզերում այս ցուցանիշն առավել փոքր է՝ 87 հազար մարդ:
- 2017թվականին ՓՄՁ կողմից վճարված հարկերը կազմել են 205 մլրդ ՀՀԴ, որի կազմում մարզերում գտնվող ՓՄՁ-ների մասնաբաժինը կազմել է ընդամենը 26%: Ընդհանուր առմամբ գերփոքր ընկերություններն ապահովում են ՓՄՁ սեկտորից հարկային մուտքերի 25%-ը, իսկ «փոքր» և «միջին» ձեռնարկություններն ունեն գրեթե հավասար մասնաբաժին համապատասխանաբար 37% և 38%:
- 2014-ից 2017թթ. ՓՄՁ սուբյեկտների թվի դինամիկայի ուսումնասիրությունը⁸³ ցույց է տալիս, որ գրեթե բոլոր տիպի ՓՄՁ սուբյեկտների գծով առկա է ակտիվ հարկ վճարողների քանակական աճ, սակայն մյուս կողմից այս ժամանակահատվածի համար ոլորտում զբաղվածության թիվը անկում է ապրել: 2014-ից 2017թթ. ընթացքում արձանագրվել է ՓՄՁ-ների շրջանառության ծավալների աճ և հարկային վճարումների աճ, որոնք անկում են ապրել 2017 թվականին:
- Մեկ հարկ վճարողի ծանրաբեռնվածությունը շարունակաբար բարձրացել է: ՓՄՁ ոլորտում հարկային ծանրաբեռնվածությունը մեծանում է, իսկ հիմնական աճի բեռը բաժին է ընկնում առավելապես չափերով միջին սուբյեկտներին:

⁸³ Այս ենթաբաժնում ներկայացված 2014թ.-ից 2016թ. տվյալները վերցված են՝ «ՓՄՁ ոլորտի հիմնական բնութագրիչները ՀՀ-ում» զեկույցից, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ | ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ



Պետական աջակցություն ՓՄՁ ոլորտին

- ՓՄՁ-ների 46%-ը համարում է, որ պետությունն ընդհանրապես բավարար չափով չի աջակցում ՓՄՁ ոլորտին, 30%-ը համարում է, որ ձեռնարկված միջոցառումներն «ավելի շուտ անբավարար են»: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 9%-ի կարծիքով պետական աջակցությունն «ավելի շուտ բավարար է», և միայն 5%-ն են ձեռնարկված միջոցառումները համարել լիովին բավարար: Այսպիսով, ՓՄՁ-ների 76%-ի կարծիքով պետական աջակցություն ՓՄՁ սեկտորին անբավարար է:
- «Կոռուպցիան» որպես ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոն կորցրել է իր ուժգնությունը: Եթե 2015 թվականին իրականացված հետազոտությամբ կոռուպցիան եղել է ՓՄՁ ոլորտը զարգացմանը խոչընդոտող գործոններից 5-րդը, իսկ ըստ Համաշխարհային մրցունակության զեկույցի 4-րդը, ապա այս հետազոտության արդյունքներով «կոռուպցիան» որպես ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող գործոն չունի նշանակալիություն (2018 թվականի հոկտեմբեր):

Ձեռնարկություն հիմնելու ընթացակարգերը. սկսնակ բիզնեսի կարիքները

- ՓՄՁ գրանցման գործընթացը պարզ է, թափանցիկ և արագ: Այնուամենայնիվ, իրականացված բարեփոխումների հիմնական շահառուները մայրաքաղաքն ու մի քանի քաղաքային շրջաններն են:
- Սկսնակ գործարարներն ունեն բիզնեսի կազմակերպարական ձևի ճիշտ ընտրության հարցում խորհրդատվության կարիք:
- Սկսնակ գործարարներն իրազեկված չեն, թե ինչ պետք է իրականացնեն բիզնեսի գրանցումից հետո և ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն հարկային մարմին:
- Սկսնակ գործարարներն ունեն ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության, վարկային և գրանտային ծրագրերի մասին իրազեկվածության կարիք:

ՓՄՁ ոլորտում վիճակագրության վարում

- ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման շրջանակը և որակը դեռևս բարելավման կարիք ունի: Որոշ վիճակագրական տվյալներ սահմանափակ են ինչպես օրինակ ՓՄՁ-ների կողմից իրականացվող արտահանման մասով, ՓՄՁ-ների փակման վերաբերյալ և այլ, իսկ օգտագործվող մեթոդաբանությունները կարելի է բարելավել:
- Կանանց կողմից նախաձեռնված կամ ղեկավարությամբ գերիցքը և ՓՄՁ ձեռներեցության մասով իրավիճակի և միտումների գնահատման համար պաշտոնական վիճակագրական տվյալներ չեն հրապարակվում, ինչի պատճառով նաև դժվար է դառնում ոլորտային վերլուծությունները և առաջարկությունների ներկայացումը:

Ֆինանսական հասանելիություն ՓՄՁ սեկտորի համար

- Ֆինանսական ռեսուրսներին հասանելիության դժվարությունները ՓՄՁ զարգացման հիմնական և ամենակարևոր խոչընդոտներից մեկն է
-



- ՓՄՁ-ների 42%-ը նշել է, որ ունեն ֆինանսական ռեսուրսների ներգրավման խիստ կարիք, 26%-ը՝ ավելի շուտ կարիք ունեն ներգրավելու ֆինանսական միջոցներ: ՓՄՁ-ների 25%-ը ֆինանսական ռեսուրսների ներգրավման կարիք չունեն: ՓՄՁ-ների 68%-ն ունի ֆինանսական ռեսուրսների ներգրավման կարիք:
- ՓՄՁ-ների գերակշիռ մասը բավարարված չէ առաջարկվող վարկավորման պայմաններով: Հարցման ենթարկված ՓՄՁ-ների 34%-ը ընդհանրապես բավարարված չեն շուկայում առկա բիզնեսի ֆինանսավորման պայմաններով, 30%-ը՝ ավելի շուտ բավարարված չեն: ՓՄՁ-ների 17%-ը նշել են, որ ավելի շուտ բավարարված են վարկավորման պայմաններով, մինչդեռ միայն 2%-ն է վարկավորման պայմանները լիովին բավարար համարել: ՓՄՁ-ների 17%-ը ծանոթ չէ վարկավորման պայմաններին:
- Ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ ՓՄՁ-ների իրազեկվածությունը բավարար չէ:

ՓՄՁ մրցունակություն: արտահանման խթանում եվ ինտեգրում

- Նոր տեխնոլոգիաների ներդրումը, որը կարող է բարձրացնել ՓՄՁ-ների մրցունակությունը, մատչելի չէ ՓՄՁ-ների համար
- ՓՄՁ-ների 43%-ը նշել է, որ արտաքին շուկաներ դուրս գալու համար իրենց բիզնեսին անհրաժեշտ է աջակցություն
- Արտահանման ընթացակարգերի մասին ՓՄՁ-ների տեղեկացվածությունը և այս ոլորտում աշխատանքները թերի են
- Թեև առկա են միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար համաֆինանսավորման ծրագրեր, սակայն նույնիսկ այդ դեպքում մասնակցությունը մատչելի չի ՓՄՁ-ների համար

ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցներ. ձեռնարկատիրական կրթություն, մշակույթ և ՓՄՁ կարողությունները

- Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 44%-ը նշել է, որ ունեն բիզնես խորհրդատվության և դասընթացների ծառայությունների կարիք
- Տնտեսվարող սուբյեկտների, բիզնես ասոցիացիաների և ուսումնական հաստատությունների միջև համագործակցության արդյունավետությունը դեռևս մնում է խնդրահարույց
- Բիզնես ասոցիացիաները արդյունավետ չեն գործում և որակյալ ծառայություններ չեն մատուցում իրենց անդամներին ֆինանսական ռեսուրսների բավարար չլինելու պատճառով
- Բիզնես ասոցիացիաները ՓՄՁ խնդիրները լուծում են տեղային, իրավիճակային մակարդակում, իսկ համակարգային, ինստիտուցիոնալ լուծումներ տալու գործիքներ դեռևս չունեն

Բնապահպանական կառավարման համակարգեր եվ էներգաարդյունավետություն

- «Կանաչ» աշխատակարգերի խթանման և ներդրման ծրագրերը և նախաձեռնություններն ունեն հատվածական բնույթ և համակարգային, ինստիտուցիոնալ չեն:



- ՓՄՁ-ների 52%-ը վերջին երկու տարիների ընթացքում իրականացրել է միջոցառումներ/աշխատանքներ ուղղված իրենց արտադրության, ծառայությունների մատուցման գործընթացում ծախսվող ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը
- Ռեսուրսների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և աշխատանքներ իրականացրած ՓՄՁ-ների միայն 6%-ն է պետական որևէ մարմնից ստացել ֆինանսական առաջակցություն, 7%-ը՝ ստացել են տեխնիկական առաջակցություն

Կանանց ձեռնարկատիրություն

- Կանայք կարող են ներգրված լինել ոչ ֆորմալ կամ միկրո բիզնեսում (ինչպես օրինակ մանր առևտուր, արհեստագործական իրերի արտադրություն տնային պայմաններում, հուշանվերների պատրաստում և այլն)՝ միևնույն ժամանակ դուրս մնալով «գործարարության» ընդունված սահմանումներից: Այս կանայք կարիք ունեն լրացուցիչ աջակցության «անհատական» կամ ոչ ֆորմալ գործարարության դաշտից տեղափոխվելու գերփոքր կամ փոքր բիզնեսի դաշտ:
- Կանանց բիզնեսների մեծամասնությունը ոչ միայն հիմնականում անհատական կամ միկրո մակարդակի ձեռնարկություններ են, այլ դրանք նաև զբաղեցնում են որոշակի ոլորտներ՝ կենտրոնանալով առևտրի, ծառայությունների և փոքրածավալ արտադրության՝ հաճախ տնային պայմաններում ստեղծված արտադրանքի վրա:
- Ձեռնարկատիրական գործունեություն նախաձեռնելու հարցում կանայք առավել անհիքնավստահ են և ունեն տեղեկատվության ստացման և լրացուցիչ աջակցության կարիք:
- Թեև ֆորմալ առումով առկա չեն կին ձեռնարկատերերի ֆինանսավորման սահմանափակումներ, սակայն խոչընդոտներ առաջանում են կապված գրավի բացակայության, ձեռներեցության փորձի պակասի, բարձր տոկոսադրույքների, ռիսկի դիմելու ցանկության պակասի պատճառով:
- ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակարգական տվյալների հավաքագրումը սեռային տարանջատմամբ թերի է իրականացվում, ինչը հնարավորություն չի տալիս պատկերացնում կազմել այս ոլորտում կանանց ներգրավվածության և դերի մասին:

Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի կարիքները

- ՍՁ-ները գործում են նույն օրենսդրական դաշտում ինչ ՓՄՁ-ները և ունեն նույն հիմնախնդիրները, որոտային առաջնահերթությունները և կարիքները, ինչ ՓՄՁ-ները:
- ՍՁ-ների հիմնախնդիրներն առավել սուր են, քանի որ ՍՁ-ների կողմից ստացված շահույթներն ուղղվում են սոցիալական հիմնախնդիրների լուծմանը և նույն բիզնես միջավայրում այլ ընկերությունների հետ մրցակցելը ՍՁ-ների դեպքում դառնում է ավելի դժվար:



Առաջարկություններ ՀՀ կառավարությանը և ՏՀՆՆ-ին

Քաղաքականության առաջարկություններ

- Բարելավել ՓՄՁ ոլորտում վիճակագրության հավաքագրման մեխանիզմները: Վիճակագրական տվյալների հավաքագրման փուլում ՓՄՁ-ների նկատմամբ կիրառել լրացուցիչ կատեգորիաների (ինչպես օրինակ՝ նախասկսնակ, սկսնակ, աճող, միջազգային, արտահանող, կնոջը պատկանող և այլն): Վիճակագրական տվյալների հավաքագրումը համադրել ՓՄՁ կարիքների արձանագրման հետ:
- Հարկային օրենսդրության և վարչարարության վերանայում և պարզեցում՝ ՓՄՁ տեսանկյունից
- ճշգրտել և հստակեցնել «սկսնակ բիզնեսի» սահմանումը
- Պետական-մասնավոր երկխոսության բարելավում՝ իրական գործող հարթակների միջոցով (օրինակ՝ ՓՄՁ խորհրդի նիստերի հաճախականության ավելացում):
- ՓՄՁ-ներ ռազմավարության իրականացման ընթացքում արդունավետ գործարկել ընթացիկ գնահատականների, մոնիթորինգի, պարբերական շտկումների, «քաղած դասերի», չիրականացման դեպքում պատասխանատուների հայտնաբերման անհրաժեշտ միջոցների:
- ՓՄՁ-ներին որպես հարկահավաք դաշտ դիտարկելու քաղաքականությունը փոխարինել իրական աջակցության և օժանդակության քաղաքականությամբ:
- ՓՄՁ նոր ռազմավարության համար ներդնել մեխանիզմներ՝ դրա հետագա իրագործման և մշտադիտարկման կազմակերպման համար՝ ակտիվ ներգրավելով ՓՄՁ դաշտում գործող ասոցիացիաներին:
- Բարելավել պետական մարմինների և բիզնես ասոցիացիաների միջև հաղորդակցությունը
- Հաշվի առնվել նաև մարզերում և գյուղական համայնքներում գործող ձեռնարկությունների առանձնահատուկ կարիքները

ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության դյուրացում

- Իրականացնել ֆինանսական տարբեր գործիքների և պրոդուկտների վերաբերյալ ՓՄՁ սեկտորի իրազեկվածության բարձրացման միջոցառումներ

ՓՄՁ մրցունակություն: արտահանման խթանում եվ ինտեգրում

- Բարձրացնել արտահանման ընթացակարգերի վերաբերյալ ձեռնարկատերերի իրազեկվածությունը:
- Կիրառել մեկ պատուհանի սկզբունքը, որտեղից ձեռնարկությունները կկարողանան տեղեկատվություն ստանալ արտահանման համար պահանջվող փաստաթղթերի, գործընթացի և այլ մասնրամասների վերաբերյալ:
- Բարելավել արտահանման ընթացակարգերի վերաբերյալ պաշտոնական առցանց հասանելի տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը

Բնապահպանական կառավարման համակարգեր եվ էներգաարդյունավետություն

- ՓՄՁ համայնքում խրախուսել բնապահպանական առումով անվնաս արտադրական աշխատակարգերի ներդրումը՝ հիմնվելով կամավոր մասնակցության սկզբունքի վրա:



- հատվածական ջանքերի փոխարեն մշակվել և ներդնել «կանաչ» աշխատակարգերի խթանման ինստիտուցիոնալ, կոնկրետ նախաձեռնություններ և/կամ ծրագրեր, որոնք կխրախուսեն ՓՄՁ սուբյեկտներին ներդնելու «կանաչ» տեխնոլոգիաներ և կառավարման աշխատակարգեր գործիքներ

Կանանց ձեռնարկատիրության խթանման ոլորտում

- Ձևաքեր գործադրել ՓՄՁ վերաբերյալ ազգային վիճակագրական տվյալների՝ ըստ սեռային տարանջատման հավաքագրման ուղղությամբ, ինչը թույլ կտա իրականացնել կանանց ձեռնարկատիրության քաղաքականության մոնիթորինգ և գնահատում:
- ՓՄՁ նոր ռազմավարությունը կանանց ձեռնարկատիրության աջակցության հնարավոր թիրախային նպատակներում պետք է թիրախավորի նաև ոչ ֆորմալ սեկտորում զբաղված կանանց՝ նրանց բերելով գերփոքր կամ փոքր բիզնեսի դաշտ:
- Բարելավել ՓՄՁ ոլորտում կանանց փորձառության մոնիթորինգն ու գնահատումը՝ այնպիսի դրական զարգացումներ գրանցելու համար, ինչպիսիք են անհատ ձեռներեց և միկրո բիզնեսից անցումը փոքր բիզնեսին և ընտանեկան բիզնեսում ղեկավար դերի ստանձնումը՝ հաշվի առնելով ոչ միայն ֆորմալ զբաղվածության ոլորտը, այլև ոչ ֆորմալ:

Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում

- հստակեցնել ՍՁ-ների աշխատանքում կամավորության ինստիտուտի դերը՝ արտոնություններ տալով միայն ՍՁ-ներին և բացառելով խոշոր բիզնեսի կողմից այսպիսի ռեսուրսի չարաշահումը:
- խթանել ոլորտի զարգացումը՝ ֆինանսավորման, վարկային ավելի ցածր տոկոսադրույքների, տեխնիկական և խորհրդատվական աջակցության տրամադրմամբ:

ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության մշակման ուղղված

- ՓՄՁ զարգացման նոր 2019-2021թթ. ռազմավարության մշակմանն ուղղված առաջարկությունները ներկայացված են սույն հետազոտության հաշվետվության Հավելված 1-ում:

Առաջարկություններ ՓՄՁ ՁԱԿ-ին

- Սկսնակ գործարարներին տրամադրել բիզնեսի կազմակերպարավական ձևի ճիշտ ընտրության հարցում խորհրդատվություն, որը կարող է իրականացվել առցանց խորհրդատվական հարթակների, տեղադրված նյութերի, տպագրված թերթիկների միջոցով:
- Պետական ռեգիստրում սկսնակ գործարարներին տրամադրել տեղեկատվություն հարկային մարմնին ներկայացվող փաստաթղթերի և ժամկետների վերաբերյալ



- Իրականացնել տեղեկատվական արշավներ ուղղված ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության, վարկային և գրանտային ծրագրերի մասին իրազեկվածության բարձրացմանը
- Իրականացվող խորհրդատվությունների և դասընթացների հանրայնացում (նաև առցանց գործիքների միջոցով): ՓՄՁ ներկայացուցիչների հետ առցանց վեբինարների կազմակերպում:
- Սկսնակ գործարարներն ունեն բիզնեսի կազմակերպաիրավական ձևի ճիշտ ընտրության հարցում խորհրդատվության կարիք:
- Սկսնակ գործարարներն իրազեկված չեն, թե ինչ պետք է իրականացնեն բիզնեսի գրանցումից հետո և ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն հարկային մարմին:
- Իրականացնել բնապահպանական կառավարման համակարգերի թեմայով ուսուցողական դասընթացներ:
- Ներդնել առցանց խորհրդատվական համակարգեր
- Իրականացնել խորհրդատվության տրամադրման, աջակցության ծրագրեր ուղղված ՍՁ ոլորտի զարգացմանը
- Ապահովել մատուցվող կրթական ծառայությունների ներառողականությունը և հավասար հասանելիությունը բոլոր ՓՄՁ-ների համար:

Առաջարկություններ բիզնես ասոցիացիաներին և առևտրային պալատներին

- Խրախուսել սկսնակ գործարարներին բիզնեսի վարման ամենասկզբում անդամագրվել որևէ ասոցիացիայի (նույնիսկ դեռևս չգրանցված):
- ՍՁ-ների հիմնադիրներին, նախաձեռնողներին վերապատրաստել որպես թրեյներներ:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան», Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, 2016 թ.

«Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»

«Հայաստան. Երկրի գենդերային իրավիճակի գնահատում», Ասիական զարգացման բանկ, հուլիս 2015

«Հայաստանում բիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրները», ՓՄՁ իրավիճակային համապարփակ հետազոտություն մարկրո և միջրո մակարդակներում, սեպտեմբեր 2015

Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագիր 2011-2015թթ.,

Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2014թ., Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման գնահատում, Երևան

«Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար», Աշխատանքի միջազգային գրասենյակ, Ձեռնարկությունների վարչություն, Ժնև, ԱՄԿ, 2016թ.

«ՓՄՁ ոլորտի հիմնական բնութագրիչները ՀՀ-ում» գեկույցից, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ, 2017թ.

ՀՀ վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2018թ. հունվար-հունիս

ՀՀ վիճակագրական կոմիտե, Պարենային ապահովություն և աղքատություն, 2016թ. հունվար-դեկտեմբեր, հրատարակված՝ 2017թ. փետրվարի 20

ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, հրատարակված՝ 2017թ. հունվարի 31

Կիրառված աղբյուրներ

<https://www.transparency.org/research/cpi/overview>

<https://freedomhouse.org/report/>

www.armstat.am

www.doingbusiness.org

<http://info.worldbank.org/governance/wgi/#reports>

<http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=11207>

<http://info.worldbank.org/governance/wgi/#reports>

<http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf>

http://www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Armenia_SME_PI_Country_chapter_ARM.pdf

<http://www3.weforum.org/docs/GCR20172018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2017%E2%80%932018.pdf>

<http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/competitiveness-rankings/#series=GCI4.A.02>

http://www.eib.org/attachments/efs/economic_report_neighbourhood_sme_financing_armenia_en.pdf

<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91594>



ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՄՁ ՉԱՐԳԱՑՄԱՆ 2016-2018թթ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարության կառուցվածքի վերլուծություն:

Այս մասում կքննարկվի ՓՄՁ 2016-2018թթ. ռազմավարության կառուցվածքն ըստ բաժինների, յուրաքանչյուր բաժնում արտացոլված բովանդակությունը, ռազմավարական նպատակների ներքո ներկայացված բովանդակությունը, և առաջարկներ կներկայացվեն նոր ռազմավարության մշակման համար բաժինների կառուցվածքի և ներառված թեմաների վերաբերյալ:

ՓՄՁ 2016-2018թթ. ռազմավարությունը բաղկացած է ներածությունից և 10 գլուխներից, որոնք ներկայացված են ստորև՝

Գլուխ 1. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող քաղաքականությունը

Գլուխ 2. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համառոտ նկարագրությունը

Գլուխ 3. Օրենսդրական կարգավորում

Գլուխ 4. Փոքր բիզնեսի ակտի գնահատում

Գլուխ 5. «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի ցուցանիշներ

Գլուխ 6. ՓՄՁ զարգացման խորհրդի դերը

Գլուխ 7. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարական նպատակները և գործողությունների հիմնական ուղղությունները

Գլուխ 8. ՓՄՁ ոլորտի 2014թ. և «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի 2015թ. ցուցանիշներ

Գլուխ 9. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՏՀԶԿ և զարգացող երկրներում, սմանություններ և տարբերություններ

Գլուխ 10. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների (SWOT) վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում

Հիմք ունենալով ռազմավարությունների մշակման և ներկայացման միջազգային առաջավոր փորձը, կարծում ենք, որ ռազմավարության ներկայացման նման կառուցվածքը արդյունավետ չէ: Նախ և առաջ պահպանված չեն գլուխների վերնագրերի ոլորտային ընդգրկման համամասնությունները, մասնավորապես «ՓՄՁ զարգացման խորհրդի դերը» կարող էր ներկայացվել առաջին գլխի ներքո, քանի որ այն կազմում է Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող քաղաքականության բաղադրիչներից մեկը, «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների (SWOT) վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» գլուխը կարող էր ներառվել «Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համառոտ նկարագրությունը» գլուխում, քանի որ այն ներկայացնում է ոլորտի ներկայիս վիճակի



վերլուծությունը կիրառված մեկ գործիքի միջոցով և այլն: Անհասկանալի է նաև, թե ինչու են «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի ցուցանիշները ներկայացվել երկու առանձին գլուխների միջոցով (Գլուխ 5 և Գլուխ 8): Միևնույն ժամանակ, ռազմավարության համար կարևորագույն բաղադրիչ հանդիսացող «ՓՄՁ զարգացման ռազմավարական նպատակները և գործողությունների հիմնական ուղղությունները» գլուխը կարծես չէ առանձնապես չի շեշտադրվում և ներկայացվում է նույն աստիճանակարգության մեջ, ինչ մյուս գլուխները, որոնք թերևս ունեն ավելի նկարագրողական բնույթ և ներկայացվում են որպես լրացուցիչ տեղեկատվություն: Նկատենք նաև, որ ռազմավարությունում բացակայում են այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են ռազմավարության նպատակը, միջոցառումների ծրագիրը, ժամանակացույց, մոնիթորինգի ու գնահատման պլանը և այլն:

Միևնույն ժամանակ, ՓՄՁ ռազմավարական 7 նպատակները և այդ նպատակների ներքո թիրախավորված ենթանպատակները կրկնում են մեկը մյուսին և այստեղ նույնպես պահպանված չէ ռազմավարական նպատակների և ենթանպատակների աստիճանակարգությունը: Օրինակ՝ ռազմավարական նպատակ 6-ը (ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցների ուժեղացում) ըստ բովանդակության և էության կրկնում է ռազմավարական նպատակ 5-ում ներկայացված դրույթները (Պետություն-մասնավոր հատված երկխոսության բարելավում), մասնավորապես Ռազմավարական նպատակ 6-ը անդրադառնում է երեք հիմնական ոլորտների՝ 1) ներգրավել տարբեր բիզնես ասոցացիաների և պետական հատվածի ներկայացուցիչների՝ ՓՄՁ զարգացման ռազմավարության մեջ արտացոլված բոլոր նպատակների իրականացումն ապահովելու նպատակով, 2) ՓՄՁ զարգացման խորհուրդը որպես հարթակ կիրառել նշված նպատակների և համապատասխան գործողությունների իրականացման համար, 3) Համապատասխան աշխատանքներում ներգրավել նաև մարզպետարաններին և համայնքների ղեկավարներին: Ռազմավարական նպատակ 5-ում պետություն-մասնավոր հատված երկխոսության արդյունավետության բարձրացման համար առաջարկվում է՝ «օրենսդրական փոփոխությունների իրականացման ընթացքում ակտիվ հանրային քննարկումների իրականացում տարբեր միջոցներով»: Կարծում ենք առավել արդյունավետ կլիներ այս երկու թիրախային ոլորտները ներկայացնել մեկ նպատակով: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրելով ՓՄՁ ռազմավարությունում ներկայացված ռազմավարական նպատակները և ենթանպատակները, կարող ենք եզրակացնել, որ այսպիսի համընկնումներ առկա են և ռազմավարական նպատակների և ենթանպատակների շարադրումը վերախմբավորման կարիք ունի:

Ռազմավարության մշակման և ռազմավարական նպատակների սահմանման համար առաջարկում ենք հետևյալ մոտեցումները, որոնց հիմքում ընկած են տեղական օրենսդրական դաշտի և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունները՝

Հիմնական դրույթներ

- Ռազմավարությունը մշակելիս հետևել ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի N2 արձանագրային որոշման «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի» պահանջներին և «Պետական եկամուտների եվ ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման եվ հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 42 որոշման պահանջներին⁸⁴:
- Որպես ռազմավարության գործողության ժամկետ սահմանել նվազագույնը երեք տարի: Խորհուրդ է տրվում կիրառել 5 տարի ժամկետը՝ որպես լավագույն տարբերակ:

⁸⁴ Տես ավելին՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=92018>



- Ռազմավարությունը պետք է համահունչ լինի ՀՀ կառավարության ծրագրին, «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին, «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին», «Հայաստանում փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթներ» փաստաթուղթին և այլ ոլորտային ռազմավարություններին, իրավականին ակտերին և հայեցակարգերին:
- Ապահովել ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության և ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացվող ՓՄՁ զարգացման աջակցության ամենամյա պետական ծրագրերի միջև կենսական կապը: ՓՄՁ զարգացման աջակցության ամենամյա պետական ծրագրերը պետք է բխեն ՓՄՁ զարգացման ռազմավարությունից:
- Իրականացնել գործողություններ և աշխատանքներ, որոնք նպաստեն ռազմավարության ճանաչմանը և ընդունմանը շահագրգիռ կողմերի և անգամ իրականացնողների շրջանում՝ այսպիսով «մեկուսացած և վակուումում գործող» փաստաթուղթ լինելու փոխարեն այն դարձնելով կենսունակ և հիմնադրույթային:

Ռազմավարական նպատակներ

- Առաջարկում ենք կրճատել սահմանված ռազմավարական նպատակների քանակը և նեղացնել շրջանակը, սահմանել միայն այնպիսի նպատակներ, որոնք ռազմավարության իրականացնող կողմի իրավասությունների շրջանակներում են: Արդյունքում սահմանել առավել թիրախային և հստակ իրագործելի նպատակներ:
- Ռազմավարական նպատակները սահմանել ըստ ՓՄՁ ոլորտում առկա կարիքների ուսումնասիրության արդյունքների՝ ելնելով ոլորտի առաջնահերթություններից:

Գործողությունների պլան

- Ռազմավարությունում ներառել առնվազն 3 տարվա գործողությունների պլան, յուրաքանչյուր տարվա համար սահմանված գործողությունները պետք է հենվեն և կապված լինեն նախորդ տարվա գործողություններից (խուսափել գործողությունների պլանի տարեկան սահմանման պրակտիկայից):
- Գործողությունները պետք է բխեն ռազմավարության սահմանած նպատակներից, լինեն հստակ, իրագործելի և չափելի: Գործողությունների դեպքում է հստակ սահմանված վերջնաժամկետներ, իրականացնող մարմինները և ռեսուրսները: Յուրաքանչյուր գործողություն պետք է ունենա արդյունքների չափորոշիչներ, որոնք պետք է կապված լինեն ռազմավարությունում սահմանված արդյունքների հետ:
- Սահմանել գործողությունների իրականացման ժամկետներ և ակնկալվող արդյունքներ (որոնք պետք է լինեն հասանելի, հստակ և չափելի):

Ռազմավարության մոնիթորինգ և գնահատում

- Կիրառել բազային տարվա սահմանման և այդ ցուցանիշները որպես ելակետային տվյալներ օգտագործման մոտեցումը, ինչը հնարավորություն կտա գնահատել իրականացված բարեփոխումների և ծրագրերի ազդեցությունը և դինամիկան:
- Ռազմավարությունում հնարավորինս հասցեական ներկայացնել կառավարման, մոնիթորինգի և գնահատման դրույթներ:



Ռազմավարության հանրայնացումը և ազդեցության բարձրացում

- Ռազմավարությունում ներառել նաև ռազմավարության հանրայնացման և հաղորդակցության պլան, ինչը հնարավորություն կտա այն դարձնել լայն ճանաչելի և ընդունելի շահագրգիռ կողմերի համար, ինչպես նաև կավելացնի ռազմավարության ուժը և ազդեցությունը⁸⁵:

Հաշվի առնելով այս նկատառումները, ինչպես նաև միջազգային առաջավոր փորձը առաջարկում ենք ՓՄՁ զարգացման նոր 2019-2021թթ. ռազմավարությունը մշակել ըստ ստորև ներկայացված ներդիրում ներկայացված բովանդակության առաջարկի:

⁸⁵ Ըստ սույն հետազոտության արդյունքների ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարությանը շահագրգիռ կողմերը հիմնականում ծանոթ չեն եղել: Անգամ ՓՄՁ ՁԱԿ նախկին աշխատակիցներն են նշել, որ ծանոթ չեն ռազմավարությանը, ինչը նշանակում է, որ որպես փաստաթուղթ այն չի ունեցել կիրառական նշանակություն և չի եղել հիմնադրույթային ՓՄՁ ոլորտի զարգացման հայեցակարգում:



ՓՄՁ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ 2019-2021ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Նախաբան

Ռազմավարության մշակման շարժառիթը
Ռազմավարության մշակման գործընթացի նախաձեռնողները ու մասնակիցները
Փաստաթղթի մշակման նպատակները համառոտ
Փաստաթղթի կառուցվածքը՝ ինչ մասեր է ներառում Ռազմավարությունը և ինչ
հերթականությամբ

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

Ռազմավարության նպատակը
Ռազմավարության հիմքում ընկած փաստաթղթերը (համահունչ առկա փաստաթղթերին)
Ռազմավարության իրականացնող կողմերը
Շահառուները
Ռազմավարության իրականացումից սպասվող արդյունքները (որակական և քանակական
արդյունքներ)

Բաժին 2: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում. Ներկա վիճակ և հեռանկարներ

1.2 Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության վերլուծություն

1. Ոլորտը կարգավորող Օրենսդրական դաշտ

Ներկայացվում են՝ ոլորտը կարգավորող իրավական դաշտը, հայեցակարգերը և
ռազմավարությունները

2. Ինստիտուցիոնալ կարողություններ

Ներկայացվում են՝

- Ոլորտում առկա կառույցների, պատասխանատու մարմինների մասին տեղեկատվությունը
- Ոլորտային քաղաքականության (կազմակերպությունների, փաստաթղթերի) առումով առկա
նախադրյալների ու բացերի (եթե դրանք կան) վերաբերյալ տեղեկատվություն
- Ոլորտում դերակատարություն ունեցող այլ կառույցները, մասնավորապես միջազգային և
տեղական հասարակական կազմակերպությունները (կազմակերպությունների
քարտեզագրում)
- Իրականացրված ծրագրերը՝

1.3 Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ներկայիս վիճակը

- Վիճակագրական տվյալների և ժամանակային շարքերի ներկայացում, ելակետային
տվյալների սահմանում
- ՓՄՁ կարիքներ (ներկայացվում են ըստ ոլորտում իրականացված վերջին
հետազոտությունների արդյունքների)
- ՓՄՁ ոլորտի ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն
(SWOT) վերլուծություն



Բաժին 3: ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարություն. հիմնական գերակայություններ և ռազմավարական նպատակներ

- Ներկայացվում են ռազմավարության ընտրված գերակայությունները
- Յուրաքանչյուր գերակայության համար ներկայացվում է հիմնավորում (համառոտ վիճակագրական տվյալների և կատարված հետազոտություններին հղումներ ներկայացնելով)
- Սահմանվում են ռազմավարական նպատակները և ենթանպատակները

Բաժին 4: Ռազմավարության իրականացման պլան, իրականացնող կողմեր և ֆինանսավորման մեխանիզմներ

- Ներկայացվում է գործողությունների պլանը, գործողությունները իրականացնող կողմերը, առկա ռեսուրսները
- Սահմանվում են գործողությունների իրականացման վերջնաժամկետները և արդյունքային չափորոշիչները
- Ներկայացվում է գործողությունների կապը նախորդ տարվա համար սահմանված գործողությունների և ՓՄՁ ռազմավարական նպատակների հետ

Բաժին 5: Ռազմավարության մոնիթորինգ ու գնահատում

- Ներկայացվում են մոնիթորինգի և գնահատման նպատակները, տևողությունը և պարբերականությունը, մեթոդաբանությունը, ցուցանիշները, մոնիթորինգի և գնահատման իրականացման պլանը
- Ներկայացվում է մոնիթորինգ և գնահատում իրականացնող մարմինը կամ այդ մարմնի առջև տրվող պահանջները (օրինակ՝ լինի անկախ, առկա չլինի շահերի բախում և այլն)
- Սահմանվում է մոնիթորինգի և գնահատման արդյունքներն ընդունող և վերանայող մարմինը

Բաժին 6: ՓՄՁ զարգացման ռազմավարության հանրայնացման և հաղորդակցության պլան

- Ներկայացվում է ՓՄՁ ռազմավարության հանրայնացման նպատակները
- Իրականացվում է հանրայնացման շահագրգիռ կողմերի քարտեզագրում
- Ներկայացվում է ռազմավարության հանրայնացման պլանը՝ տարբերակված ըստ տարբեր շահագրգիռ կողմերի, սահմանվում են հանրայնացման համար նախատեսվող միջոցառումների ցանկը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները



Ռազմավարությունների կազմման մեթոդական ցուցումներ ըստ ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի N2 արձանագրային որոշման «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի»

1. Ռազմավարություն՝ նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունները և միջոցառումներն ընդհանրական նկարագրող փաստաթուղթ:
2. Հայեցակարգով հաստատված խնդիրների լուծման լավագույն տարբերակի իրականացման համար հայեցակարգը մշակած մարմինը ձեռնամուխ է լինում դրա իրականացմանն ռազմավարության մշակմանը:
3. Ռազմավարությունում հայեցակարգով նախատեսված տեղեկություններից բացի՝
 - հստակ սահմանվում է ռազմավարության հիմնական նպատակը,
 - հստակ մատնանշվում են իրականացվելիք գործողությունները (այդ թվում՝ ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնցում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ, ենթակառուցվածքային փոփոխությունների կատարումը, անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը (անհրաժեշտության դեպքում) և այլն),
 - ռազմավարության շահառուների (շահառու խմբերի) անվանումները/անունները և վերջիններիս հետ քննարկումների արդյունքները,
 - նկարագրվում են մատուցվող ծառայությունները (առկայության դեպքում),
 - ռազմավարության կատարողականի ցուցանիշները,
 - ռազմավարության նախատեսված միջոցառումների ղեկավարման, մոնիտորինգի և դրանց հաշվարկների իրականացման ընթացակարգերը,
 - ռազմավարությամբ իրականացվող միջոցառումների փուլերի հստակ ժամկետները, կոնկրետ փուլի ավարտին ակնկալվող իրավիճակը և արդյունքը,
 - ռազմավարության իրականացման ռիսկերը:
4. Ռազմավարության գնահատման չափանիշներն են՝
 - տնտեսական ոլորտում առկա մրցակցությունը.
 - տնտեսական վիճակը.
 - տեխնիկական հնարավորությունները.
 - մարդկային ռեսուրսները.
 - իրավական խնդիրները,
 - սոցիալական խնդիրները,
 - կազմակերպչական խնդիրները,
 - կարգավորման ազդեցությունը:
5. Ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով մշակվում է ռազմավարությամբ նախատեսվող միջոցառումների ծրագիր:
6. Սույն Ուղեցուցով սահմանված հայեցակարգերի, ռազմավարությունների և ծրագրերի նախագծերը նախքան դրանք ընդունող մարմնի հաստատմանը ներկայացնելը մշակող մարմնի կողմից ուղարկվում են շահագրգիռ պետական մարմիններին՝ կարծիք ստանալու նպատակով:
7. Հայեցակարգերի, ռազմավարությունների և ծրագրերի նախագծերը մշակող մարմինը պետք է կազմակերպի հայեցակարգերի, ռազմավարությունների և ծրագրերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ, որի նպատակը դրանց մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա հայեցակարգերի, ռազմավարությունների և ծրագրերի նախագծերի անհրաժեշտ լրամշակման աշխատանքների իրականացումը:



8. Հայեցակարգերի, ռազմավարությունների և ծրագրերի նախագծերը շրջանառության մեջ դնելու և հանրային քննարկումներն իրականացնելու իրավահարաբերությունների վրա տարածվում են «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N296-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշմամբ սահմանված կանոնները:



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒՄ

ՓՄՁ-ների տեղակայման վայրը	ՓՄՁ-ներն ըստ չափի			Ընդամենը
	Գերփոքր ձեռնարկություն	Փոքր ձեռնարկություն	Միջին ձեռնարկություն	
Երևան	37,605	3,591	996	42,192
Արագածոտն	2,011	117	13	2,141
Արարատ	4,025	211	14	4,250
Արմավիր	5,096	280	19	5,395
Գեղարքունիք	2,989	143	15	3,147
Լոռի	4,464	228	29	4,721
Կոտայք	5,930	391	54	6,375
Շիրակ	3,529	204	31	3,764
Սյունիք	3,347	198	25	3,570
Վայոց ձոր	1,222	85	12	1,319
Տավուշ	2,743	116	14	2,873
Ընդամենը	72,961	5,564	1,222	79,747

Աղյուսակ 13. ՓՄՁ-ների թիվն ըստ չափերի և տեղակայման վայրի 2017 թվականի դրությամբ

ՓՄՁ-ների տեղակայման վայրը	Մշտական բնակչության թիվը (1 000 մարդ) ⁸⁶	Ընդամենը ՓՄՁ-ներ	1000 բնակչի հաշվով ՓՄՁ-ների թիվը
Երևան	1075.8	42,192	39
Արագածոտն	128.5	2,141	17
Արարատ	258.5	4,250	16
Արմավիր	265.8	5,395	20
Գեղարքունիք	230.7	3,147	14
Լոռի	221.1	4,721	21
Կոտայք	252.8	6,375	25
Շիրակ	239.3	3,764	16
Սյունիք	138.9	3,570	26
Վայոց ձոր	50.3	1,319	26
Տավուշ	124.5	2,873	23
Ընդամենը/միջինում	2986.2	79,747	27

Աղյուսակ 14. 1000 բնակչի հաշվով ՓՄՁ-ների թիվն ըստ տեղակայման վայրի

⁸⁶ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին



ԵՐԵՎԱՆ	Ընդամենը ՓՄՁ՝ 42192	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	22,334	53%
Մշակող արդյունաբերություն	3,365	8%
Տեղեկատվություն եվ կապ	1,660	4%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	1,567	4%
Ճինարարություն	799	2%
ԱՐԱԳԱՃՈՏ	Ընդամենը ՓՄՁ՝ 2141	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	1,360	64%
Մշակող արդյունաբերություն	214	10%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	85	4%
ԱՐԱՐԱՏ	Ընդամենը ՓՄՁ՝ 4250	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	2898	68%
Մշակող արդյունաբերություն	348	8%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	146	3%
ԱՐՄԱՎԻՐ	Ընդամենը ՓՄՁ՝ 5395	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	3,601	67%
Մշակող արդյունաբերություն	567	11%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	177	3%
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	Ընդամենը ՓՄՁ՝ 3147	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	2036	65%
Մշակող արդյունաբերություն	245	8%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	185	6%
ԼՈՌԻ	Ընդամենը ՓՄՁ՝ 4721	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	3083	65%
Մշակող արդյունաբերություն	394	8%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	177	4%
ԿՈՏԱՅՔ	Ընդամենը ՓՄՁ՝ 6375	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	3912	61%
Մշակող արդյունաբերություն	649	10%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	317	5%
ՇԻՐԱԿ	Ընդամենը ՓՄՁ՝ 3764	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	2522	67%
Մշակող արդյունաբերություն	279	7%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	116	3%
ՍՅՈՒՆԻՔ	Ընդամենը ՓՄՁ՝ 3570	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	2202	62%
Մշակող արդյունաբերություն	310	9%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	247	7%
ՎԱՅՈՑ ՁՈՐ	Ընդամենը ՓՄՁ՝ 1319	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	796	60%
Մշակող արդյունաբերություն	125	9%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	111	8%
ՏԱՎՈՒՇ	Ընդամենը ՓՄՁ՝ 2873	
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	1967	68%
Մշակող արդյունաբերություն	247	9%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	156	5%
Աղյուսակ 15. ՓՄՁ գործության առավել մեծ կշիռ զբաղեցնող ոլորտներն ըստ ք. Երևանի և մարզերի		



ՓՄՁ-ների տեղակայման վայրը	Աշխատողների թիվ ըստ ՓՄՁ-ների չափի			Ընդամենը
	Գերփոքր ձեռնարկություն	Փոքր ձեռնարկություն	Միջին ձեռնարկություն	
Երևան	53,060	58612	66,879	178,551
Արագածոտն	2,056	1,966	1,158	5,180
Արարատ	3,518	3,370	1,108	7,996
Արմավիր	4,945	4,022	1,750	10,717
Գեղարքունիք	2,837	2,284	1,382	6,503
Լոռի	5,000	3,591	2,851	11,442
Կոտայք	6,461	7,014	4,619	18,094
Շիրակ	4,091	3,340	2,856	10,287
Սյունիք	3,271	2,989	1,891	8,151
Վայոց ձոր	1,213	1,421	1,033	3,667
Տավուշ	2,142	1,733	1,218	5,093
Ընդամենը	88,594	90,342	86,745	265,681

Աղյուսակ 16. ՓՄՁ-ների թիվն ըստ չափերի և տեղակայման վայրի 2017 թվականի դրությամբ



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ (առցանց հարցումներ)

ՓՄՁ ձեռնարկատերերի տարիք	Պատասխանների քանակ	Մասնաբաժին
20-ից 25 տարեկան	29	9%
26-ից 30 տարեկան	50	15%
31-ից 40 տարեկան	114	35%
41-ից 50 տարեկան	76	23%
51-ից 65 տարեկան	51	16%
66 տարեկան և ավելի	6	2%
Ընդամենը	326	100%

Աղյուսակ 17. Հարցմանը մասնակցած ՓՄՁ վարողների տարիքային կազմը

ՓՄՁ ձեռնարկատերերի կրթական մակարդակ	Պատասխանների քանակ	Մասնաբաժին
Հիմնական կրթություն	3	1%
Միջնակարգ կրթություն	23	7%
Նախնական մասնագիտական	10	3%
Միջին մասնագիտական	59	18%
Բարձրագույն մասնագիտական	213	64%
Հետբուհական մասնագիտական	23	7%
Ընդամենը	331	100%

Աղյուսակ 18. Հարցմանը մասնակցած ՓՄՁ վարողների կրթական մակարդակ

ՓՄՁ-ների հիմնադրամ ժամանակահատված	Պատասխանների քանակ	Մասնաբաժին
մինչ 2005 թվականը	62	19%
2005-2010 թթ. ընթացքում	64	19%
2010 -2015 թթ. ընթացքում	97	29%
2016-2017թթ. ընթացքում	39	12%
2017-2018թթ. ընթացքում	69	21%

Աղյուսակ 19. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ հիմնադրման ժամանակահատվածի

Տարեկան շրջանառություն	Պատասխանների քանակ	Մասնաբաժին
Մինչև 100 մլն ՀՀ դրամ	284	86%
100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ	40	12%
500 մլն-ից 1 500 մլն ՀՀ դրամ	7	2%
Ընդամենը	331	100%

Աղյուսակ 20. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ տարեկան շրջանառության ծավալի

Աշխատողների թվաքանակ	Պատասխանների քանակ	Մասնաբաժին
մինչև 5 աշխատող	221	67%
6-10 աշխատող	60	18%
11-50 աշխատող	42	13%
51-ից 250 աշխատող	8	2%
Ընդամենը	331	100%


Աղյուսակ 21. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ աշխատողների թվաքանակի



Տարեկան շրջանառություն	Աշխատողների թվաքանակ			
	մինչև 5 աշխատող	6-10 աշխատող	11-50 աշխատող	51-ից 250 աշխատող
Մինչև 100 մլն ՀՀ դրամ	208	50	22	4
100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ	11	9	18	2
500 մլն-ից 1 500 մլն ՀՀ դրամ	2	1	2	2
Ընդամենը	221	60	42	8

Աղյուսակ 22. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ աշխատողների թվաքանակի և տարեկան շրջանառության ծավալի

Գրաֆիկ 23. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ տեղակայման վայրի



ՓՄՁ-ների տեղակայման վայրը	Մինչև 100 մլն ՀՀ դրամ	100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ	500 մլն-ից 1 500 մլն ՀՀ դրամ
Բ. Երևան	75	14	2
Արագածոտնի մարզ	3		
Արարատի մարզ	4		1
Արմավիրի մարզ	4		
Գեղարքունիքի մարզ	28		
Կոտայքի մարզ	30	1	1
Շիրակի մարզ	24	14	1
Լոռվա մարզ	26		
Սյունիքի մարզ	9	1	
Վայոց Ձորի մարզ	5		
Տավուշի մարզ	36	2	1

Աղյուսակ 23. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ տեղակայման վայրի և տարեկան շրջանառության ծավալի



ՓՄՁ-ն ըստ գործունեության ոլորտների	Պատասխանների քանակ	Մասնաբաժին
Մեծածախ եվ մանրածախ առևտուր. ավտոմեքենաների եվ մոտոցիկլների նորոգում	111	33.84%
Մշակող արդյունաբերություն պարենային ապրանքների գծով	32	9.67%
Կացության եվ հանրային սննդի կազմակերպում	29	8.76%
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	28	8.46%
Մշակող արդյունաբերություն ոչ պարենային ապրանքների գծով	27	8.16%
Այլ	25	7.55%
Առողջապահություն եվ բնակչության սոցիալական սպասարկում	18	5.44%
Տեղեկատվություն եվ կապ	17	5.14%
Մշակույթ, զվարճություններ եվ հանգիստ	14	4.23%
Կրթություն	11	3.32%
Ծինարարություն	10	3.02%
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3	0.91%
Փոխադրումներ եվ պահեստային տնտեսություն	2	0.60%
Ընդամենը	331	100.00%

Աղյուսակ 24. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների թիվն ըստ գործունեության ոլորտների

Գրաֆիկ 24. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ները վարողների ընտանեկան եկամուտների մակարդակը

